Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

1634

839.82
12-15

Հրատարակութիւն Կ. Հ. Հէջուբեանի

839.82-2
Ի-15

ՀԵՆՐԻԿ ԻԲՍԷՆ

ԴՕՔՏՕՐ ՇՏՕԿՄԱՆ

կամ

ԺՈՂՈՎՐԴԻ ԹՇՆԱՄԻՆ

Դրամա 5 գործողութեամբ.

Թարգմանեց

Ս. ՀԱԽՈՒՄԵԱՆ

2003

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ „ԱՐՕՐ" Տ. ՆԱԶԱՐԵԱՆԻ
1891

2011

366

Բեմի վրայ ներկայացնել անպայման թոյլատրուած է. տես Правительств. Вѣстн. 1891 **թ.** № 120.

Дозв. ценз. Тифлисъ, 17-го декабря 1891 года.

Тип. Арорь Т. Я. Назарьянъ. Барятинская ули ца.

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԴՕՔՏՕՐ ՇՏՕԿՄԱՆ—ծովային լողարանների վրայ գլխաւոր բժիշկը։

ՏԻԿԻՆ ՇՏՕԿՄԱՆ—Նրա կինը։

ՊԵՏՐԱ—Նրանց դուստրը, վարժուհի։

ԷՅԼԻՖ) Նրանց որդիքը, 13 տարեկան
ՄՈՐՏԷՆ) երեխայք։

ՊԷՏԷՐ ՇՏՕԿՄԱՆ—Բժիշկ Շտօկմանի մեծ եղբայրը, քաղաքագլուխ, ծովային լողարանի յանձնաժողովի նախագահ եւ այլն։

ՄՈՐՏԷՆ ԿԻԼ—Կաշուի գործարանատէր, տիկին Շտօկմանի հօրեհայրը։

ՀՕՎՍՏԱԴ—Հրատարակիչ **„Ժողովրդական Համբաւաբեր“** *լրագրի։*

ԲԻԼԼԻՆԳ — **„Ժողովրդական Համբաւաբերի“** *աշխատակից։*

ԳՕՐՍՏԷՐ—Նաւապետ։

ԱՍԼԱՔՍԷՆ—Տպարանատէր։

ՔԱՂԱՔԱՑԻՔ—Ժողովում մասնակցող զանազան դասակարգերի պատկանող անձինք. մի քանի անձնաւորութիւններ. թերուսներ։ Դրաման պատահում է քաղաքում, Նորվեգիայի հարաւային ափում։

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Երեկոյ է։ Դօքտոր Շտօկմանի տան հիւրասենեակը, հասարակ, բայց մաքուր և կոկիկ սարքած. Աջ կողմը երկու դռներ. Նրանցից մէկը տանում է Դօքտորի առանձնասենեակը, միւսը նախասենեակը։ Հակառակ կողմից՝ նախասենեակի դռան դէմ ու դէմ մի դուռ որը տանում է դէպի միւս սենեակները։ Նոյն այդ կողմը վառարան։ Բեմի առաջին աւելի մօտ—դիվան։ Նրա վրայ պատից կախուած է հայելի, իսկ առաջը սեղան, սփռոցով ծածկած։ Սեղանի վրայ վառած է լամպա, վրան լուսամփոփ։ Ետևի պատի կողմից բաց դուռը տանում է դէպի սեղանատուն, որտեղ երևում է սեղանի վրան ընթրիք պատրաստած և լամպան վառած։

Սեղանի մօտ նստած է ԲԻԼԼԻՆԳ, ՏԻԿ. ՇՏՕԿՄԱՆ *կանգնած է սեղանի մօտ և նրան տալիս է ափսէ մէջը մի մեծ կտոր ռօստբիֆ։ Ճաշի սեղանի վրայի միւս տեղերը բռնուած չեն. սեղանի վրայ անկարգութիւն է։*

ՏԻԿ. ՇՏՕԿՄԱՆ. Տեսնո՞ւմ էք—դուք ամբողջ մի ժամ ուշացել էք, Բիլլինգ, և պէտք է հաշտուէք սառած ռօստբիֆի հետ։

ԲԻԼԼԻՆԳ։ (Ռօստբիֆի կտորը կուլ տալով) Հիանալի ռօստբիֆ է։

ՏԻԿ. ՇՏՕԿՄԱՆ. Դուք լաւ գիտէք. Ստոկմանը պահանջում է, որ ամեն բան ժամանակին վրայ հրամցնենք որոշ ժամին։

ԲԻԼ. Ճշմարիտն ասած այդ ինձ համար միեւնոյն է. ինչպէս ախորժակս աւելի լաւանում է, երբ նստում եմ մենակ և ուտում, որքան քէֆս ուզում է։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Աւելի լաւ, եթէ այդպէս է... *(Ականջ դնելով դէպի նախասենեակի կողմը)* Կարծես թէ Հօֆստադն է եկողը։

ԲԻԼ. Շատ կարելի է։

(Մտնում է քաղաքագլուխ Ստոկմանը վերարկուով, պաշտօնական գլխարկով, ոսկեայ ժապաւէնով, ձեռին փայտ)։

ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ. Բարի երեկոյ, հարսս։

ՏԻԿ. ՇՏՕԿ. *(Մտնելով հիւրասենեակը)* Ախ, այդ դո՛ւք էք։ Բարի երեկոյ։ Ինչ լաւ է որ ձեր մտքից անցել է մեզ մօտ գալ։

ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ. Այստեղով մօտիկ անցնում էի և... *(Նայելով սեղանատան կողմը)* Վա՛, ինչպէս երեւում է ձեզ մօտ հիւրեր կան։

ՏԻԿ. ՇՏՕԿ. *(Թեթեւ շփոթուած)* Օ՜, ոչ, այնպէս պատահմամբ մեր մի ծանօթն է եկել։ *(Արագ)* Չէ՞ք կամենում արդեօք մի բան ուտել։

ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ. Օ՜, ո՛չ, շատ շնորհակալ եմ։ Տէր Աստուած, երեկոյեան տաքացած միս ուտել. այդ բոլորովին իմ ստամոքսի բանը չէ։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Է՜, լա՛ւ, միանգամ ուտելը հաշիւ չէ...։

ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ. Ո՛չ, ո՛չ, շատ շնորհակալ եմ։ Ես ինձ սովորեցրել եմ չայի և իւղով հացի։ Այդ շատ աւելի օգտակար է և ընդհանրապէս աւելի էժան է նստում։

ՏԻԿ. ՇՏՕԿ. *(Ժպտալով)* Դուք էլ մի կարծէք թէ ես ու Թոմասը տրամադրուած ենք շռայլութեան։

ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ. Դուք, ո՛չ, հարսս։ Ամենևին մտքիցս չեմ անցկացնում ձեզ նախատել։ *(Ցոյց տալով բժշկի առանձնասենեակը)* Իսկ նա տանը չէ՞։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Ոչ, նա դուրս եկաւ ընթրիքից յետոյ մի քիչ անցնելու—երեխաների հետ։

ՔԱՂԱՔԱԳԼ. Միթէ նա այդ օգտակար է համարում։ *(Ականջ դնելով)* Բայց ահա և նա ինքը։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Ոչ, այդ նա չէ *(Դուռը ծեծում են)* Մտէ՛ք։ *(Հօֆստադը մտնում է նախասենեակից)* Ա՜ա՜, պարոն Հօֆստադ...։

ՀՕՖՍՏԱԴ. Ներեցէք խնդրեմ. ինձ տպարանում ուշացրին։ Բարեւ ձեզ, պարոն Ստոկման։

ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ. *(Գլուխ տալով բաւական սառն)* Ընդունեցէք յարգանքս, պարոն Հօֆստադ։ Դուք, երեւի, գործո՞վ էք եկել այստեղ։

ՀՕՖՍՏԱԴ. Այո, մասամբ, լրագրի առիթով։

ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ. Ես այդպէս էլ ենթադրում էի։ Կարծեմ իմ եղբայրս „Ժողովրդական Համբաւաբերի“ եռանդուն աշխատակիցն է։

ՀՕՖՍՏԱԴ. Այո, նա մեծ ուրախութեամբ է դիմում „ծողովրդական համբաւաբերին“, երբ կամենում է որ և է մասնագիտական խնդրի մասին կարծիք յայտնել։

ՏԻԿ. ՇՏՕԿ. (Դիմելով Հօֆստադին) Զէք բարեհաճիլ… (Ցոյց տալով սեղանատունը)։

ՔԱՂԱՔԱՊԼ. Տէրը մի արասցէ որ ես նախատեմ եղբօրս այն մասին, որ նա գրում է այն տեսակ ընթերցողների համար, որոնց նա ամենից աւելի է համակրում։ Եւ իմ կողմից, անձնապէս, պ. Հօֆստադ, ես ձեր լրագրին խէթ աչքով նայելու ոչինչ պատճառ չունեմ։

ՀՕՖՍ. Կարծում եմ որ չպէտք է ունենաք։

ՔԱՂԱՔԱՊԼ. Ընդհանրապէս մեր քաղաքացիք ուրիշներից աւելի համբերատար են դէպի միմեանց։ Հիանալի հասարակական ոգի կայ այստեղ։ Բանը նրանումն է որ մեզ ամենքիս միացնում է մի մեծ հասարակական շահ, մի շահ, որը հաւասար կերպով վերաբերում է բոլոր ողջամիտ քաղաքացիներին։

ՀՕՖՍ. Ծովային լողարանների մասին էք ասում։

ՔԱՂԱՔԱՊԼ. Այո, մեր նոր հոյակապ ծովային լողարանների մասին։ Դուք կըտեսնէք պարոն Հօֆստադ։ Քաղաքի բոլոր կեանքը պէտք է կենտրոնանայ այդ լողարանների շուրջը. այդ բանում կասկած չկայ։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Թոմասն էլ միևնոյն է ասում։

ՔԱՂԱՔԱՊԼ. Ի՞նչ զարմանալի կերպով բարձրացաւ մեր քաղաքը, նոյն իսկ վերջին մի քանի տարուան ընթացքում։ Ժողովրդի մէջ շարունակ պտըտուող փողերն իրենց հետ շարժումն ու կեանք մտցրին։ Օրէց օր աւելանում է տների գինը և արդիւնքների արժէքը։

ՀՕՖՍՏ. Եւ օրէցօր աշխատանքն աւելի հեշտանում է։

ՔԱՂԱՔԱՊԼ. Ճիշտ է։ Հարուստ դասակարգի վճարած հարկերն զգալի կերպով թեթևացել են և նրանք դեռ էլ աւելի կըպակսեն, եթէ միայն յաջող ամառ լինի, եթէ շատ լինեն այցելուներ—հիւանդներ, որոնք կըբարձրացնեն մեր լողարանների անունը։

ՀՕՖՍՏ. Կարծեմ, այդ մասին մեծ յոյսեր կան։

ՔԱՂԱՔԱՊԼ. Այո, գործը յաջող ընթացք է ստանում. ամենայն օր բնակարանների մասին հարցումներ են ստացւում, նամակներ…։

ՀՕՖՍՏ. Ուրեմն դօքտորի յօդուածի լոյս տեսնելը շատ ի դէպ կլինի։

ՔԱՂԱՔԱՊԼ. Ի՞նչ, նա էլի գրել է։

ՀՕՖՍՏ. Այդ յօդուածը գրել է դեռ ամառը. այդտեղ նա գովում է լողարանները և նկարագրում է քաղաքի առողջապահական հիանալի պայմանները։ Բայց այն ժամանակ ես յօդուածը պահեցի, յետաձգեցի։

ՔԱՂԱՔԱԳԼ. Ա՜ ա՛ ա՛. երևի մի փոքր արգելք կար։

ՀՕՓՍՏ. Օ՜, ոչ։ Բայց ես աւելի լաւ համարեցի յօդուածը թողնել մինչև գարուն, երբ ամենքն արդէն սկսում են մտածել ամարանոցի մասին։

ՔԱՂԱՔԱԳԼ. Եւ դուք իրաւունք ունէիք, կատարեալ իրաւունք, պ. Հօֆստադ։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Այո, Թոմասը ոչ մի ջանք չէ խնայում, երբ գործը վերաբերում է մեր լողարաններին։

ՔԱՂԱՔԱԳԼ. Ասենք այդ հասկանալի է, որովհետև ինքն էլ բաժանորդ է, մասն ունի։

ՀՕՓՍՏ. Բացի դրանից՝ նրա շնորհիւ են հիմնուել այդ լողարանները։

ՔԱՂԱՔԱԳԼ. Դուք կարծո՞ւմ էք։ Ես գիտեմ, այդ կարծիքի ուրիշ մարդիկներ էլ կան. սակայն ինձ թւում է, որ այդ ձեռնարկութեան մէջ ես էլ մի քիչ մասն եմ ունեցել։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Ի հարկէ։ Թոմասն էլ միշտ միևնոյն է ասում։

ՀՕՓՍՏ. Բայց ո՞վ է ժխտում այդ, պ. Շտօկման, դուք գործին ուղղութիւն տուիք և գործնական հիմքի վրայ դրիք. այդ արդէն ամենքին յայտնի է։ Ես միայն ցանկանում էի ասել, որ գործի սկզբնական իդէան պատկանում է դօքտորին։

ՔԱՂԱՔԱԳԼ. Այո, իմ եղբայրս ժամանակին շատ իդէաներ ունէր—դժբախտաբար... Բայց երբ գալիս է այդ գաղափարներն իրագործելու ժամանակը

պ. Հօֆստադ—այն դէպքում պահանջվում են ուրիշ տեսակ բովից դուրս եկած մարդիկ։ Ես չէի սպասում, որ այստեղ էլ...

ՏԻԿ. ՇՏՕԿ. Բայց սիրելի փեսաս...

ՀՕՓՍՏ. Հաւատացնում եմ ձեզ պարոն Շտօկման...

ՏԻԿ. ՇՏՕԿ. Գոնէ մի բան ուտէիք, պ. Հօֆստադ, ամուսինս այս րոպէին կըվերադառնայ։

ՀՕՓՍՏԱԴ. Շնորհակալ եմ, բայց մի քիչ, կարելի է։ *(Գնում է սեղանատուն)*

ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ *(Կիսաձայն)* Զարմանալի է. միշտ ստորին ծագումն ունեցող մարդիկ աչքի են ընկնում իրենց անտակտութիւնով։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Բայց այդ բանն ինչո՞ւ է ձեր սրտին դիպչում։ Միթէ դուք Թոմասի հետ երկուսով չէք կարողանում եղբայրաբար գոհանալ, որ այդ գործի պատիւը երկուսիդ է պատկանում։

ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ. Կարծում եմ, որ այդպէս էլ պէտք է լինէր. բայց կան մարդիկ, որոնք ամբողջապէս իրենց են ուզում վերագրել այդ պատիւը։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Այդ ի՞նչ միտք է։ Դուք երկուսդ էլ այնպէս լաւ վարվում էք միմեանց հետ... *(Ականջ դնելով)* Բայց ահա, կարծեմ, նա էլ գալիս է։ *(Գնում է և նախասենեակի դուռը բանում)*

ԴՕՔՏՕՐ. *(Դրան ետևից ծիծաղում է և բարձրաձայն խօսում)* Ահա քեզ նոր հիւր, Կատերինա։ Ուրախ ես, հա՞։ Խնդրեմ, նաւապետ Գօրս-

տէր, կախեցէք ձեր վերարկուն մեխից։ Ի՞նչ. դուք առանց վերարկո՞ւ էք։ Երևակայիր քեզ, Կատերինա, ես սրան փողոցում բռնեցի և հազիւ համոզել եմ մտնել մեզ մօտ։ *(Նաւապետ Գօրստէր մտնում է բարևելով Տիկին Շտօկմանին. բժիշկը կանգնում է դրան շէմքի մօտ)*։ Դէ, մտէք, երեխայք։ Սրանք էլի քաղցածացել են։ Խնդրեմ, նաւապետ, շնորհ արէք. դուք պէտք է մեր ռոստբիֆի համը տեսնէք... *(Տանում է Գօրստէրին դէպի սեղանատուն. Էյլիֆ և Մօրտէն նրանց հետևում են)*։

Տիկ. Շտօկ. Թոմաս, միթէ չես տեսնում...

ԴՕՔՏՕՐ. (Շուռ գալով շէմքի վրայ) Վա՜հ, այդ դո՞ւ ես Պետէր *(մօտենում է և ձեռը մեկնում)*։ Շնորհակալ եմ որ մեզ միտդ ես բերել։

ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ. Դժբախտաբար ես պէտք է իսկոյն գնամ։

ԴՕՔՏ. Դատարկ բան է։ Այս րոպէին մեզ գրօգ կտան խմելու. Հօ չե՞ս մոռացել, Կատերինա։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Ի հարկէ, ոչ. ջուրն արդէն եփում է։ *(Գնում է սեղանատուն)*։

ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ. Ինչպէս, *գրօգ* էլ...

ԴՕՔՏՕՐ. Այո, այո, դէ եկ, նստիր. ընկերութիւնից յետ չմնանք, խմենք։

ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ. Շնորհակալ եմ, ես երբէք չեմ մասնակցում արբեցութեան։

ԴՕՔՏ. Բայց ի՞նչ արբեցողութիւն կայ այստեղ։

ՔԱՂԱՔԱԳԼ. Կարծեմ որ... *(Նայում է դէպի*

սեղանատուն) Զարմանալի է թէ ինչպէս են դրանք այդքան կերակուրներ ուտում։

ԴՕՔՏՕՐ. (Ձեռները միմեանց շփելով) Այո, այո. ճշմարիտ, ուրախալի է, չէ՞, նայել թէ ինչպէս է ուտում այդ երիտասարդութիւնը։ Յաւիտեան քաղցած։ Այդ այդպէս էլ պէտք է լինի։ Նրանք միշտ շատ պէտք է ուտեն, որ աւելի շատ ոյժ հաւաքեն։ Ո՞վ պէտք է պահպանի իր մէջ ապագայ ժամանակների խմորը, եթէ ոչ դրանք, այսպէս չէ՞, Պետէր։

ՔԱՂԱՔԱԳԼ. Թոյլ տուր հարցնել. ի՞նչ է նշանակում „ապագայ ժամանակների խմորը“, ինչպէս որ դու ես ասում։

ԴՕՔՏՕՐ. Այդ մասին հարցրու երիտասարդ սերնդին, երբ րոպէն կհասնի։ Ես և դու ի հարկէ չենք տեսնի այդ ժամանակները։ Մենք երկու հին գօգրաներ ենք. մէկը ես, մէկը դու...։

ՔԱՂԱՔԱԳԼ. Ի՞նչ տարօրինակ ոճեր...։

ԴՕՔՏՕՐ. Օ՜, Պետէր, իմ հանաքների վրայ ուշ մի դարձնիր։ Գիտես—ես այնպիսի հիանալի տրամադրութեան մէջ եմ։ Ես չեմ կարող արտայայտել թէ որքան ուրախ եմ բոլոր այս թարմ, նորաբողբոջ կեանքի մէջ։ Իսկապէս մենք հրաշալի օրերում ենք ապրում. գիտե՞ս։ Կարծես թէ մեր չորս կողմը ամբողջ աշխարհ է ծլում։

ՔԱՂԱՔԱԳԼ. Դու կարծում ես։

ԴՕՔՏՕՐ. Ի հարկէ, այդ բանը դու չես կարող

տեսնել նոյնչափ պարզ, որքան ես եմ տեսնում։ Դու քո ամբողջ կեանքդ անցրել ես աշխարհի ունայնութեան մէջ, իսկ դա բթացնում է տպաւորութիւնների ոյժը. բայց ինձ, որ բոլոր այդ տարիներն անց եմ կացրել հիւսիսի խուլ անկիւններում, գրեթէ առանց մի կենդանի մարդ տեսնելու, առանց կենդանի խօսք լսելու—ինձ այդ բոլորը հիացնում է այնպէս, որ կարծես թէ ես ընկել եմ մեծ մայրաքաղաքի բուն կենտրոնը...։

ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ. Հը՛մ... մայրաքաղաքի...։

ԴՕՔՏ. Օ՛, ես շատ լաւ գիտեմ որ այստեղ խուլ անկիւն է, ուրիշ տեղերի հետ համեմատելով. բայց ապագայի համար այս քաղաքը մեծ առհաւատչեաներ ունի, շատ բաներ ունի, որոնց համար արժէ գործել և աշխատել. իսկ այդ ամենագլխաւորն է. (*Կանչում է*) Կատերինա՛, ի՞նչ եղաւ, նամակ չկա՞ր։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Ոչ, և ոչ մի նամակ։

ԴՕՔՏ. Յետոյ, սիրելի Պէտէր, մեծ նշանակութիւն ունի և միջոցների ապահովութիւնը։ Այդ բանը չէ կարելի չգնահատել երբ ամբողջ տարիներով ապրել ես այնպիսի ռոճկով, որից փորդ երբէք չէր կշտանալ...

ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ. Տէ՛ր Աստուած, այդ ի՞նչ ոճով ես խօսում...։

ԴՕՔՏՕՐ. Ես չափազանցութիւն չեմ անում։ Մենք այնտեղ հեշտութիւնով չէինք ապրում. սա-

կայն այստեղ մենք կարող ենք թագաւորի պէս ապրել։ Այսօր, օրինակ, մենք ճաշին ռոստբիֆ ունէինք և նրանից դեռ երեկոյեան ընթրիքի համար էլ մնացել է։ Չե՞ս ուզում համը տեսնել. գնանք—թէ չես ուտում, գոնէ նայիր, քէֆդ գայ։

ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ. Ոչ, ոչ, շնորհակալ եմ...

ԴՕՔ. Դէ, ուրեմն այստեղ նայիր։ Տեսնո՞ւմ ես—մենք սեղանի համար սփռոց ենք գնել...։

ՔԱՂԱՔԱԳԼ. Այո, այդ ես նկատեցի։

ԴՕՔՏՕՐ. Նոյնպէս և լուսամփոփ լամպի համար։ Տեսնո՞ւմ ես. Կատերինան է սրանց համար փող յետ ձգել։ Սփռոցը և լուսամփոփը սենեակին կոկիկ կերպարանք են տալիս, այնպէս չէ՞, Ա՛յ, մօտեցիր այստեղ։ Ո՛չ, ոչ, այդպէս չէ։ Ահա նայիր այստեղից—ինչ պայծառ և ուրախ լուսաւորութիւն է։ Տեսնո՞ւմ ես, ինչպէս գեղեցկացել է մեր տունը։

ՔԱՂԱՔԱԳԼ. Ի հարկէ, երբ կարողանում ես քեզ այդպիսի շռայլութիւն թոյլ տալ...։

ԴՕՔՏՕՐ. Այո, ի հարկէ, այժմ մենք այդ թոյլ ենք տալիս մեզ։ Կատերինան ասում է որ ես այժմ աշխատում եմ գրեթէ այնքան, որքան որ մենք ծախսում ենք...։

ՔԱՂԱՔԱԳԼ. Այո, գրեթէ...

ԴՕՔՏՕՐ. Բացի դրանից, գիտութեան նուիրուած մարդը կարող է իրեն թոյլ տալ կարգին տան սարք ու կարգ ունենալ։ Կարծեմ որևէ շէրիֆ ինձանից աւելի է ծախսում ամեն տարի։

ՔԱՂԱՔԱԳԼ. Շատ հասկանալի է. շէրիֆը բարձրագոյն վարչութեան անդամ է։

ԴՕՔՏՕՐ. Վերցուր հէնց ո՛ր վաճառականին ուզում ես. Նրանք մեզանից ո՛րքան աւելի են ծախսում...։

ՔԱՂԱՔԱԳԼ. Այդ էլ հասկանալի է, որովհետև ձեր գիրքերը զանազան են...։

ԴՕՔՏՕՐ. Բայց խսկապէս, Պէտէր, ես ոչինչ ի զուր չեմ ծախսում։ Սակայն ես չեմ կարող ինձ զրկել հասարակութեան մէջ ապրելու զուարճութիւնից։ Հասարակութիւնն, ընկերութիւնն ինձ համար անհրաժեշտ է։ Այնքան երկար ժամանակ միայնութեան մէջ ապրելով, ես կենսական պահանջ եմ զգում իմ չորս կողմս տեսնել—ուրախ, զուարթ, ազատասէր և աշխատասէր երիտասարդութիւն. այսպէս են այս բոլոր երիտասարդ մարդիկ, որոնց դու տեսնում ես այստեղ։ Ես կցանկանայի որ դու աւելի մօտ ճանաչէիր Հօֆստադին։

ՔԱՂԱՔԱԳԼ. Իրաւ, ի դէպ, Հօֆստադի մասին։ Նա ասում էր թէ մտադիր է շուտով քո մի յօդուածդ էլ տպագրել։

ԴՕՔՏՕՐ. Իմ յօդուա՞ծս։

ՔԱՂԱՔԱԳԼ. Այո, լողարաններին վերաբերեալ։ Այն յօդուածը, որը դու անցեալ ձմեռ գրել ես։

ԴՕՔՏՕՐ. Այո, այո՛։ Բայց ես չեմ ցանկանում, որ այդ յօդուածն այժմ տպագրուի։

ՔԱՂԱՔԱԳԼ. Ինչո՞ւ։ Կարծեմ որ հէնց այժմ

Հ.Ս.Ս.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI· 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

է ամենայարմար ժամանակը։

ԴՕՔՏՕՐ. Շատ կարելի է. սովորական հանգամանքներում։ *(Սենեակում յետ ու առաջ ման է գալիս)*։

ՔԱՂԱՔԱԳԼ. *(Աչքով հետևում է նրան)* Բայց ի՞նչ մի առանձին բան կայ այժմեան հանգամանքների մէջ։

ԴՕՔՏՕՐ. *(Կանգ առնելով)* Պէտէր, ես չեմ կարող այժմ ասել քեզ այդ. յամենայն դէպս, ո՛չ այս երեկոյ։ Ներկայ հանգամանքներում շատ բան կարող է տարօրինակ երևալ։ Մի կողմից էլ կարելի է ըսկապէս ոչինչ չկայ։ Շատ հաւանական է, որ այդ բոլորը միայն իմ երևակայութիւնս է։

ՔԱՂԱՔԱԳԼ. Դու մութն ես խօսում։ Մի՞թէ նոր բան կայ, այնպիսի նոր բան, որը պէտք է ծածկել ինձնից։ Ես ենթադրում եմ, որ ինչպէս ծովային լողարանների յանձնաժողովի նախագահ...

ԴՕՔՏՕՐ. Իսկ ես ենթադրում եմ, որ ինչպէս...։ Բայց թողնենք այս խօսակցութիւնը. մեծ մեծ չխօսենք, Պէտէր։

ՔԱՂԱՔԱԳԼ. Աստուած չանէ։ Ես սովորութիւն չունիմ „մեծ մեծ խօսելու“, ինչպէս դու ես ասում։ Բայց ես պատրաստ եմ հսկել, որ ամեն բան օրինական կարգով ընթանայ, վարչական իշխանութիւնների միջոցով։ Ես չեմ կարող մասնակցել ծածուկ և անուղղակի գործողութիւնների մէջ։

ԴՕՔՏՕՐ. Ի՞նչպէս, այդ ես եմ ծածուկ և անուղղակի գործողութիւնների դիմում...

ՔԱՂԱՔԱՊԼ. Յամենայն դէպս՝ դու ի բնէ ինքնակամ գործելու ցանկութիւն ունես. իսկ այդ բանը թոյլ տալ կարգին կազմակերպուած համայնքի մէջ—անկարելի է։ Անհատական անձնաւորութիւնը պէտք է հպատակուի հասարակութեան, կամ աւելի ճիշտն ասելով—այն իրաւատէր անձինքներին, որոնց վրայ պարտականութիւն է դրած հսկել հասարակական բարեկեցութեան վրայ։

ԴՕՔՏՕՐ. Ենթադրենք թէ այդպէս լինի։ Բայց... փի՜է... քո ասածդ ի՞նչ վերաբերութիւն ունի դէպի ինձ։

ՔԱՂԱՔԱՊԼ. Բանն էլ հէնց դրանում է, իմ սիրելի Թոմաս, որ դու երբէք այդ չես հասկանալ։ Բայց զգուշացի՛ր. վաղ թէ ուշ, դու դրա վընասը պէտք է քաշես։ Իմ պարտքս է քեզ նախազգուշացնել։ Մնաս բարով։

ԴՕՔՏՕՐ. Բայց դու խելքդ բոլորովին կորցրե՞լ ես, ի՞նչ է։ Դու սաստիկ սխալւում ես...

ՔԱՂԱՔԱՊԼ. Ես, առհասարակ, շատ հազիւ եմ սխալւում։ Միևնոյն ժամանակ ես քեզ կխնդրէի վերջ տալ... *(Գլուխ է տալիս դէպի սեղանատան կողմը)*։ Մնաք բարով, հարսս, մնաք բարով, պարոններ *(Դուրս է գնում)*։

ՏԻԿ. ՇՏՕԿ. *(Մտնելով սեղանատուն)* Գնա՞ց։

ԴՕՔՏ. Այո՛, և շատ մաղձոտ տրամադրութեան մէջ։

ՏԻԿ. ՇՏՕԿ- Այդ ի՞նչ է նշանակում, սիրելի Թոմաս, դու էլի ի՞նչ բաներ ասացիր նրան։

ԴՕՔՏ. Բոլորովին ոչինչ։ Նա հօ չէ կարող ինձնից պահանջել, որ ես ամեն բանի մէջ հաշիւ տամ նրան... ժամանակից առաջ։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Ի՞նչ հաշուի մասին ես խօսում։

ԴՕՔՏ. Հը՜մ. այդ մասին ինձ հարցուփորձ մի անիլ, Կատերինա։ Ի՛նչ տարօրինակ բան է, որ նամակ չկայ։ *(Հօֆստադ, Բիլլինգ եւ Գօրստէր վեր են կացել սեղանից եւ մտնում են հիւրասենեակը, Էյլիֆի եւ Մօրտէնի հետ միասին)*։

ԲԻԼ. *(Ձգձգուելով)* Ո՜ւֆ. գլուխս մեռնի թէ սուտ ասեմ. մարդ իրան բոլորովին նորոգուած է զգում, այսպիսի մի քէֆից յետոյ։

ՀՕՖՍ. Իսկ քաղաքագլխի քէֆն այսօր վատ է երևում։

ԴՕՔՏՕՐ. Բոլոր պատճառն ստամոքսիցն է. շատ վատ է մարսում։

ՀՕՖՍ. Բայց նրա համար ամենադժուար մարսելի կերակուրն է „ժողովրդական համբաւաբերի“ տողերը։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Բայց ինձ թւաց թէ դուք նրա հետ շատ բարեկամաբար էիք խօսում։

ՀՕՖՍ. Օ, այո՛, ի հարկէ. մեր մէջ այդ միայն ժամանակաւոր զինադադար է։

ԲԻԼԼԻՆԳ. Իսկ և իսկ։ Այդ բառը շատ լաւ որոշում է երկու կողմերի յարաբերութիւնները։

ԴՕՔՏ. Պէտք չէ մոռանալ, որ Պէտէրը խեղճը մենակ է, ամուրի է։ Նա ընտանեկան մխիթարութիւն չունի. միայն ծառայութիւն, մի միակ այդ ծառայութիւնն է որ կայ։ Եւ յետոյ այն չայը, որ ամեն օր նա կուլ է տալիս։ Բայց, դէհ, երեխայք, աթոռներ շարեցէք սեղանի շուրջը։ Կատերինա, ինչ եղաւ Գրօգը, պատրաստ է։

ՏԻԿ. ՇՏՕԿ. *(Ուղղուելով դէպի սեղանատուն)* Այս րոպէին բերեմ։

ԴՕՔՏ. Իսկ դուք նաւապետ Գօրստէր, նըստեցէք այստեղ, ինձ մօտ, դիվանի վրայ...։ Դուք այնպիսի հազուագիւտ հիւր էք որ... Պարոններ, նստեցէք։

(Տղամարդիկ նստում են սեղանի շուրջը. Տիկ. Շտօկ. բերում է չայաման, բաժակներ, գրաֆիններ եւ այլն։)

ՏԻԿ. ՇՏՕԿ. Ահա և ամեն բան պատրաստ է։ Ահա ռօմ, ահա կօնեակ և օղի։ Անուշ արէք խընդրեմ։

ԴՕՔՏ. *(Վերցնում է բաժակը)* Սկսենք. *(Այդ միջոցին Տիկ. Շտօկ. խառնում է գրօգը)* Այժմ սիգարների ժամանակն էլ է։ Էյլիֆ, դու երևի գիտես որտեղ է սիգարների արկղիկը. իսկ դու Մօրտէն իմ չիբուխս բեր։ *(Երեխայք գնում են դէպի աջակողմեան սենեակը)*։ Ես կասկածում եմ որ Էյլիֆը երբեմն-երբեմն ծածուկ սիգար է ծխում. բայց ես այնպէս եմ ձևացնում, իբր թէ չեմ նկա-

տում։ *(Կանչում է)*. Ո՞ւր մնաց չիբուխը, Մօրտէն։ Կատերինա, չե՞ս կարող ցոյց տալ նրան, որտեղ եմ թողել չիբուխս։ Ա՜, լաւ, ինքը գտել է։ *(Երեխայք բերում են ծխախոտ եւ չիբուխ)*։ Դէ՛, բարեկամներս, լցրէք բաժակները. գի՞տէք, ես իմ չիբուխից չեմ կարող ձեռք քաշել։ Օ՜, նա ինձ շատ ալէկոծ ճանապարհորդութիւնների ժամանակ ընկեր է եղել, հեռու հիւսիսում։ *(Բաժակը չխկացնում է)*. Ձեր կենացը։ Այո, ճշմարիտը խոստովանել, շատ հաճելի է նստել այս կոկիկ անկիւնում, ազատ քամուց և ցրտից։

ՏԻԿ. ՇՏՕԿ. *(Նստում է եւ գուլպա գործում)* Ձեր նաւը շուտով ճանապարհ կընկնի, պարոն Գօրստէր։

ԳՕՐՍ. Այո, ենթադրում եմ որ միւս շաբաթ կուղևորուի։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Ամե՞րիկա։

ԳՕՐՍՏ. Այո։

ԲԻԼԼԻՆԳ. Բայց եթէ այդպէս լինի, դուք ներկայ չէք լինի քաղաքային խորհրդի նոր ընտրութիւններին։

ԳՕՐՍՏ. Մի՞թէ կրկին ընտրութիւններ կըլինեն։

ԲԻԼԼԻՆԳ. Մի՞թէ դուք այդ չգիտէք։

ԳՕՐՍՏ. Ո՛չ, ես այդ հարցերով չեմ զբաղւում։

ԲԻԼ. Մի՞թէ դուք չէք հետաքրքրւում հասարակական գործերով։

ԳՕՐՍ. Ո՛չ ես այդ բաներում ոչինչ չեմ հասկանում:

ԲԻՂ. Այնու ամենայնիւ. խուրաքանչիւրը մեզանից պարտաւոր է է իր ձայնի իրաւունքից օգուտ քաղել:

ԳՕՐՍՏ. Մինչև անգամ նա, որն այդ գործերում ոչինչ հասկացողութիւն չունի՞:

ԲԻՂ. Ի՞նչպէս թէ ոչինչ չի հասկանում. դրանով ի՞նչ էք ուզում ասել: Հասարակութիւնը նման է նաւի և իւրաքանչիւր մարդ պարտաւոր է վարել նրա ղեկը:

ԳՕՐՍՏ. Կարելի է այդ այդպէս է ցամաքի վրայ. բայց ծովի վրայ այդ անկարելի է:

ՀՕՓՍ. Զարմանալի է թէ ինչպէս ծովային ծառայողների մեծ մասն, ընդհանրապէս քիչ է հետաքրքրվում հասարակական գործերով:

ԲԻՂ. Այո, դա զարմանալի փաստ է:

ԴՕՔՏ. Նաւավարները տեղափոխիկ թռչունների պէս են: Նրանք միշտ տանն են, թէ հարաւում և թէ հիւսիսում: Հէնց այդ պատճառով մենք մնացողներս էլ աւելի եռանդ պէտք է դնենք գործի համար, Հօֆստադ:—Հա, առանձին հետաքրքրական բան կլինի՞ «Ժողովրդական Համբաւաբերի» վաղուան համարում:

ՀՕՓՍ. Տեղական շահերին վերաբերեալ ոչինչ հետաքրքրական բան չկայ, բայց վաղը չէ միւս օր ես մտադիր եմ տպագրել ձեր յօդուածը:

ԴՕՔՏՕՐ. Իմ՞ յօդուածս. Ո՛չ, ո՛չ, դուք պէտք է առ ժամանակ թողնէք այդ յօդուածը:

ՀՕՓՍ. Ճիշտ: Բայց այժմ մենք շատ ազատ տեղ ունենք, և այժմ իսկ յարմար ժամանակն է:

ԴՕՔՏՕՐ. Այո, այո, գուցէ ճիշտ էլ լինի ձեր ասածը. բայց այնու ամենայնիւ, պէտք է սպասել... (Պէտրան գլխարկով եւ վերարկուով, մի կոյտ աշակերտական տետրակներ ձեռին մտնում է նախասենեակից):

ՊԷՏՐԱ. Բարև ձեզ:

ԴՕՔՏՕՐ. Ա՜հ, այդ դու ես, Պէտրա, բարև: (Ամենքը բարեւում են. Պէտրան հանում է վերարկուն ու գլխարկը եւ ձգում դռան մօտ դրըած աթոռի վրայ):

ՊԷՏՐԱ. Ինչ լաւ է, ժողովուել էք այստեղ այսպիսի ուրախ ընկերութիւն կազմել. իսկ ես վազում էի դասերիս:

ԴՕՔՏՕՐ. Աւելի լաւ, դու էլ մեր կողքին նստիր:

ԲԻՂ. Թոյլ տուէք ձեզ համար գրոգ լցնել:

ՊԷՏՐԱ (Սեղանին մօտենալով): Շնորհակալ եմ, ես ինքս կածեմ. դուք միշտ շատ թանձր էք լցնում: Հա, իրաւ, հայրիկ, քեզ նամակ կայ: (Գընում է դէպի աթոռը, որտեղ ձգել է իր իրերը):

ԴՕՔՏՕՐ. Նամա՞կ. բայց ումի՞ց է:

ՊԷՏՐԱ. (Փնտրում է վերարկուի գրպանը). Ես առաւօտը գալիս վերցրի փոստի ցրուիչից...:

ԴՕՔՏՕՐ. (*Վեր է կենում եւ նրան մօտենում*). Ի՞նչպէս—և դու մինչև այժմ ինձ չես տուել նամակը...։

ՊԷՏՐԱ. Ճշմարիտ, բոլորովին ժամանակ չըգտայ տուն վերադառնալու։ Ահա նամակը։

ԴՕՔՏՕՐ. (*Նամակն արագ առնելով*)։ Ցոյց տուր, ցոյց տուր, հօգեակս։ (*Կարդում է հասցէն*). Այո, այո, հէնց նա է։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Այդ այն նամակն է, որին այնքան վաղուց սպասում էիր, Թոմաս։

ԴՕՔՏՕՐ. Այո, այո, հարկաւոր է շուտով կարդալ... Ես որտեղ ճրագ գտնեմ, Կատերինա, իմ սենեակի լամպան կրկին վառած չէ։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Ո՛չ, ոչ, վառած է, գրասեղանի վրայ է։

ԴՕՔՏՕՐ. Ներեցէք, պարոններ, եթէ ես ձեզ մի քանի րոպէով թողնեմ.., (*Գնում է ձախ կողմի սենեակը*)։

ՊԷՏՐԱ. Այդ ի՞նչ է նամա՞կ է, մայրիկ։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Չգիտեմ։ Վերջին օրերս նա շարունակ նայում էր թէ արդեօք չէ՞ գալիս փոստիցրուիչը։

ԲԻՂ. Հաւանական է որ մի հիւանդ կլինի գիւղից...։

ՊԷՏՐԱ. Խեղճ հայրիկ. շուտով նա հանգստութիւն չի ունենալ, այնքան աշխատութիւն կլինի... (*Խառնում է գրօգը*)։

ՀՕՖՍ. Իսկ դուք, այսօր էլ դասեր էիք տալիս, երեկոյեան դպրոցում։

ՊԷՏՐԱ. (*Բաժակից մի կլտում խմելով*). Երկու ժամ։

ԲԻՂ. Եւ չորս ժամ առաւօտը, ինստիտուտում։

ՊԷՏՐԱ. (*Նստելով սեղանի մօտ*) Հինգ ժամ։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Ինչպէս տեսնում եմ դու դեռ տետրակներ էլ ունիս, որոնց պէտք է ուղղես երեկոյեան։

ՊԷՏՐԱ. Այո, մի ամբողջ կոյտ։

ԳՕՐՍՏ. Ինչպէս երեւում է՝ դուք աշխատութեան պակասութիւն չէք քաշում։

ՊԷՏՐԱ. Այո, բայց այդ աշխատութիւնն ինձ ծանրութիւն չէ պատճառում։ Մարդ այնպէս յոգնում է երեկոյեան դէմ որ...

ԲԻՂ. Ի՛նչպէս։ Եւ այդ ձեզ դուր է գալիս։

ՊԷՏՐԱ. Այո, շատ քաղցր քնում եմ, այդպիսի օր անցկացնելուց յետոյ։

ՄՕՐՏԷՆ. Ուրեմն, դու շատ մեղքեր ունես Պետրա։

ՊԷՏՐԱ. Շատ մեղքե՞ր։

ՄՕՐՏԷՆ. Այո, եթէ այդքան շատ աշխատում ես։ Պարոն Թէլլունգն ասում է, որ աշխատանքն ուղարկւում է մեզ իբրև պատիժ մեր մեղքերի փոխարէն։

ԷՅԼԻՖ. (*Արհամարանքով*) Ա՛յ քեզ դատարկ բան։ Ի՞նչ յիմարն ես որ հաւատում ես այդ տեսակ անհեթեթ խօսքերին։

ՏԻԿ ՇՏՕԿ. Դէ, դէ, Էյլէֆ։

ԲԻԼ. (ծիծաղելով) Բրա՛վօ, բրա՛վօ։

ՀՕՓՍ. Մի՞թէ դու չես ուզում աշխատել Մօրտէն։

ՄՕՐՏԷՆ. Ի հարկէ, ոչ։

ՀՕՓՍ. Ուրեմն դու ի՞նչ կըկամենայիր լինել։

ՄՕՐՏ. Ամենից աւելի ես կուզենայի լինել „վիկինգ"—ծովային աւազակ։

ԷՅԼԻՓ. Բայց այն ժամանակ հօ դու հեթանոս կլինէիր։

ՄՕՐՏԷՆ. Ի՞նչ անենք։

ԲԻԼ. Այդ բանում ես քեզ հետ համաձայն եմ Մօրտէն. ես էլ նոյնն եմ ասում։

ՏԻԿ. ՇՏՕԿ. (Նրան նշաններ անելով) Ո՛չ, ո՛չ պարոն Բիլլինգ, դուք կատակ էք անում, այնպէս չէ՞։

ԲԻԼ. Գլուխս մեռնի տեղն ու տեղը, թէ ես կատակ լինեմ անում։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Դէ, երեխայք, ձեր գնալու ժամանակն է, երևի դուք վաղուան համար պատրաստելու դասե՞ր ունիք։

ԷՅԼԻՓ. Թոյլ տուր, մի քիչ էլ մնանք, մայրիկ։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Ոչ, ոչ, ժամանակ է. գնացէք երկուսդ էլ։ *(Երեխայք բարևում են և գնում սենեակը, դէպի ձախ)։*

ՀՕՓՍ. Մի՞թէ դուք կարծում էք, որ նրանց

օգտակար չէ, այսպիսի խօսքեր լսելը։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Չգիտեմ, ճշմարիտ, միայն ինձ այդ չէ դուր գալիս։

ՊԷՏՐԱ. Իսկ ես կարծում եմ, մայրիկ, թէ դու սխալւում ես։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Կարելի է, այնուամենայնիւ ինձ չեն դուր գալիս այդպիսի խօսակցութիւններն այստեղ... տանը։

ՊԷՏՐԱ. Կեղծաւորութիւնն ամեն տեղ միևնոյն է, թէ տանը թէ ուսումնարանում։

ԲԻԼ. Այո, ի հարկէ։

ՊԷՏՐԱ. Եթէ ես հնար ունենայի, ինքս իմ դպրոցս կըբանայի, այնպիսի դպրոց, որտեղ ամեն բան ուրիշ հիմքերի վրայ լինէր դրուած։

ԲԻԼ. Օ՜, եթէ դուք հնար ունենայիք։

ԳՕՐՍՏ. Եթէ դուք առանց կատակի մտածում էք այդ մասին, ես ուրախութեամբ կառաջարկեմ ձեզ սենեակ։ Իմ հօրս հին տունը դրեթէ դատարկ է։ Ներքևի յարկում մեծ դահլիճ կայ։

ՊԷՏՐԱ. (ծիծաղելով) Օ՜, ո՛չ, շնորհակալ եմ... դրանից ոչինչ չի դուրս գալ։

ՀՕՓՍ. Ի հարկէ, ոչինչ։ Դուք աւելի լաւ կարող էիք առաջ տանել լրագրական գործը։ Իրաւ, ժամանակ չե՞ք ունեցել արդեօք նայելու այն անգլիական ռօմանը, որ մեզ խոստացել էք թարգմանել։

ՊԷՏՐԱ. Ոչ դեռ։ Բայց դուք ժամանակին կը

ստանաք: *(Դոքտոր Շտոկման դուրս է գալիս իր սենեակից, նամակը ձեռքին)*:

ԴՕՔՏՕՐ. *(Նամակը շարժելով)* Նորութիւններ, պարոնայք, նորութիւններ, որից բոլոր քաղաքը պիտի ցնցուի:

ԲԻԼ. Նորութիւննե՞ր:

ՏԻԿ. ՇՏՕԿ. Ի՞նչ նորութիւններ:

ԴՕՔՏՕՐ. Նշանաւոր, մեծ գիւտ, Կատերինա:

ՀՕՓՍ. Ի՞նչ:

ՏԻԿ. ՇՏՕԿ. Քո՞ արածդ է այդ գիւտը:

ԴՕՔՏՕՐ. Այո, իմ: *(Սենեակում յետ ու առաջ է ման գալիս)* Դէ թող այժմ կրկին մեղադրեն ինձ թէ ես խելացնոր և վայրենի երևակայութիւններ ունեմ: Բայց նրանք էլ չեն համարձակի: Հա՛, հա՛: Ես գիտեմ որ չեն համարձակի:

ՊԷՏՐԱ. Հայրիկ, պատմիր էլի թէ բանն ինչումն է:

ԴՕՔՏՕՐ. Լաւ, լաւ, ժամանակ տուէք և ամեն բան կլսէք: Ախ, եթէ միայն Պէտէրն այս րոպէին այստեղ լինէր...: Ահա ձեզ ապացոյց թէ մարդիկ ինչպէս են դատողութիւններ կազմում. նրանք կոյր են, ինչպէս խլուրդներ:

ՀՕՓՍ. Ի՞նչ էք ուզում ասել, դոքտոր:

ԴՕՔՏՕՐ. *(Կանգնելով սեղանի կողքին)* Ամենքը ենթադրում են որ մեր քաղաքն առողջարար տեղ է, այնպէս չէ՞:

ՀՕՓՍ. Այո, ի հարկէ:

ԴՕՔՏՕՐ. Այո, առանձին առողջարար տեղ, որտեղ համարձակ խորհուրդ են տալիս ապրել թէ հիւանդներին և թէ առողջներին:

ՏԻԿ. ՇՏՕԿ. Սիրելի Թոմաս...

ԴՕՔՏՕՐ. Այո, ի հարկէ և մենք էլ նրան առաջադրում էինք և գովում: Ես ինքս մի քանի անգամ եմ գրել թէ „Ժողովրդական համբաւաբերում“ թէ բրօշիւրների մէջ...:

ՀՕՓՍ. Է՛, ի՞նչ է որ:

ԴՕՔՏ. Այդ լողարանները, որ մենք անուանում էինք ‹քաղաքի սիրտը›, նրա „կենտրոնական նեարդը“ և սատանան գիտէ թէ ուրիշ ինչ ու ինչ...:

ԲԻԼ. „Քաղաքի թռթռուն սիրտը“—ես միանգամ այդպէս անուանեցի ժողովում...:

ԴՕՔՏ. Այո, ի հարկէ: Բայց դուք գիտէ՞ք թէ իսկապէս ի՞նչ են ներկայացնում, այդ հոյակապ, գովուած, բժշկարար լողարանները, որոնք այնքան թանգ են նստել—գիտէ՞ք թէ ինչ են դրանք:

ՀՕՓՍՏԱԴ. Ի՞նչ:

ՏԻԿ. ՇՏՕԿՄԱՆ. Ասա մեզ վերջապէս:

ԴՕՔՏ. Աւելի ոչինչ.—վարակիչ փոսեր, ոչ աւել, ոչ պակաս:

ՊԷՏՐԱ. Լողարանները, հայրիկ:

ՏԻԿ. ՇՏՕԿ. Մեր լողարաննե՞րը:

ՀՈՓՍ. Մի՞թէ կարելի է, դոքտոր:

ԲԻԼ. Այդ անհաւանական է:

ԴՕՔՏՕՐ. Ասում եմ ձեզ, որ բոլոր այդ տե-

ղը—վարակիչ գերեզմանատուն է, վնասակար վերին աստիճանի. բոլոր այդ Միլ-Դէլի մօտ եղած կեղտոտութիւնները թունաւորում են խողովակների միջի ջուրը և այդ միևնոյն անիծեալ, թունաւորուած ջուրը դուրս է հոսում ծովի ափը...։

ՀՕՖՍ. Որտեղ լողարաննե՞րն են շինուած։

ԴՕՔՏՕՐ. Հէնց այնտեղ։

ՀՏՖՍ. Բայց ի՞նչ հիման վրայ էք դուք այդպէս համոզուած, դօքտոր։

ԴՕՔՏՕՐ. Ես բոլոր գործն ուսումնասիրել եմ, ա՛յնքան բարեխղճաբար, որքան միայն հարկաւոր է։ Ես վաղուց արդէն կասկածում էի որ այդ բանը կայ։ Անցեալ տարի մեր յաջախորդների մէջ տարօրինակ հիւանդութիւնների դէպքեր պատահեցին—տիֆ և ստամոքսային կատարր...։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Այո, յիշում եմ։

ԴՕՔՏՕՐ. Մենք այն ժամանակ կարծում էինք թէ յաջախորդներն իրենք են իրենց հետ բերել վարակումը. բայց աւելի յետոյ, անցեալ ձմեռ՝ իմ մէջ կասկած ընկաւ և ես փորձեցի ջուրը քիմիական վերլուծութեան ենթարկել։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Ահա՛ թէ ինչ բանի վրայ էիր դու այնքան եռանդով աշխատում։

ԴՕՔՏՕՐ. Այո, ճշմարիտ է. քիչ չեմ աշխատել ես։ Բայց այստեղ, ինչպէս ձեզ յայտնի է ես բոլոր գիտնական յարմարութիւնները չունիմ, այդ պատճառով, ստուգելու համար ես ուղարկեցի հա-

մալսարանի քիմիկոսին թէ քաղցր ջրից և թէ մեր ծովի ջրից։

ՀՕՖՍ. Եւ դուք նրա վկայութիւնն ստացե՞լ էք։

ԴՕՔՏՕՐ. (*Նամակը ցոյց տալով*). Ահա՛։ Այս վկայութիւնն ամենահաստատ կերպով ապացուցանում է որ այդ ջրի մէջ կայ վահրային փթուկ օրգանական նիւթ, միլիոնաւոր ինֆուզօրիաներ։ Իսկ այդ տեսակ ջուրը բացարձակապէս վնասակար է առողջութեան համար, թէ ներքին և թէ արտաքին գործածութեան ժամանակ—այդ միևնոյն է։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Ի՜նչ բախտաւորութիւն, որ դու ժամանակին գտար այդ բանը։

ԴՕՔՏՕՐ. Այո, անկասկած, սա մի մեծ բախտաւորութիւն է։

ՀՕՖՍ. Բայց այժմ ի՞նչ էք մտադիր անել, դօքտոր։

ԴՕՔՏՕՐ. Ինչ անե՞լ. ի հարկէ բոլոր գործն ուղղել, կարգի բերել։

ՀՕՖՍ. Եւ դուք կարծում էք թէ հնարաւո՞ր է։

ԴՕՔՏՕՐ. Այդ անհրաժեշտ է։ Ապա թէ ոչ լողարանները կորած են։ Բայց ես այդ բանից չեմ վախենում. ինձ համար շատ պարզ է թէ ինչ նորոգութիւններ պէտք է անել։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Բայց, սիրելիս, ինչո՞ւ դու այդ բոլորն այդպէս գաղտնի ես արել։

ԴՕՔՕՐ. Ի՞նչպէս. ապա ուզում էիր որ այդ

մասին ես ընկնեմ քաղաքն ու ամեն տեղ բլբլամ, առանց գործը հաստատապէս ստուգելու։ Ոչ, շնորհակալ եմ. ես դեռ չեմ խելագարուել։

ՊԷՏՐԱ. Բայց մեզ, տնեցոց...։

ԴՕՔՏՕՐ. Ես ոչ մի խօսք անգամ չէի կարող ասել, ոչ մի մարդու. բայց վաղը դու կարող ես մըտնել պառաւ փորսողի...։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Օ՜, Թոմաս։

ԴՕՔՏՕՐ. Դէ, լաւ, լաւ, կգնաս քո պապիդ մօտ։ Նա կարծում է որ իմ գլուխս կարգին չէ. ուրիշ շատերն էլ միևնոյնն են կարծում. ես այդ նըկատել եմ։ Բայց այժմ բոլոր այդ մարդիկ կտեսնեն. *(Սենեակում յետ ու առաջ է ման գալիս, ձեռները շփելով)*։ Ի՜նչպէս ցնցուելու են քաղաքում, Կատերինա, մտածիր միայն, գիտե՞ս, բոլոր խողովակները պէտքէ փոխուեն։

ՀՕՖՍ. *(Վեր կենալով).* Ի՞նչպէս, բոլոր խողովակնե՞րը։

ԴՕՔՏՕՐ. Ի հարկէ. նրանք շատ ցած են անցկացրած, պէտք է բարձրացնել։

ՊԷՏՐԱ. Ուրեմն, նշանակում է, հայրիկ, դու ճիշտ էիր ասում։

ԴՕՔՏ. Այո, յիշում ես, Պէտրա. ես այդ մասին գրեցի, երբ նրանք դեռ նոր էին սկսել աշխատանքները։ Բայց այն ժամանակ ոչ ոք չկամեցաւ ինձ լսել։ Այժմ ես նրանց բոլոր կտերում կփշրեմ, ի հարկէ, ես արդէն հաշիւ եմ պատրաստել կառա-

վարիչների համար, մի ամբողջ շաբաթ է հաշիւը պատրաստ, ես միայն պատասխանի էի սպասում։ *(Ցոյց տալով նամակը).* բայց այժմ թող կարդան։ *(Գնում է առանձնասենեակը եւ վերադառնում՝ մի կապոց թղթով)*։ Ահա՛, նայեցէք։ Չորս թերթ, մանր գրուած, լիքը։ Սրան ես կըկցեմ և այս վկայութիւնը։ Մի թերթ լրագրի թուղթ տուր, Կատերինա, բոլորը միասին փաթաթեմ։ Ահա այդ։ Տուէք ինձ այն...։ *(Ոտքը գետնին խփելով)*։ Ինչպէս է նրա անունը, գրողը տանի նրան։ Տուէք այդ աղախնին, ասում եմ ձեզ և հրամայեցէք այս բոպէին տանել քաղաքագլխի մօտ։ *(Տիկին Շտօկման վերցնում է փաթեթը եւ հեռանում սեղանատան միջով)*։

ՊԷՏՐԱ. Իսկ դու, ինչպէս ես կարծում, հայրիկ, ինչ կասի այդ մասին հօրեղբայր Պէտէրը։

ԴՕՔՏ. Ինչ կասի՞։ Ի հարկ է պէտք է ուրախանայ այդպիսի մի նշանաւոր փաստի գիւտով։

ՀՕՖՍ. Յոյս ունիմ որ թոյլ կտաք ինձ մի կարճ նկատողութիւն տպել „Ժողովրդական Համբաւաբերի“ մէջ, ձեր գիւտի մասին։

ԴՕՔՏ. Այո, ես դրանով շատ կուրախանամ։

ՀՕՖՍ. Շատ ցանկալի է որ հասարակութիւնը շուտով իմանայ այդ մասին։

ԴՕՔ. Ի հարկէ։

ՏԻԿ. ՇՏՕԿ. *(Վերադառնալով).* Ուղարկեցի աղախնին։

ԲԻՂ. Գլուխս մեռնի՛ թէ դուք քաղաքում ա-ռաջին մարդը չդառնաք, դոքտոր։

ԴՕՔ. *(Ուրախ յետ ու առաջ ման է գալիս)*. Է՞հ, դատարկ բան է։ Ես խսկապէս իմ պարտ-քըս եմ կատարել։ Ես միայն բախտ ունեցայ այդ բանը գտնել։ Բայց էլի...։

ԲԻՂ. Ի՞նչ ես կարծում Հօֆստադ. մի՞թէ քա-ղաքը պարտաւոր չէ դրա համար դոքտորին ջահա-ւոր հանդէսով պատուել։

ՀՕՓՍ. Այդ ես անպատճառ կառաջարկեմ։

ԲԻՂ. Իսկ ես այդ մասին կխօսեմ անպատճառ Ասլաքսենի հետ։

ԴՕՔ. Ոչ, բարեկամներս, այդպիսի պատմու-թիւններ մի սարքէք։ Լսել անգամ չեմ ուզում։ Եւ եթէ կառավարիչները մտածեն իմ ռոճիկս աւելա-ցնել, ես ուղղակի կմերժեմ։ Այո, Կատերինա ամե-նևին ես չեմ համաձայնի այդ բանին։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Եւ դու բոլորովին իրաւացի ես Թոմաս։

ՊԵՏՏԱ. Քո կենացդ հայրիկ։

ՀՕՓՍ. *եւ* ԲԻՂ. Ձեր կենացը, ձեր կենացը, դոքտոր։

ՀՕՓՍ. *(Բաժակը բժշկի բաժակին խփելով)*. Ցանկանում եմ որ ձեր գիւտը ձեզ ուրախութեան պատճառ լինի։

ԴՕՔ. Շնորհակալ եմ, ձեզանից, շնորհակալ եմ, թանգագին բարեկամներ։ Չեմ կարող ձեզ մօտ

արտայայտել, թէ որքան բախտաւոր եմ...։ Օ՜, ի՜նչ երջանկութիւն է զգալ թէ արժանացել ես քո քաղաքացիների համակրութեանը։ Ուռռա՜, Կատերինա *(Երկու ձոռներով բռնում է կնոջ շնքից եւ նրա հետ պտոյտ գալիս։ Տիկին Շտօկմանը գոռում է եւ ցանկանում է նրա ձեռից ազատուել։ Ընդ-հանուր ծիծաղ, ամենքը ծափահարում են դոքտո-րին։ Երեխայք գլուխները դռան միջից հանում են։)*

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

(Դօքտոր Շտօկմանի տան հիւրասենեակը, սեղանատան դուռը ծածկած է։ Առաւօտ է։

ՏԻԿ. ՇՏՕԿ. *(Մտնում է սեղանատնից, ձե-ռին փակ նամակ։ Գնում է դէպի աջ դուռը եւ ներս նայում)*։ Դու այստե՞ղ ես, Թոմաս։

ԴՕՔՏ. *(Այնտեղից)* Այո, ես հէնց այս րոպէին վերադարձայ։ *(Մտնում է)*։ Այդ ի՞նչ է։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Նամակ՝ եղբօրիցդ։ *(Տալիս է նամակը)*։

ԴՕՔՏ. Ապա ցոյց տուր։ *(Նամակը բանում է եւ կարդում)* „Ընդ սմին վերադարձնում եմ ինձ ուղարկած ձեռագիրը“... *(Կիսաձայն կարդում է)* Հը՜մ...

ՏԻԿ. ՇՏՕԿ. Հը՛, ի՞նչ է գրում։

ԴՕՔՏ. (*Նամակը զրպանը դնելով*) Ոչինչ, գրում է որ ինքն անձամբ կըգայ կէսօրին-մօտ։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Դէ, էլ չմոռանաս տանը գըտնուել, նշանակած ժամին։

ԴՕՔ. Այդ հեշտ է։ Ես արդէն վերջացրել եմ իմ առաւօտեան աշխատանքս։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Հետաքրքրական է իմանալ, թէ եղբայրդ ինչպէս կվերաբերի այդ գործին։

ԴՕՔ. Կտեսնես. նա շատ էլ չի ուրախանալ որ այդ գիւտը ես արի և ոչ թէ ինքը։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Ես էլ հէնց դրանից եմ վախում։

ԴՕՔ. Ի հարկէ,—սրտի խորքում նա ուրախ կլինի։ Բայց այնու ամենայնիւ Պէտէրը սատանի պէս չէ սիրում, որ իրենից ի զատ մի ուրիշն աշխատի քաղաքի օգտին։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Գիտես, Թոմաս, ինձ թւում է որ դու կարող ես մի փոքր զիջում անել և այդ գործի պատւի մի մասը նրան յատկացնել։ Միթէ դու չես կարող այնպէս ակնարկել՝ իբր թէ այդ միտքը նա է ծագեցրել քո մէջ։

ԴՕՔ. Ի հարկէ կարող եմ—այդ ինձ համար միևնոյն է։ Միայն թէ յաջողուի գործն ուղղել։ (*Ծերունի Մօրտէն-Կիլը նախասենեակից գլուխը կոխում է դռան մէջ, հարցական ակնարկով նայում է և չարամիտ ձևով հարցնում է*)։

Մ—ԿԻԼ. Ուրեմն այդ բոլորն... ուղի՞ղ է։

ՏԻԿ. ՇՏՕԿ. (*Նրան հանդէպ գնալով*) Այդ դո՞ւք էք, հայրիկ։

ԴՕՔՏ. Ա՛, բարի լոյս, աներս, բարի առաւօտ։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Ինչո՞ւ չէք մտնում։ Մտէք էլի։

Մ—ԿԻԼ. Շատ լաւ—եթէ միայն այդ բոլորը ճշմարիտ է. իսկ եթէ ոչ—ես կգնամ։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Այսինքն ի՞նչն է ճշմարիտ։

Մ—ԿԻԼ. Ա՛յ, բոլոր այդ պատմութիւնը խողովակների մասին։ Ասացէք խնդրեմ—միթէ դա իսկապէս ճշմարի՞տ է։

ԴՕՔՏ. Այո՛, ի հարկէ։ Բայց դուք ո՞րտեղից իմացաք։

Մ—ԿԻԼ. Պէտրան առաւօտն ուսումնարան գնալիս մտաւ ինձ մօտ։

ԴՕՔՏ. Ա՜մմ—այդպէս ուրեմն։

Մ—ԿԻԼ. Այո, այո և հէնց ինքն էլ ինձ պատմեց ամենը։ Ես սկիզբը կարծեցի թէ նա կատակ է անում, բայց Պէտրան այդպիսի բնաւորութիւն չունի։

ԴՕՔՏ. Ի հարկէ, ո՛չ. միթէ ձեր մտքից այդպիսի կասկածներ է անցնում։

Մ—ԿԻԼ. Օ՜, չէ՞ որ այժմ ոչ ոքի չէ կարելի լիովին հաւատալ։ Դու դեռ բանը չհասկացած քեզ կյիմարացնեն։ Ուրեմն այդ բոլորն իսկապէս ճըշմարի՞տ է։

ԴՕՔՏ. Այո, ի հարկէ։ Նստեցէք խնդրեմ, ինչո՞ւ էք կանգնել (*Նստեցնում է դիվանի վրայ*)։

Ի՞նչ բախտաւորութիւն քաղաքի համար, այնպէս չէ՞...։

Մ—ԿԻՂ. (*ծխափողը բռնելով*) Քաղաքի համար բախտաւորութի՞ւն։

ԴՕՔՏ. Այո,—որ ես կարողացայ այդ բոլորը ժամանակին գտնել։

Մ. ԿԻՂ. (*Ինչպէս առաջ*) Այո, այո, այո ի հարկէ։ Մտքիցս անգամ անցկացնել չէի կարող թէ դուք կը կարողանաք այդպիսի ճարպիկ կերպով օյին գալ ձեր եղբօր գլխին։

ԴՕՔՏ. Ինչպէս... օյի՞ն...

ՏԻԿ. ՇՏՕԿ. Ի՞նչ էք ասում հայրիկ...

Մ—ԿԻՂ. (*ծնօտը յենելով գաւազանին խորամանկութիւնով աչքով է անում բժշկին*)։ Լաւ, բայց բանն ինչո՞ւմն է.—այդ ի՞նչ տեսակ միջատներ են մտել խողովակների մէջ։

ԴՕՔՏ. Ինֆուզօրիաներ։

Մ—ԿԻՂ. Եւ կարծեմ դրանք շատ բազմաթիւ են, ինչպէս ասում էր Պետրան—բիւրաւոր։

ԴՕՔՏ. Այո, հարիւր հազարներ։

Մ—ԿԻՂ. Բայց ո՛չ ոք չէ կարող նրանց նկատել, այնպէս չէ՞։

ԴՕՔՏ. Այո, ոչ ոք չէ կարող նրանց տեսնել։

Մ—ԿԻՂ. (*Հանդարտ քրքջալով*) Գրողը տանի ինձ, թէ ես կեանքումս սրանից աւելի զւարճալի բան լսած լինեմ։

ԴՕՔՏ. Ի՞նչ էք կամենում ասել։

Մ—ԿԻՂ. Մի՞թէ դուք ճշմարիտ երեւակայում էք, որ այդ գործում քաղաքագլուխը ձեզ հետ համաձայն կլինի։

ԴՕՔՏ. Ա՛յ, կտեսնենք։

Մ—ԿԻՂ. Եւ դուք կարծում էք թէ նա այդ տեսակ անխելքութեան ընդունակ է։

ԴՕՔՏ. Ես յուսով եմ, որ ամբողջ քաղաքն ընդունակ կլինի...

Մ—ԿԻՂ. Ամբողջ քաղա՞քը։ Խելքս չի կտրում, ճշմարիտ։ Բայց ինչ որ էլ լինի—տեղն է դրանց. այդ լա՛ւ դաս է։ Նրանք իրենց մեզանից—ծերերիցս աւելի խելօք էին համարում. Նրանք ինձ դուրս քշեցին քաղաքային խորհրդից, այո—շան պէս դուրս արին. դէ այժմ—հարսանիքը մեր տանն է։ Նայեցէք, Շտօկման, նրանցից յետ չմնաք։

ԴՕՔՏ. Այո, բայց...

Մ—ԿԻՂ. Զգիջանէք, ասում եմ ձեզ։ (*Վեր կենալով*)։ Եթէ միայն դուք յաղթէք քաղաքագլխին և նրա բարեկամներին—ես կնուիրեմ հարիւր տալեր, աղքատների օգտին։

ԴՕՔՏ. Ի՞նչ կայ—այդ բարի գո՛րծ է։

Մ—ԿԻՂ. Ի հարկէ, ես այնքան քիչ միջոցներ ունիմ, որ ի զուր տեղը չեմ կարող փող դէն ձգել. բայց եթէ այդ բանը դու յաջողեցնես ես ծնունդին աղքատների համար զոհում եմ 50 տալեր.-.

(*Հօֆստադը մտնում է նախասենեակից*)։

ՀՕՓՍ. Բարև ձեզ (*Մնում է կանգնած*) Ախ, ներեցէք...

ԴՕՔՏ. Խնդրեմ, շնորհ արէք, մտէք, մտէք...

Մ—ԿԻԼ. (*Քրքջալով*) Հէ—հէ—հէ. սա էլ է բանի մէջ:

ՀՕՓՍ. Ի՞նչ էք կամենում ասել:

ԴՕՔ. Այո, ի հարկէ:

Մ—ԿԻԼ. Վա՛, ի հարկէ: Բանը լրագրի մէջ է ընկնելու: Կեցցէք, Տոկման, քաջ էք: Զմռուանաք ասածս. իսկ այժմ տուն գնալու ժամանակ է:

ԴՕՔ. Ո՛չ, ո՞ւր էք շտապում. նստեցէք մեզ հետ:

Մ—ԿԿԼ. Ո՛չ, ժամանակ է: Մի լաւ նրանց... Լաւ օյին է: Հաւատացնում եմ որ դուք այդ գործից վնաս չէք ունենալ: (*Գնում է, Տիկին Տոկման նրան ճանապարհ է դնում*):

ԴՕՔ. (*ծիծաղելով*). Ի՞նչ էք կարծում... Գիտէ՞ք.—ծերունին բոլոր այս պատմութեան մէջ և ոչ մի բառին չի հաւատում:

ՀՕՓՍ. Ուրեմն նա դրա մասի՞ն էր խօսում...

ԴՕՔ. Այո մենք դրա մասին էինք խօսում. դուք էլ երևի նոյն բանի համար մտաք...

ՀՕՓՍ. Այո, դօքտօր, դուք ազատ րոպէ ունի՞ք արդեօք:

ԴՕՔ. Պատրաստ եմ ձեր ծառայութեան, բարեկամս:

ՀՕՓՍ. Ի՞նչ դառաւ. դուք արդէն խօսե՞լ էք քաղաքագլխի հետ:

ԴՕՔ. Ո՛չ, դեռ ևս. նա շուտով պէտք է գայ:

ՀՕՓՍ. Ձեզ, ինչպէս բժշկի և գիտութեան մարդու՝ մեր ջրանցքների վերաբերեալ բոլոր այս պատմութիւնը երևում է իբրև անհատական առանձին փաստ: Հազիւ թէ ձեր մտքովն անցած լինի, որ այդ հարցի հետ ուրիշ շատ հարցեր են կապուած:

ԴՕՔ. Այսինքն ի՞նչպէս: Նստեցէք բարեկամս: Այդտեղ չէ—այստեղ, դիվանի վրայ: (*Հօփստադը նստում է դիվանի վրայ, դօքտօրը միւս կողմից բազկաթոռի վրայ*):

ԴՕՔ. Այդպէս, դուք ասում էք թէ...

ՀՕՓՍ. Դուք երէկ ասացիք որ ջուրը կեղտոտութիւններով վարակուած է:

ԴՕՔ. Այո, անկասկած. բոլոր չարիքն առաջանում է այն հոտած ճահճից, որ գտնւում է Միլ-Դէլի մօտ...

ՀՕՓՍ. Ներեցէք, դօքտօր. ես ենթադրում եմ թէ գլխաւոր չարիքը բոլորովին ուրիշ ճահիճից է առաջանում:

ԴՕՔ. Ուրիշ էլ ի՞նչ ճահիճ կայ որ:

ՀՕՓՍ. Այն ճահիճը, որի մէջ փտում է մեր քաղաքային ինքնավարութեան բոլոր կեանքը:

ԴՕՔ. Գրողը տանի Հօփստադ. այդ ի՞նչ միտք է ձեր գլխում:

ՀՕՓՍ. Քաղաքի բոլոր գործերն աստիճանա-

բար իր ձեռն է ձգել այդ աւազակային խումբը…

ԴՕՔ. Բայց մի՞թէ ամենքն էլ…

ՀՕՖՍ. Ո՛չ, ամենքը չեն. բայց մնացածներն էլ նրանց բարեկամներն ու պաշտպաններն են։ Մեր ամենքի կառավարութիւնը գտնւում է հարուստ մարդկանց մի շրջանի ձեռքում—մարդիկ, որոնք քաղաքում ունին կշիռ ու դիրք։

ԴՕՔ. Այո, բայց միևնոյն ժամանակ նրանք ընդունակ և հասկացող մարդիկ են։

ՀՕՖՍ. Ո՞րտեղից. մի՞թէ նրանք շա՞տ ընդունակութիւն ցոյց տուին այդ ջրանցքը շինելուս։

ԴՕՔ. Ոչ, ի հարկէ. այդ մի մեծ անհեթթութիւն էր. բայց բոլոր գործը կարելի է ուղղել։

ՀՕՖՍ. Դուք կարծում էք որ այդ այդպէս հե՞շտ է։

ԴՕՔ. Դէ, հիմա, հեշտ է թէ դժուար, բայց պէտք է անուի։

ՀՕՖՍ. Այո, եթէ միայն մամուլը ճնշում գործի։

ԴՕՔ. Այդ բոլորովին աւելորդ է բարեկամս, ես հաւատացած եմ որ եղբայրս…

ՀՕՖՍ. Ներեցէք ինձ, դօքտոր, բայց ես ձեզ նախազգուշացնում եմ որ մտադիր եմ այդ գործը բարձրացնել։

ԴՕՔ. Լրագրի մէջ։

ՀՕՖՍ. Այո։ Ձեռնարկելով «Ժողովրդական Համբաւաբերի» հրատարակութեան ես հաստատ

վճռել եմ քանդել այդ յամառ տխմարների շրջանը, որն ամեն բան իր ճանկերի մէջ է հաւաքել։

ԴՕՔ. Բայց դուք ինքներդ ինձ պատմեցիք թէ այդ բանից ինչ էր դուրս գալիս. Քիչ էր մնում որ դուք լրագիրը կորցնէք։

ՀՕՖՍ. Այո, ճիշտ է։ Այն ժամանակ մենք ստիպուած էինք մի քիչ կրճատել մեր ասելիքը։ Լողարանների ամբողջ նախագիծը կարող էր գլորուել, եթէ այդ մարդիկը հեռացնուէին։ Բայց այժմ լողարանների գոյութիւնն արդէն կատարուած փաստ է և մենք հեշտութեամբ կարող ենք կառավարուել առանց այդ կարգադրիչներին։

ԴՕՔ. Այո, այդ ճիշտ է, որ մենք առանց նրանց կարող ենք կառավարուել. բայց, էլի՛, մենք նրանց շատ բանով ենք պարտական։

ՀՕՖՍ. Մենք մեր պարտքը կվճարենք իր շահովը։ Բայց ինձ նման դէմօկրատիքական ուղղութիւն ունեցող մի հրապարակախօսը չէ կարող ձեռից թողնել այդպիսի դէպքը։ Ինձ հաճելի չէ խորտակել քաղաքագլխի հեղինակութիւնը։ Նա ձեր եղբայրն է։ Բայց ինձ թւում է որ դուք էլ ինձ պէս էք մտածում.—ճշմարտութիւնը բարձր է բոլոր միտումներից։

ԴՕՔ. Վա՛, ի հարկէ։ (Նռանում). Ուրեմն եթէ այպէս է… եթէ այդպէս է…

ՀՕՖՍ. Վատ կողմից չպէտքէ հասկանաք իմ ասածս։ Իմ պատճառներս աւելի եսական և պա-

տուասիրական չեն քան բոլոր միւս մնացածներինը։

ԴՕՔ. Ի՞նչ էք ասում բարեկամս, ի սէր Աստուծոյ, մի՞թէ ես այդտեսակ բան ասացի։

ՀՕՓՍ. Ինչպէս ձեզ յայտնի է, ես ծագմամբ հասարակ ժողովրդին եմ պատկանում և ես առիթ եմ ունեցել տեսնել թէ ինչպէս ինչ է պահանջվում հասարակ դասակարգի համար։

ԴՕՔ. Այո, ճիշտ է։

ՀՕՓՍ. Գիտեմ, հարստապետական կուսակցութիւնն ինձ պէտք է ամբաստանի, ինչպէս ագիտատոր-գրգռիչ ևայլն, բայց ինձ ի՞նչ, երբ խիղճս մաքուր է...

ԴՕՔ. Դուք բոլորովին իրաւացի էք, բարեկամս, բայց էլի... գրողը տանի... *(Դուռը ծեծում են)*. Մտէք։ *(Դռան շեմքում երեւում է տըպարանատէր Ասլաքսէնը։ Հագին համեստ, բայց մաքուր սեւ սերտուկ, սպիտակ փողպատ, քիչ ճաղղուած, ձեռնոցներ եւ գլխարկը ձեռին)*։

ԱՍԼԱՔ. (Գլուխ տալով). Ներեցէք, դօքտոր, եթէ ես համարձակվում եմ...

ԴՕՔ. (Վեր կենալով). Ա՜ ա՜. կարծեմ Ասլաքսէնն է։

ԱՍԼԱՔ. Այո, ես եմ, դօքտոր։

ՀՕՓՍ. (Վեր կենալով). Դուք ինձ մօտ էք եկել երևի, գործո՞վ։

ԱՍԼԱՔ. Ոչ, ոչ ձեզ մօտ։ Ես չգիտէի մինչև

անգամ, թէ դուք այստեղ էք։ Ես յատկապէս բըժշկի մօտ եմ եկել։

ԴՕՔ. Պատրաստ եմ ձեր ծառայութեան։

ԱՍԼԱՔ. Ճշմարի՞տ է արդեօք ինչ որ ես լըսեցի Բիլլինգից, թէ դուք ցանկանում էք մեզ համար նոր և կատարելագործուած սիստեմայով խողովակներ դնել։

ԴՕՔ. Այո, լողարանների համար։

ԱՍԼԱՔ. Ի հարկէ, ի հարկէ։ Եւ ահա ես մտայ ձեզ մօտ նախազգուշացնելու ձեզ որ իմ կողմից ամեն կերպ պատրաստ ում օգնել շարժմանը։

ՀՕՓՍ. (Բժշկին). Ահա՛, տեսնո՞ւմ էք։

ԴՕՔ. Անկեղծ շնորհակալ եմ ձեզանից. բայց...

ԱՍԼԱՔ. Ձեզ ամենևին վնաս չի հասնիլ եթէ ձեր կողմը լինինք մենք—միջին դասակարգի ներկայացուցիչներս։ Մենք այժմ կազմում ենք. այսպէս ասել, մարմնացեալ մեծամասնութիւնը քաղաքի մէջ, այսինքն երբ այդ հարկաւոր է լինում գործի համար. իսկ դուք գիտէք, դօքտոր, միշտ լաւ է մեծամասնութեան հետ ձեռք ձեռքի տուած գործել։

ԴՕՔ. Անկասկած, ինքն ըստ ինքեան հասկանալի է։ Բայց ես չեմ կարծում թէ հարկ կլինի որև է առանձին միջոցներ ձեռք առնել։ Ինձ թւում է որ գործը շատ պարզ է և հասկանալի...

ԱՍԼԱՔ. Այո, բայց էլի այս աւելորդ չէ. ես լաւ եմ ճանաչում տեղական իշխանութիւններին։ Նրանք առանձին տրամադրութիւն չունին, կողմնակի ան-

ձանց կարծիքներին հետևելու, այնպէս որ ես կարծում եմ թէ վատ չէր լինի եթէ մենք ցոյցի—դէմօնստրացիայի պէս մի բան սարքէինք։

ՀՕՓՍ. Ես էլ նոյն կարծիքի եմ։

ԱՍԼԱՔ. Ի հարկէ ցոյց պէտք է լինի չափաւոր ոգով։ Ես միշտ չափաւորութեան կողմն եմ, դա քաղաքացիական գլխաւոր առաքինութիւնն է.—իմ հասկացողութեամբ այդպէս է։

ԴՕՔ. Մենք այդ բոլորը գիտենք Ասլաքսէն։

ԱՍԼԱՔ. Այո, ենթադրում եմ որ իմ չափաւորութիւնս ամենքը խոստովանում են։ իսկ այդ խողովակների սիստեմին վերաբերեալ գործը շատ նշանաւոր է մեզ, միջին դասակարգի ներկայացուցիչներիս համար։ Լողարանների վրայ յոյս կայ որ ժամանակին քաղաքի համար ոսկու հանքեր կդառնան, կենսական նեցուկ բոլոր բնակիչների համար, մանաւանդ մեզ տանտէրերիս համար..

ԴՕՔ. Յետո՞յ։

ԱՍԼԱՔ. Եւ ես իբրև գործունեայ անդամ „Ողջախոհութեան ընկերութեան"...Ձեզ ի հարկէ յայտնի է դօքտոր, որ ես պատկանում եմ այդ ընկերութեան։

ԴՕՔ. Այո, ի հարկէ, ի հարկէ, յետո՞յ։

ԱՍԼԱՔ. Հետևաբար դուք գիտէք որ ես շփվում եմ շատ մարդկանց հետ։ Եւ որովհետև ես յայտնի եմ իբրև բարի անուան տէր, զգոյշ քաղաքացի, օրէնքները յարգող.—այդ դուք ինքներդ էլ խոստովանում էք դօքտոր—և որովհետև ես քաղա-

քում մի քիչ ազդեցութիւն ունիմ և մի քիչ էլ իշխանութիւն, գուցէ և անարժանաբար...

ԴՕՔ. Այդ բոլորը ես գիտեմ Ասլաքսէն։

ԱՍԼԱՔ. Ուրեմն. դուք. հասկանում էք, որ ինձ համար դժուար չէր լինի մի ստորագրութեան թերթ կազմել, եթէ գործն ընհարումի հասնէր։

ԴՕՔ. Ստորագրութեան թե՞րթ։

ԱՍԼԱՔ. Այո շնորհակալութեան թերթի պէս մի բան, քաղաքացիների կողմից ձեզ, իբրև վարձ ձեր գործունէութեան, այսպիսի մի կարևոր խնդրում։ Ի հարկէ այդ շնորհակալութեան թերթը պէտք է կազմուած լինի չափաւորութեան ոգով, այնպէս որ ոչ ոք չվիրաւորուի։ Բայց եթէ մենք զգոյշ լինենք, ինձ թւում է թէ ոչ ոք էլ վիրաւորուած չի լինի։

ՀՕՓՍ, Է՜հ, նոյն իսկ եթէ այդ բանը շատ էլ յարմար չլինի նրանց ճաշակին...

ԱՍԼԱՔ. Ոչ, ո՛չ, ոչ մէկին չպէտք է վիրաւորել, Հօֆստադ, չպէտք է գործել այնպիսի մարդկանց դէմ, որոնք հեշտութեամբ կարող են գործը մեզնից տանել։ Իւր ժամանակին ես այդպիսի բաներ շատ եմ տեսել՝ դրանից երբէք բարի բան չի դուրս եկել։ Բայց ոչ ոք չէ կարող հակառակ լինել քաղաքավար կարծիքների ազատ բայց չափաւոր արտայայտութեանը։

ԴՕՔ. *(Նրա ձեռքը սեղմելով)* Սիրելի Ասլաքսէն, ես չեմ կարող արտայայտել ձեզ թէ որքան ուրախալի է ինձ համար այս տեսակ պաշտպանութիւն

գտնելս իմ քաղաքացիների շրջանում։ Եւ ա՛յնքան երջանիկ եմ, ա՛յնպէս երջանիկ եմ որ... Մտէք, խնդրեմ, մի մի բաժակ գինի խմենք։

ԱՍԼԱՔ. Շնորհակալ եմ, գինի չեմ խմում։

ԴՕՔ. Ուրեմն մի բաժակ գարեջուր խմէք.— յոյս ունիմ որ չէք մերժի։

ԱՍԼԱՔ. Շնորհակալ եմ, դօքտոր, այսպէս վաղ ես ոչինչ չեմ խմում։ Իսկ այժմ ես գնում մի քանի տանտէրերի հետ խօսելու և հասարակական կարծիքը նախապատրաստելու։

ԴՕՔ. Դուք շատ բարի էք, Ասլաքսէն. բայց ճշմարիտ ես անհրաժեշտ չեմ համարում այդ բոլոր պատրաստութիւնները տեսնել։ Ինձ թւում է որ գործը, շատ հասարակ է...

ԱՍԼԱՔ. Իշխանութիւնները միշտ դանդաղ են գործում, դօքտոր... Բայց չկարծէք թէ ես այդ պատճառով ուզում եմ նրանց նախատել, ո՛չ, Աստուած մի արասցէ...

ՀՕՖՍ. Մենք նրանց, վաղը, մի լաւ թափ կը տանք լրագրում, Ասլաքսէն։

ԱՍԼԱՔ. Միայն առանց խիստ յարձակումների, Հօֆստադ։ Գործեցէք չափաւորութեան ոգով. ապա թէ ո՛չ դուք նրանց հետ ոչինչ չէք կարող անել։ Հետեւեցէք իմ խորհրդին, ես կեանքի ուսումնարանում շատ եմ փորձուել։ Այժմ դուք գիտէք, որ գոնէ մենք միջին դասակարգի ներկայացուցիչներս ձեր ետեւը կանգնած ենք, ամուր ինչպէս

ժայռ։ Համերաշխ մեծամասնութիւնը ձեր կողմն է, դօքտոր։

ԴՕՔ. *(Ձեռը մեկնելով նրան)* Շնորհակալ եմ բարեկամս։ Մնաք բարով, ցտեսութիւն։

ԱՍԼԱՔ. Իսկ դուք Հօֆստադ, գրասենեա՞կն էք գնում։

ՀՕՖՍ. Ես այս րոպէին կգնամ։ Ես միայն մի քանի գործեր ունեմ, պէտք է վերջացնեմ։

ԱՍԼԱՔ. Ցտեսութիւն. *(Գլուխ է տալիս եւ գնում՝ դօքտոր Ստօկման նրան ճանապարհ է դնում դէպի նախասենեակը)։*

ՀՕՖՍ. *(Բժշկին, որ վերադառնում է)* Դէ, դրան ի՞նչ կասէք, դօքտոր։ Վաղուց՝ ժամանակ է վերջապէս այս բոլոր անվայել տատանումները վերջացնել և համարձակ գործել, այնպէս չէ՞։

ԴՕՔ. Դուք Ալաքսէնի մասի՞ն էք խօսում։

ՀՕՖՍ. Այո, նրա մասին։ Դա բաւական կարգին մարդ է, բայց դա էլ նրանցից մէկն է, որոնք ընկել են ճահճի մէջ։ Եւ այստեղ գրեթէ ամենքն էլ դրան են նմանում. այդ մարդիկը շարունակ մի կողմից միւս կողմն են տատանվում, կողմնացոյցի պէս և իրենց երկիւղով ու կասկածներով մի քայլ առաջ գնալ չեն համարձակւում։

ԴՕՔ. Այո, բայց Ասլաքսէնն ինձ բաւական բարեմիտ մարդ է երեւում։

ՀՕՖՍ. Մի բան կայ, որ իմ աչքում աւելի արժանաւոր և ազնիւ է քան զանազան տեսակ բարի

մտադրութիւնները—այդ քաջ և անկախ գործելն է։

ԴՕՔ. Ես ձեզ հետ համաձայն եմ բոլորովին։

ՀՕՓՍ. Հէնց դրա համար էլ ես կամենում եմ դէպքից օգուտ քաղել։ Այդ ջրանցքի առիթով պատահած անհեթեթ աններելի սխալը պէտք է իւրաքանչիւր ընտրողի աչքը բանայ։

ԴՕՔ. Լա՛ւ։ Եթէ դուք ենթադրում էք թէ դա համայնքին օգուտ կբերէ, թող այդպէս լինի. բայց առաջ ես եղբօրս հետ խօսեմ, յետոյ։

ՀՕՓՍ. Ցամենայն դէպս, ես հէնց այժմ կը սկսեմ մի առաջնորդող յօդուած գրել։ Եւ եթէ քաղաքագլուխը մերժի այդ գործն իր վրայ վերցնել։

ԴՕՔ. Միթէ դուք կարծում էք, որ նա այդպիսի բան կանէ։

ՀՕՓՍ. Օ՜, այդ բանի մէջ անկարելի ոչինչ չկայ—ու այն ժամանակ...

ԴՕՔ. Այն ժամանակ, ես ձեզ խոստանում եմ... Ահա ձեզ իմ յօդուածս. այն ժամանակ դուք կարող էք այդ յօդուածը տպել առանց փոփոխութեան։

ՀՕՓՍ. Այո՞, դուք խոստանո՞ւմ էք։

ԴՕՔ. (*Ձեռագիրը նրան տալով*) Ահա, վերցրէք։ Ցամենայն դէպս, դուք կարող էք դրան կարդալ. այն պայմանաւ, որ վերջն ինձ վերադարձնէք...

ՀՕՓՍ. Լաւ, թող ձեր ասած լինի, իսկ այժմ մնաք բարով, դօքտոր։

ԴՕՔՏ. Մնաք բարով, ցտեսութիւն։ Ա՛յ, կը տեսնէք, Հօֆստադ, բոլոր գործը հիանալի կերպով

կարգի կընկնի, առանց որևէ դժուարութեան։

ՀՕՓՍ. Հը՛մ, տեսնենք։ (*Բարեւում՝ է եւ գընում՝ նախասենեակի միջով*)։

ԴՕՔՏ. (*Գնում՝ է դէպի սեղանատուն եւ ղռնից նայում՝*) Կատերինա՛։ Ա՜ա, Պէտրա, դու արդէն վերադարձե՞լ ես։

ՊԷՏՐԱ. (*Մտնելով*) Այո՛, հէնց նոր եկայ ուսումնարանից։

ՏԻԿ. ՇՏՕԿ. (*Մտնելով*) Մի՞թէ նա դեռ չէ եկել։

ԴՕՔՏ. Պի՞տէրը։ Դեռ ոչ. բայց ես երկար խօսակցութիւն ունեցայ Հօֆստադի հետ. նա ոգևորութեամբ վերաբերուեց իմ գիւտին։ Գիտես, գործն անհամեմատ աւելի ծանր է, քան թէ ես ենթադրում էի առաջ։ Եւ եթէ պէտք լինի, նա իր լրագիրը դնում է իմ տրամադրութեան տակ։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Ի՜նչպէս, դու ուզում ես...

ԴՕՔՏ. Օ՜, ո՛չ։ Բայց էլի ուրախալի է, երբ գիտես որ անկախ և լուսաւոր մամուլը քո կողմն է։ Դեռ ուրիշ բան էլ կայ։ Ինձ այցելեց նոյնպէս „Տանտէրերի ընկերութեան“ նախագահը։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Ճշմարի՞տ. նա ի՞նչ է ուզում քեզանից։

ԴՕՔՏ. Նա ինձ առաջարկում է իր գործակցութիւնը։ Եթէ ընդհարումն պատահի, նրանք ինձ կօգնեն։ Եւ գիտես, Կատերինա, ինչ ոյժ կայ իմ կողմս։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Քո կո՞ղմդ. ուրիշ էլ ո՞վ կայ։

ԴՕՔՏ. Համերաշխ մեծամասնութիւնը։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Հա՜. Բայց արդեօք դա լա՞ւ է քեզ համար, Թոմաս։

ԴՕՔՏ. Լաւ է. վա՛հ, ի հարկէ։ (*Ցետ ու առաջ է ման գալիս, ձեռները շփելով*) Տէր Աստուած, ինչ երջանկութիւն է երբ զգում ես թէ այսպիսի եղբայրական կապով կապուած ես քո քաղաքացիների հետ։

ՊԷՏՐԱ. Եւ հնար ունիս նրանց օգտակար լինելու, հայրիկ։

ԴՕՔՏ. Այո, օգուտ տալ իր հայրենի քաղաքին։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Զանգակը քաշում են։

ԴՕՔՏ. Երևի նա է։ (*Դուռը ծեծում են*) Մտէք։ (*Քաղաքագլուխ Շտօկմանը մտնում է նախասենեակից*)։

ՔԱՂԱՔԱԳԼ. Բարև ձեզ։

ԴՕՔՏ. Ինչպէս ուրախ եմ քեզ տեսնելով, Պէտէր։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Բարի լոյս, ի՞նչպէս էք։

ՔԱՂԱՔԱԳԼ. Է՛հ, շնորհակալ եմ, ապրում ենք կամաց կամաց։ (*Դօքտօրին*) Ստացայ երէկ երեկոյեան քո յօդուածդ՝ խողովակների նոր սիստեմի և լողարանների մասին։

ԴՕՔՏ. Այո՞—կարդացի՞ր։

ՔԱՂԱՔԱԳԼ. Կարդացի։

ԴՕՔՏ. Հը՛, ի՞նչ կարծիքդ ի՞նչ է այդ հարցի մասին։

ՔԱՂԱՔԱԳԼ. Հը՜մ... (*Նայում է կանանց վրայ*)։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Գնա՛նք, Պետրա։ (*Հեռանում են ձախ դռնով*)։

ՔԱՂԱՔԱԳԼ. (*Լռութիւնից յետոյ*) Դու անհրաժեշտ ես համարել այդ բոլոր ուսումնասիրութիւններդ ինձնից ծածո՞ւկ անել։

ԴՕՔՏ. Այո, մինչև որ կատարելապէս համոզուեցի...

ՔԱՂԱՔԱԳԼ. Ուրեմն դու այժմ կատարելապէս համոզուե՞լ ես։

ԴՕՔ. Այո, կարծեմ որ իմ յօդուածս բաւական հաստատում է այդ բանը։

ՔԱՂԱՔԱԳԼ. Եւ դու մտադիր ես այս հետազօտութիւնն առաջարկել կառավարիչների յանձնաժողովին, իբրև մի պաշտօնական դօկումենտ։

ԴՕՔ. Ի հա՛րկէ, վերջապէս մի բան պէտք է ձեռնարկել։ Եւ որքան շուտ, այնքան լա՛ւ։

ՔԱՂԱՔԱԳԼ. Քո սովորութեան համեմատ, քո զեկուցման մէջ դու շատ խիստ ոճեր ես բանեցում։ Ի միջի այլոց դու ասում ես թէ մենք մեր այցելուներին առաջարկում ենք ոչ այլ ինչ, եթէ ոչ աննկատելի թոյն։

ԴՕՔ, Բայց ուրիշ ի՞նչ կերպ անուանել այդ, Պէտէր։ Մտածիր միայն.—թունաւորուած ջուր, որը գործ է ածւում թէ ներսից և թէ դրսից։ Եւ այդ ջուրը մենք տալիս ենք թշուառ հիւանդներին, որոնք

կատարեալ վստահութեամբ դիմում են մեզ և այնքան թանգ վճարում են մեզ իրենց բժշկութեան համար:

ՔԱՂԱՔԱԳԼ. Յետոյ, դուիբրև եզրակացութիւն՝ յայտնում ես որ մեզ անհրաժեշտ է մաքրիչ խողովակ շինել, որպէսզի Միլ-դէլը բոլոր վերոյիշեալ կեղտոտութիւններից մաքրուի և առաջարկում ես բոլոր խողովակների դիրքը փոխել:

ԴՕՔ. Ուրիշ ի՞նչ կարող էի առաջարկել. չգիտեմ։

ՔԱՂԱՔԱԳԼ. Այս առաւօտ, ուրիշ սուտ պատճառ բռնելով, ես մտայ մեր քաղաքային ինժինէրի մօտ և կէս-կատակով յիշեցի այն ձեռնարկութեան մասին, որը մենք կարող ենք ի նկատի ունենալ, մօտ կամ հեռու ապագայում։

ԴՕՔ. Մօտ կամ հեռու ապագայո՞ւմ։

ՔԱՂԱՔԱԳԼ. Նա, ի հարկէ, ծիծաղեց իմ խօսքերիս վրայ, նրանց ընդունելով խելացնոր երևակայութիւն։ Արդեօք նեղութի՞ւն ես քաշել մտածելու, թէ ո՞րքան կարժենան քո մտածած վերանորոգութիւններդ։ Ինժինէրի խօսքերից ես հասկացայ որ այդ բանի համար ծախսը կարող է հասնել մի քանի հարիւր հազար տալերների։

ԴՕՔ. Մի՞թէ այդքան շատ։

ՔԱՂԱՔԱԳԼ. Այո, պակաս չի լինի։ Բայց դեռ այդ չէ գլխաւորը. այդ վերանորոգութիւնները երկու տարուց պակաս չեն տևիլ:

ԴՕՔ. Ի՞նչպէս. ո՛չ պակաս քան երկու տարի՞..

ՔԱՂԱՔԱԳԼ. Այո, ամենաքիչը: Եւ այդպիսի մի ժամանակամիջոցում ի՞նչ կլինէր մեր լողարանների դրութիւնը։ Չէ՞ որ անկասկած, պէտք կլինէր փակել։ Էլ ո՞վ կգայ մեզ մօտ, եթէ լուր տարածուի թէ մեր ջուրը վարակուած է։

ԴՕՔ. Բայց չէ՞ որ դա՛ ճշմարիտ է, Պետէր. այդ ջուրն իսկապէս վարակուած է:

ՔԱՂԱՔԱԳԼ. Եւ այդ բոլորն ա՛յժմ—ա՛յժմ, երբ մեր լողարաններն այդպիսի ծաղկած դրութեան մէջ են։ Գիտե՞ս որ մեր դրացի քաղաքները նոյնպէս ձգտում են առողջապահական կենտրոններ համարուել։ Եւ դու կարծում ես թէ նրանք չե՞ն օգտուիլ այդ հանգամանքից որ դէպի իրենց գրաւեն մեր բոլոր յաճախորդներին. այն ժամանակ մենք աւազի վրայ կնստենք։ Շատ հաւանական է որ մենք ստիպուած կլինենք հրաժարուել այդ ձեռնարկութիւնից, որը մեզ կարող էր շատ թանգ նստել և դու կդառնայի՛ր միակ պատճառ քո հայրենի քաղաքի սնանկութեան։

ԴՕՔ. Ե՞ս, սնանկութեան պատճա՞ռ։

ՔԱՂԱՔԱԳԼ. Միայն այդ լողարանների շնորհիւ է որ մեր քաղաքը մի տեսակ ապագայ ունի։ Այդ բանը, ի հարկէ, դու այնպէս լաւ գիտես, ինչպէս և ես։

ԴՕՔ. Ուրեմն, քո կարծիքով, ի՞նչպէս պէտք վարուել:

ՔԱՂԱՔԱՊԼ. Ես դեռ բոլորովին համոզուած չեմ որ լողարանների ջուրն այնքան վատ է, որքան դու ես հաւատացնում քո զեկուցման մէջ։

ԴՕՔ. Բայց ասում եմ քեզ որ ամենեւին չափազանցութիւն չեմ արել. դեռ ամառը, տաք եղանակին աւելի վատ կլինի։

ՔԱՂԱՔԱՊԼ. Կրկնում եմ որ, ես համոզուած եմ թէ դու սաստիկ չափազանցացնում ես։ Փորձուած բժիշկը պէտք է կարողանայ յետ մղել վնասակար պայմանները և դիմադրել նրանց. այն դէպքում միայն, երբ նրանք շատ յայտնի կերպով աչքի են ընկնում։

ԴՕՔ. Ճշմարիտ։ Յետոյ։

ՔԱՂԱՔԱՊԼ. Խողովակների արդէն եղած այժմեան սիստեմն այնպիսի մի փաստ է, որին ձեռք չպէտք է տալ։ Բայց ժամանակի ընթացքում կառավարիչներն, երեւի, կհամաձայնեն քննել այն հարցը թէ արդեօք չէ՞ կարելի մի քանի նորոգութիւններ անել, այն էլ, ի հարկէ, առանց անմիտ նիւթական զոհաբերութիւնների։

ԴՕՔՏ. Եւ դու երեւակայում ես, թէ ես կըհամաձայնուեմ մասնակից լինել այդ տեսակ ստորութեան։

ՔԱՂԱՔԱՊԼ. Ստորութեա՞ն։

ԴՕՔՏ. Այո, դա կլինէր ստորութիւն, խաբէութիւն, սուտ, յանցանք—ամբողջ հասարակութեան դէմ։

ՔԱՂԱՔԱՊԼ. Կրկնում եմ, որ ես դեռ համոզուած չեմ, թէ մեր ջրերն անկասկած վտանգաւոր են։

ԴՕՔՏ. Ճշմարիտ չես խօսում. դու բոլորովին համոզուած ես։ Իմ առաջարկութիւններս չափազանց պարզ և համոզիչ են և քո սրտի խորքում դու զգում ես այդ, Պէտէր, բայց չես ուզում խոստովանել։ Դու չէ՞ր պնդում որ թէ լողարանները, թէ խողովակների սիստեմը այդպիսի ցած տեղում շինուի և հէնց այդ անիծեալ սխալը դու չես ուզում ուղղել, Վա՛. կամ գուցէ դու երեւակայում ես թէ ես պարզ չեմ տեսնում ի՛նչ ունիս մտքումդ դրած։

ՔԱՂԱՔԱՊԼ. Հէնց ասենք թէ այդպէս է։ Մի՞թէ իմ հայրենի քաղաքի բարօրութեան համար չէ՞, որ ես աշխատում եմ խնամքով պահպանել իմ բարի անունս։ Առանց բարոյական հեղինակութիւն ունենալու՝ ես անկարող կլինեմ ղեկավարել գործերն այն ուղղութեամբ, որն իմ համոզմունքով ամենաօգտակար է հասարակական բարօրութեան համար։ Թէ այդ և թէ ուրիշ շատ պատճառներով, ինձ համար շատ կարեւոր է որ քո զեկուցումդ չներկայացնուի կառավարիչների խորհրդին։ Ապագայում ես, ես ինքս կզարթեցնեմ այդ հարցը և մենք առանց աղմուկի կանենք, ինչ որ հնարաւոր է. և ո՛չ մի մի խօսք անգամ, այս չարաբաստիկ գործի մասին, չպէտքէ հասնի ժողովրդի ականջը։

ԴՕՔՏ. Բայց, սիրելի բարեկամս, այդ բանը ծածկել ուշ է։

ՔԱՂԱՔԱԳԼ. Պէտքէ ծածկել և կտեսնես որ կծածկուի։

ԴՕՔՏ. Կրկնում եմ, որ այդ անհնարին է. այդ մասին արդէն շատ շատերը գիտեն։

ՔԱՂԱՔԱԳԼ. Ի՞նչպէս. էլ ո՞վ գիտէ։ Միթէ այդ „Ժողովրդական Համբաւաբեր“ի աշխատակիցները խումբն է՞լ...

ԴՕՔՏ. Այո՛, ամեն բան նրանց յայտնի է։ Ազատամիտ, անկախ մամուլը պէտք է հետևի որ դու քո պարտաւորութիւնդ կատարես։

ՔԱՋԱՔԱԳԼ. (Կարճ լռութիւնից յետոյ). Դու զարմանալի՛ անհեռատես մարդ ես, Թոմաս։ Արդեօք մտածե՞լ ես թէ այդ տեսակ գործողութեան եղանակը ինչ հետևանքներ կունենայ քե՛զ համար։

ԴՕՔՏ Հետևանքնե՞ր. ինձ համա՞ր։

ՔԱՂԱՔԱԳԼ. Այո, քեզ և քո ընտանիքի համար։

ԴՕՔՏ. Գրողը տանի. ինչ ես ուզում ասել։

ՔԱՂԱՔԱԳԼ. Կարծեմ, ես միշտ ապացուցել եմ, որ պատրաստ եմ քեզ օգնելու։

ԴՕՔՏ. Այո, ճշմարիտ է. և ես շատ շնորհակալ եմ քո կարեկցութեան համար։

ՔԱՂԱՔԱԳԼ. Կարօտութիւն չունիմ քո շնորհակալութեանդ։ Մինչև որոշ աստիճան՝ ես բռնւած էի այդպէս վարուել, իմ անձնական շա-

հի համար. Օգնելով քեզ բարուոքել քո նիւթական դրութիւնդ, ես յոյս ունէի պահպանել քեզ որոշ սահմանների մէջ։

ԴՕՔՏ. Ի՞նչպէս, դու միայն անձնական շահերից դրդուած ես գործել։

ՔԱՂԱՔԱԳԼ. Կրկնում եմ—մինչև որոշ աստիճան։ Պաշտօնական դիրք ունեցող մարդու համար ծանր է, երբ նրա ամենամօտ ազգականն ինքըն իրեն վարկը ձգում է։

ԴՕՔՏ. Այո՞, ե՞ս եմ իմ վարկս ձգում։

ՔԱՂԱՔԱԳԼ. Այո, դժբախտաբար։ Քո ոգիդ, անհանգիստ է, կռուարար, խռովարար։ Մէկ դժբախտութիւն էլ ա՛յս, որ մի ցաւալի հակումն ունիս վազել դէպի մամուլը ամեն մի յարմար դէպքում, տեղի թէ անտեղի։ Հէնց որ մի միտք է ծագում գլխումդ, իսկոյն շտապում ես հրատարակել լրագրական յօդուածի միջոցով։

ԴՕՔՏ. Բայց մի՞թէ քաղաքացին պարտաւոր չէ հաղորդել հասարակութեան իր ամեն մի նոր միտքը։

ՔԱՂ.ՔԱԱԳԼ. Դատարկ բա՛ն։ Հասարակութիւնը կարօտ չէ նոր մտքերի։ Հասարակութիւնը աւելի լաւ է ապրում, վաղուց ընդունուած լաւ գաղափարներով։

ԴՕՔՏ. Սակայն պէտքէ խոստովանել որ դու անկեղծ ես խօսում։

ՔԱՂԱՔԱԳԼ. Այո՛, միանգամ ընդ միշտ

մենք, պէտք է միմեանց անկեղծ բացատրութիւն տանք։ Ես մինչև այժմ այդ բանից խուսափում էի, իմանալով որ դու շատ գրգռոտ ես, բայց այժմ, Թոմաս,ես քեզ բոլոր ճշմարտութիւնը պէտքէ ասեմ։ Դու չես հասկանում թէ ինչպէս քեզ վնասում ես քո սխալներով։ Դու գանգատւում ես տեղական իշխանութիւններից, նոյն իսկ կառավարութիւնից. դու նրանց հայհոյում ես և քեզ հալածանքի առարկայ ես համարում։ Բայց քո անտանելի բնաւորութեամբ դեռ ինչե՞ր չեն գալ քո գլուխը։

ԴՕՔՏ. Ա՜յ քեզ բան։ Ուրեմն ես անտանելի մարդ եմ էլի՜—քո կարծիքով։

ՔԱՂԱՔԱԳԼ. Այո, Թոմաս և քեզ հետ միասին գործել միանգամայն անկարելի է. այդ ես փորձով գիտեմ։ Դու ինձ վերաբերւում ես առանց որև է յարգանքի. մի տեսակ մոռանալով որ իմ շնորհիւ ես ստացել լողարանների գլխաւոր բժշկի պաշտօնը...

ԴՕՔ. Այդ պաշտօնը իրաւունքով ինձ էր պատկանում և բացի ինձանից ո՛չ ոքի։ Ե՛ս առաջին անգամ գտայ տեղական ջրի բուժիչ յատկութիւնը, դեռ այն ժամանակ, երբ ոչ ոքի մտքից չէր անցնում այդ բանը։ Ամբողջ տարիներ ես միայնակ մրցում էի իմ գաղափարի համար և միայն ես գրեցի ի պաշտպանութիւն այդ գաղափարի...

ՔԱՂԱՔԱԳԼ. Անկասկած։ Բայց այն ժամանակ այդ գաղափարի գործնական իրագործման բո-

պէն դեռ չէր հասած։ Ի հարկէ, դու չէիր կարող այդ հասկանալ այն հեռու խուլ անկիւնում, որտեղ դու ապրում էիր այն ժամանակ։ Եւ հէնց որ հասաւ բարեյաջող րոպէն, ես ուրիշների օգնութեամբ բոլոր գործն իմ ձեռս հաւաքեցի...

ԴՕՔՏ. Այո՛, և դու փչացրիր իմ ամբողջ գեղեցիկ նախագիծս։ Օ՜, այժմ մենք տեսնում ենք թէ ինչ տեսակ երևակայական իմաստուների դեր էիք խաղում այն ժամանակ, դուք ամենքդ։

ՔԱՂԱՔԱԳԼ. Իսկ ես տեսնում եմ որ դու կրկին ձգտում ես ելք գտնել քո ապստամբ ոգու համար։ Դու ուզում ես վիրաւորել այն մարդկանց,որոնք դիրքով քեզանից բարձր են. այդ հին փորացուդ ինձ վաղուց յայտնի է։ Դու քեզանից բարձր ո՛չ մի հեղինակութեան չես կարող հանդուրժել. դու ծուռ ես նայում նրա վրայ, ով քեզնից աւելի բարձր դիրք ունի. վերաբերւում ես նրան ինչպէս քո անձնական թշնամուդ և ամենայն տեսակ զէնք գործ ես ածում նրա դէմ։ Բայց այժմ արդէն ինձ համար պարզ է թէ որքան շատ բան է կախուած դրանից քաղաքի համար, հետևաբար և ինձ համար. Եւ քեզ նախազգուշացնում եմ Թոմաս. ես հաստատ պիտի կանգնեմ այն պահանջի վրայ, որը մտադիր եմ անել քեզ։

ԴՕՔՏ. Ի՞նչ պահանջ։

ՔԱՂԱՔԱԳԼ. Որովհետև դու այնքան անզգոյշ ես եղել որ կողմնակի անձինքների մօտ լեզուդ չես

պահել այդ փափուկ խնդրի մասին, որը պէտքէր թագցնել իբրև պաշտօնական գաղտնիք. Հետևաբար հասկանալի է որ այժմ այլ ևս անկարելի է թագցնել։ Ամեն տեղ զանազան լուրեր կտարածուեն և բամբասանքի շնորհիւ՝ լուրերը չափազանցացրած կլինեն։ Այդ պատճառով դու պարտաւոր ես հրապարակաւ հերքել այդ լուրերը։

ԴՕՔՏ.—Ե՞ս. հրապարակաւ հերքեմ։ Ես քեզ չեմ հասկանում։

ՔԱՂԱՔԱԳԼ. Մենք ցանկանում ենք որ յետագայ հետազօտութիւնների ժամանակ դու գաս այն եզրակացութեան թէ գործն իսկապէս այնքան լուրջ և շտապելի չէ, ինչպէս դու երևակայում էիր սկզբից։

ԴՕՔՏ. Ա՜ ա՛ ա՛, ահա՛ թէ ինչ էք կամենում դուք։

ՔԱՂԱՔԱԳԼ. Յետոյ, մենք ցանկանում ենք լսել քեզանից, որ դու հաւատացած ես թէ կառավարիչների յանձնաժողովը բարեխղճաբար գործ կդնի բոլոր միջոցները ամենայն տեսակ պակասութիւնները ուղղելու համար։

ԴՕՔՏ. Այո, բայց այդ չէ կարող կատարուել, մինչդեռ դուք գործը քաշ էք տալիս։ Կրկնում եմ, Պէտէր իմ խորին, անկեղծ համոզմունքս...

ՔԱՂԱՔԱԳԼ. Իբրև պաշտօնական անձն դու իրաւունք չունես հետևել որևէ անհատական, անձնական համոզմունքի։

ԴՕՔՏ. (*Բարկացած*) Իրաւունք չունեմ։

ՔԱՂԱՔԱԳԼ. Այո, իբրև պաշտօնական անձն, դու իրաւունք չունես։ Իբրև առանձին մարդ, ի հարկէ, ուրիշ բան է։ Բայց իբրև ստորադրեալ, պաշտօնական անձն՝ դու իրաւունք չունես արտայայտել այնպիսի համոզմունքներ, որոնք չեն համապատասխանում քո իշխանութեան հայեցուածքներին։

ԴՕՔՏ. Այդ արդէն չափն անցաւ։ Ի՞նչպէս, ես, բժիշկ, գիտութեան մարդ և իրաւունք չունեմ...

ՔԱՂԱՔԱԳԼ. Այն գործը, որի համար մենք խօսում ենք, միայն գիտութեան չէ վերաբերում։ Դա բարդ գործ է, որ ունի իր տեխնիքական և տնտեսական կողմերը...

ԴՕՔՏ. Գրողը տանի։ Վա՛հ։ Ինձ ի՞նչ։ Դա իմ ի՞նչ գործս է։ Փի՜։ Ես իրաւունք ունիմ իմ կարծիքս յայտնել աշխարհում գտնուած բոլոր առարկաների մասին։

ՔԱՂԱՔԱԳԼ. Որքան քէֆդ է. միայն ո՛չ լողարանների մասին։ Իսկ այդ գործի մէջ խառնուել մենք քեզ արգելում ենք։

ԴՕՔՏ. (*Որոտալից ձայնով*) Դո՛ւք արգելում էք... դո՛ւք...

ՔԱՂԱՔԱԳԼ. Այո, ես արգելում եմ—ես քո մեծդ եմ և դու պարտաւո՛ր ես ինձ հնազանդուել։

ԴՕՔՏ. (*Դժուարութեամբ իրեն զսպելով*) Աստուած վկայ, Պէտէր եթէ դու իմ եղբայրս չլինէիր...

ՊԷՏՐԱ. *(Դուռն արագ բանալով)* Դու այդ ցածութիւնը չես անիլ, հայրիկ։

ՏԻԿ. ՇՏՕԿ. *(Նրա ետեւից գալով)* Պէտրա, Պէտրա։

ՔԱՂԱՔԱԳԼ. Ա՜ա՛. ուրեմն դուք ծածուկ լսում էիք...

ՏԻԿ. ՇՏՕԿ. Տախտակի պատն այնքան բարակ է որ ակամայ...

ՊԷՏՐԱ. Ես դռան մօտ կանգնել էի և լսում էի դիտմամբ։

ՔԱՂԱՔԱԳԼ. Իսկապէս ինձ համար միևնոյն է...

ԴՕՔՏ. *(Մօտենալով նրան)* Դու ինձ ասում էիր ինչ որ արգելման և հնազանդութեան մասին։

ՔԱՂԱՔԱԳԼ. Դու ինքդ հարկադրեցիր ինձ՝ քեզ հետ այդպէս խօսել։

ԴՕՔՏ. Ուրեմն ի՞նչ պէտք է անեմ, ձեր կարծիքով. հրապարակաւ զղջա՛մ ստութեան մէջ։

ՔԱՂԱՔԱԳԼ. Մենք անհրաժեշտ ենք համարում, որ դու մի յօդուած տպագրես այն մտքով, ինչպէս ես բացատրեցի։

ԴՕՔՏ. Իսկ եթէ ես մերժեմ հնազանդուե՞լ։

ՔԱՂԱՔԱԳԼ. Այն ժամանակ մենք ինքներս կտպենք յօդուածը, ժողովրդին հանգստացնելու համար։

ԴՕՔՏ. Հիանալի։ Այդպիսի դէպքում ես էլ կը սկսեմ մամուլի միջոցով հերքել ձեր ասածը։ Ես իմ

նպատակիս կհասնեմ և կապացուցանեմ, որ ես իրաւացի եմ, իսկ դուք անիրաւ էք։ Այն ժամանակ դուք ի՞նչ կանէք։

ՔԱՂԱՔԱԳԼ. Այն ժամանակ *ես* ստիպուած կը լինեմ քեզ հրաժարեցնել։

ԴՕՔՏ. Ի՜նչ...

ՊԷՏՐԱ և ՏԻԿ. ՇՏՕԿ. *(Միաձայն)* Հրաժարեցնե՜լ...

ՔԱՂԱՔԱԳԼ. Այո, հրաժարեցնել քեզ լողարանների բժշկի պաշտօնից։ Ես ստիպուած կլինիմ ասել որ քեզ հրամայեն հրաժարական տալ։

ԴՕՔ. Դու չես համարձակուի այդ անել։

ՔԱՂԱՔԱԳԼ. Դու ինքդ չես այդ համարձակ խաղը սարքողը։

ՊԷՏՐԱ. Հօրեղբայր, և դուք չէ՞ք ամաչում այդպէս վարուել այնպիսի մի մարդու հետ, ինչպէս հայրս է։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Հանդարտուիր, Պէտրա։

ՔԱՂԱՔԱԳԼ. *(Նայելով Պէտրայի վրայ)* Ա՜ա՛. մենք արդէն մեր սեփական համոզմունքներն ունինք։ Ի հարկէ, ի՞նչպէս չէ։ *(Դառնալով դէպի տիկին Շտօկմանը)*։ Հարսս, ձեր ամբողջ ընտանիքի մէջ կարծեմ դուք ամենից խելացին էք։ Աշխատեցէք ազդել ձեր մարդու վրայ, աշխատեցէք պարզ ներկայացնել նրան այն դրութիւնը, որին նրա վարմունքը կենթարկի թէ ձեր ընտանիքը և թէ...

ԴՕՔ. Իմ ընտանիքը միմիայն ինձ է վերաբերում։

ՔԱՂԱՔԱՊԼ. Թէ նրա ընտանիքի, ասում եմ, և թէ նրա հայրենիքի բարօրութեան համար։

ԴՕՔ. Հայրենիքի բարօրութիւնն աւելի մօտ է իմ սրտին քան թէ ձեր։ Ես ցանկանում եմ հրապարակ հանել այն չարիքը, որը վաղ թէ ուշ անհրաժեշտ պէտք է լոյս աշխարհ գայ։ Այո, ես գործով ցոյց կտամ իմ սէրս դէպի հայրենի քաղաքս։

ՔԱՂԱՔԱՊԼ. Ինչպէս. դու, որ քո կոյր յամառութիւնով ուզում ես քաղաքը զրկել նրա բարեկեցութեան միակ աղբիւրից։

ԴՕՔ. Բայց քեզ ասում են որ այդ աղբիւրը թունաւորուած է։ Չես հասկանում։ Թէ խելքդ կորցրել ես։ Մեր բարեկեցութիւնը հիմնուած է անբարոյական, դատապարտելի սակարկութիւնների վրայ։ Մեր ամբողջ ծաղկած հասարակական կեանքը կառուցուած է ստի վրայ։

ՔԱՂԱՔԱՊԼ. Այդ բոլորը դատարկ զառանցանք են, դեռ աւելի վատ։ Մի մարդ որը թոյլ է տալիս իրեն այդպիսի վիրաւորական կերպով խօսել իր ծննդավայրի մասին, այդ մարդը հասարակութեան թշնամին է։

ԴՕՔ. Ինչպէս ես համարձակվում...

Տ. ՇՏԿ. (*Նրանց մէջտեղ ընկնելով*) Թոմաս...

ՊԷՏՐԱ. (*Հօր ձեռքը բռնելով*)։ Հանգստացիր, հայրիկ։

ՔԱՂԱՔԱՊԼ. Ես մտադիր չեմ ծեծի բռնութեան ենթարկուել։ Ես քեզ նախազգուշացրի և այդ բաւական է։ Մտածիր նրա մասին, ինչ որ քեզ թելադրում է պարտաւորութիւնդ—թէ քո անձիդ և թէ քո ընտանիքիդ վերաբերեալ։ (*Դուրս է գնում։*)

ԴՕՔ. (*Յետ ու առաջ ման գալով*) Այս տեսակ խօսքեր լսել և այն էլ սեփական տան մէջ։ Ինչպէ՞ս է երևում քեզ այդ, Կատերինա։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Այդ անտանելի է, Թոմաս...

ՊԷՏՐԱ Ինչպէ՞ս կցանկանայի ես հօրեղբօրս վճարել դրա փոխարէնը...

ԴՕՔ։ Ես ինքս եմ մեղաւորը։ Ես վաղուց պէտք է դրանց փուքը նստեցնէի։ Եւ նա ինձ ժողովրդի թշնամի անուանեց։ Ի՜նձ։ Ես չեմ համբերի դրան, Աստուած վկայ, չեմ համբերի։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Բայց Թոմաս, այնու ամենայնիւ, ոյժը եղբօրդ կողմն է։

ԴՕՔ. Այո, բայց իրաւունքն իմ կողմն է։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Էհ—ճշմարիտ։ Ի՞նչ կանես այդ իրաւունքը երբ քո կողմդ ոյժ չունիս։

ՊԷՏՐԱ. Մայրիկ, միթէ դու կարող ես այդպէս խօսել։

ԴՕՔ. Ի՞նչպէս, ի՞նչ հարկաւոր է իր կողմն ոյժ ունենալ, երբ ապրում ես ազատ հասարակութեան մէջ։ Խելքդ գլուխդ հաւաքիր, Կատերինա։ Բացի դրանից, միթէ իմ կողմս չէ՞ն ազատ մամուլը և հասարակութեան մեծամասնութիւնը։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Ի՞նչպէս, Թոմաս։ Մի՞թէ դու մտածում ես...

ԴՕՔՏ. Որ ի՞նչ։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Ես ուզում եմ ասել. միթէ դու մտադիր ես մրցել եղբօրդ հետ։

ԴՕՔ. Ուրիշ ի՞նչ է մնում անել եթէ ես կամենամ ճշմարտութիւնն ու արդարութիւնը պաշտպանել։

ՊԷՏՐԱ. Այո՛—ուրիշ ի՞նչ է մնում անել։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Բայց դրանից, ոչինչ չի դուրս գալ։ Նրանք էլի իրենց ուզածը կանեն։

ԴՕՔ. Հա, հա՛, կտեսնենք. ես քեզ կապացուցանեմ, որ կարող կլինեմ պաշտպանել այն, ինչ որ ճշմարտութիւն եմ համարում։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Այո, դու ասածիդ վրայ կպնդես, մինչև որ քեզ պաշտօնից կհեռացնեն և դրանով, ի հարկէ, ամեն բան կվերջանայ։

ԴՕՔ. Է՛հ, ի՞նչ անենք. գոնէ ես կըկատարեմ պարտքս դէպի քաղաքացիներս և դէպի հասարակութիւնը. այդ կըկատարեմ ես, որին անուանում են հասարակութեան թշնամի։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Բայց քո պարտաւորութի՞ւնդ դէպի քո ընտանիքդ, Թոմաս, դէպի մեզ ամենքս։ Մի՞թէ դու քեզ իրաւո՞ւնք ես համարում այդպէս վարուել նրանց վերաբերութեամբ, որոնք քեզանից կախումն ունեն։

ՊԷՏՐԱ. Օ՜, մայրիկ, միշտ, ամենից առաջ մեզ վրայ մի՛ մտածիր։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Այո, հեշտ է քեզ համար այդպէս խօսելը. կարօտութեան դէպքում դու քեզ կը պահպանես։ Բայց մտածիր երեխաների համար, Թոմաս, մտածիր մի քիչ քո մասին, նոյնպէս և իմ մասին...

ԴՕՔ. Խելքդ ո՞րտեղ է Կատերինա։ Ի՞նչպէս, ուզում ես որ ես վարուեմ ինչպէս մի զզուելի երկչոտ և հնազանդուեմ Պէտէրին իր բոլոր անիծուած խմբի հետ։ Եւ դու մի՞թէ կարծում ես, որ ես գէթ մի րոպէ հանգիստ կարող եմ լինել, այդպիսի վարմունքից յետոյ։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Չգիտեմ։ Բայց Աստուած ազատէ մեզ այն երջանկութիւնից, որը մեզ սպասում է, եթէ միայն դու սկսես այդ մրցումը։ Այն ժամանակ դու կրկին դատարկաձեռն կմնաս, առանց որ և է ամուր նիւթական նեցուկի։ Կարծեմ մենք բաւական նեղութիւն ենք քաշել արդէն մի ժամանակ։ Միտքդ բեր այն օրերը, Թոմաս, մտածիր մեզ սպասող բոլոր հետևանքների մասին։

ԴՕՔ. (*Դժուարութեամբ զսպելով իրեն եւ բռունցքները սեղմելով*)։ Եւ այդ տխմարներն ընդունակ են այդպիսի նեղութիւնների մէջ ձգել ազատ, ազնիւ մարդուն։ Մի՞թէ այս վրդովիչ չէ՞, Կատերինա։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Այո, նրանց վարմունքը քո դէմ անտանելի է։ Բայց ով չգիտէ որ աշխարհում շատ անարդարութիւններ կան, որոնց հետ հարկ է լինում հաշտուել։ Ահա մեր երեխաները. նայիր նր-

րանց վրայ, Թոմաս։ Ինչ կլինի նրանց վիճակը։ Օ՜, ո՛չ։ Դու երբէք չես վճռի...

(Հյլիֆ եւ Մօրտէն այդ միջոցին մտել են դպրոցական տետրակները ձեռներին)։

ԴՕՔ. Մեր երեխաները... *(Վճռական եւ հաստատ)*։ Երբէք, երբէք, եթէ ամբողջ աշխարհը քանդուի—ես իմ վիզս չեմ ծռի բռնութեան լծի տակ։ *(Գնում է դէպի իր սենեակը)*։

ՏԻԿ. ՇՏՕԿ. (Գնում է նրա ետեւից) Այպա, ի՞նչ ես ուզում անել, Թոմաս...

ԴՕՔ. (Շէմքում) Ես պէտք է իրաւունք ունենամ ապագայում իմ որդիների երեսին ուղիղ նայելու, երբ նրանք մեծանան, մարդ դառնան։ *(Գըրնում է իր սենեակը)*։

ՏԻԿ. ՇՏՕԿ. (Լալով) Տէր Աստուած, օգնիր մեր ամենքիս։

ՊԷՏՐԱ. Հայրս արդար է։ Նա երբէք չի համաձայնի սակարկութիւն անել։

(Երեխայք զարմացած հարցնում են թէ այդ բոլորն ինչ է նշանակում։ Պէտրան նրանց նշան է անում, որ լռեն)։

ԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

«Ժողովրդական Համբաւաբերի» խմբագրի սենեակը։ Յետին շարքում, ձախ կողմից դուռ, աջ կողմը—ապակեէ դուռ, որի միջով երեւում է տպարանը։ Սենեակի մէջ տեղը մեծ սեղան, վրան թափած թղթեր, գրքեր, լրագիրներ։ Ձախ կողմը պատուհան, պատուհանի կողքին գըրակալ, նրա մօտ էլ բարձր աթոռ։ Սեղանի մօտ երկու բազկաթոռներ։ Պատի երկարութեամբ մի քանի աթոռներ։ Սենեակը անհիւրընկալ և աղքատիկ տեսք ունի։ Կահ կարասիքը հին, բազկաթոռները կեղտոտ և քրքըրուած։ Տպարանում մի քանի գրաշարներ բանում են, հեռուում երեւում է տպագրական ձեռի մեքենան։

(Հօֆստադ նստած է գրքակալի մօտ եւ գրում է։ Աջ կողմից մտնում է Բիլլինգ, Դօքտ. Շտօկմանի ձեռագիրը ձեռին)։

ԲԻԼ. Այո՛, էլ պակաս տեղ չի՛ թողել...

ՀՕՖՍ. (Շարունակելով գրելը) Կարդացե՞ք ձեռագիրը։

ԲԻԼ. (Ձեռնագիրը գրքակալի վրայ դնելով) Այո, ամբողջապէս—սկզբից մինչև վերջը։

ՀՕՖՍ. Ճիշտ որ ուժեղ յօդուած է—այնպէս չէ՞։

ԲԻԼ. Ուժե՛ղ, ուժեղ, այո՛—Գրողը տանի, ըսքանչելի յօդուած է։ Դրա ամեն մի խօսքը մի մի մուրճի հարուած է։

ՀՕՖՍ. Բայց բոլոր այդ պարոնները առաջին անգամից անձնատուր չեն լինի։

ԲԻԼ. Այո, ճշմարիտ է. բայց մենք հարուած հարուածի ետեւից կհասցնենք։ Յօդուածը կարդալու միջոցին ինձ թւում էր թէ լսում եմ մօտեցող փոթորկի հեռու ճայթիւնները։

ՀՕՓՍ. Մ՛մ՛... Այնպէս արա, որ Ասլաքսէնը չլսի։

ԲԻԼ. (Ձայնը ցածացնելով)։ Ասլաքսէնը պզուելի երկչոտն է—բոլորովին զուրկ առնացի քաջութիւնից։ Բայց այս անգամ դուք ձեր ասածը կանէք, այնպէս չէ՞։ Դուք կտպագրէք դօքտոր Տոկմանի յօդուածը։

ՀՕՓՍ. Այո, եթէ քաղաքագլուխը ընդդէմ չը կանգնի։

ԲԻԼ. Օ՛, այդ շատ ցաւալի բան կլինի։

ՀՕՓՍ. Բայց ինչ որ էլ լինի, մենք կարող ենք գործերի ներկայ դրութիւնից օգուտ քաղել։ Եթէ քաղաքագլուխը չհամաձայնի դօքտորի առաջարկութեան հետ, նրա դէմ վեր կլկենայ բոլոր ստորին և միջին դասակարգը, „Տանտէրերի ընկերութեան„ բոլոր անդամները և այլն. իսկ եթէ նա կըհամաձայնուի, այն ժամանակ նրա վրայ կյարձակուեն արժեթղթերի բոլոր բաժանորդները, որոնք միշտ քաղաքագլխի գլխաւոր նեցուկն են եղել...

ԲԻԼ. Այո, ի հարկէ, չէ՞ որ այդ նորոգութեան համար նրանք ստիպուած կլինեն ահագին փողեր դնել մէջ տեղ...

ՀՕՓՍ. Այս՛. իսկ երբ դրանց կուսակցութիւնը

կքայքայուի, այն ժամանակ մենք օրըստօրէ կներշնչենք հասարակութեան, թէ քաղաքագլուխն անարժան է ամեն կողմից և թէ բոլոր գլխաւոր վարչական տեղերը—մի խօսքով ամբողջ ինքնավարական կառավարութիւնը պէտք է տալ ազատամիտ մարդկանց ձեռքը։

ԲԻԼ. Գլուխս մեռնի թէ ասածդ զուտ ճշմարտութիւն չլինի։ Այո, այո, ես այդ տեսնում եմ, որ մենք գտնւում ենք յեղափոխութեան նախընթաց օրում... րէվօլիւցիա...

(Դուռը ծեծում են)։

ՀՕՓՍ. Մ՛մ՛... *(Բարձր)*։ Մտէք։ *(Դօքտոր Տոկման մտնում է ձախ դռնից)*։

ՀՕՓՍ. (Նրան հանդէպ է գնում)։ Ահա և ինքը դօքտորը։ Ի՞նչ կհրամայէք։

ԴՕՔ. Տպեցէք յօդուածս, Հօֆստադ։

ՀՕՓՍ. Ահա, ուրեմն այդտե՞ղ է հասել։

ԲԻԼ. Ուռա՛։

ԴՕՔ. Տպագրեցէք ասում եմ ձեզ։ Ի հարկէ մինչև այդտեղ է հասել։ Եւ երբ նրանք ա՛յդ են ուզում, թող այդպէս լինի։ Պատերազմը յայտարարուած է, Բիլլինգ։

ԲԻԼ. Այո՛, այո՛ դօքտոր, պատերազմ է—կեա՛նք կամ մահ։

ԴՕՔ. Այդ յօդուածով պատերազմը միա՛յն ըսկսւում է։ Իմ գլխումս արդէն որոշուած է չորս

հինգ ուրիշ յօդուածների նախագիծը։ Բայց ո՞րտեղ էք թագցրել Ասլաքսէնին։

ԲԻԼ. (Մօտենում է տպարանին եւ կանչում). Ասլաքսէն, մի րոպէով մտէք մեզ մօտ։

ՀՕՖՍ. Դուք ասում էք որ արդէն որոշել էք չորս-հինգ յօդուածների նախագծե՞ր. և բոլորն էլ այդ նոյն նիւթի մասի՞ն։

ԴՕՔ. Օ՜, ոչ բարեկամս, ոչ, Նրանք բոլորովին ուրիշ նիւթերի են վերաբերում. բայց նրանք ամենքըն էլ խողովակների սիստեմի հարցի հետ յարաբերութիւն ունին։ Մի հարցից միւսն է ծագում։

ԲԻԼ. Գլուխս մեռնի թէ դուք իրաւացի չըլինէք։ Մարդ զգում է որ գործը չէ կարելի թողնել...

ԱՍԼԱՔ. (Տպարանից դուրս գալով). Հօ չէ՞ք մտածում, դօքտոր, լողարանների բոլոր շինութիւնները քանդել։

ՀՕՖՍ. Օ՜, ո՛չ, մի վախենաք։

ԴՕՔ. Ոչ, մենք բոլորովին ուրիշ բանի վրայ էինք խօսում։ Ի՞նչպէս է երեւում ձեզ իմ յօդուածը, Հօֆստադ։

ՀՕՖՍ. Ինչպէս է երեւո՞ւմ։ Ես գտնում եմ որ դա մի տեսակ «Գլուխ գործոց է»—chef d'oeuvre։

ԴՕՔ. Այո՞, ճշմարի՞տ։ Ինչպէս ուրախ եմ որ այդպէս էք մտածում։

ՀՕՖՍ. Նա այնպէս պարզ է և այնպէս ճիշտ հասնում է նպատակին... Հարկաւոր չէ անպատճառ

մասնագէտ լինել, գործի էութիւնը հասկանալու համար։ Ես չեմ կասկածում որ ամեն մի ինտելիգենտ մարդ ձեր կողմը կլինի։

ԱՍԼԱՔ. Նոյնպէս և զգոյշ մարդիկ, յուսամ։

ԲԻԼ. Թէ զգոյշները և թէ անզգոյշները, մի խօսքով—գրեթէ ամբողջ քաղաքը։

ԱՍԼԱՔ. Եթէ այդպէս է, ես կարծեմ կարող ենք տպել։

ԴՕՔ. Յոյս ունիմ։

ՀՕՖՍ. Յօդուածը դուրս կգայ վաղուան համարում։

ԴՕՔ. Այո, գրողը տանի, չպէտքէ և ոչ մի րոպէ անգամ կորցնել։ Լսեցէք, Ասլաքսէն, ի՞նչ էի ուզում ասել ձեզ, չէ՞ք համաձայնուի, արդեօք, յօդուածը տպագրել ձեր անձնական հսկողութեան ներքոյ։

ԱՍԼԱՔ. Ի հարկէ, կհամաձայնուեմ։

ԴՕՔ. Պահպանեցէք նրան ինչպէս մի գանձ, որ մէջը տպագրական սխալներ չմտնեն։ Ամեն մի բառը կարեւոր նշանակութիւն ունի։ Ես շուտով էլի կմտնեմ ձեզ մօտ. կարելի է արդէն առաջին սրբագրութեան թերթը պատրաստ կլինի։ Օ՜, եթէ իմանաք թէ ինչպէս եմ փափագում յօդուածը տպագրուած տեսնել։

ԲԻԼ. Այո, այդ յօդուածը կայծակի հարուածի տպաւորութիւն կանի։

ԴՕՔ. Եւ նա առաջարկւում է իւրաքանչիւր

ողջամիտ քաղաքացու դատողութեանը: Այո, դուք չգիտէք այն ամենն, ինչ որ ես կրել եմ այսօր։ Ի՜նչ սպառնալիքներ ասես չեն թափուել իմ գլխիս։ Ուզում են ինձ զրկել իմ օրինական իրաւունքներից…

ԲԻԼ. Ի՞նչպէս. մի՞թէ։

ԴՕՔ. … Ինձանից պահանջում էին որ ես ստորանամ և ցեխի հետ խառնուեմ, որ ես անձնական շահերը նախապատուեմ իմ ամենախոր և սրբազան համոզմունքներից…

ԲԻԼ. Գլուխս մեռնի, վա՛հ, այդ արդէն չափազանց անտանելի է։

ՀՕՓՍ. Ուրիշ ի՞նչ կարելի էր սպասել այդ պարոններից։

ԴՕՔ. Բայց երդվում եմ որ այդ բանը նրանց գլխին բարիք չի բերի։ Ես նրանց հետ ամենօրեայ կռիւ պէտք է վարեմ „Ժողովրդական համբաւաբերի“ մէջ, ես նրանց պէտք է ռմբակոծեմ համարձակ յօդուածներով։

ԱՍԼԱՔ, Այո, բայց մտածեցէք։

ԲԻԼ. Ուռա՛, պատերա՛զմ, պատերա՛զմ։

ԴՕՔ. Ես նրանց կնախատեմ, կճզմեմ, նրանց կ'ոչնչացնեմ՝ բոլոր ողջամիտ քաղաքացիների աչքում։ Այո, ես այդ կանեմ ։

ԱՍԼԱՔ. Բայց, գլխաւորապէս, չափաւոր եղէք, դօքտոր, զգոյշ գործեցէք…

ԲԻԼ. Ո՛չ, ո՛չ, ո՛չ։ Մի՛ խնայէք։

ԴՕՔ. Որովհետև այժմ խօսքը միայն մաքրիչ

խողովակների մասին չէ: Բոլոր հին հարստահարիչները պէտք հեռացնուեն. հասկանո՞ւմ էք։ Ինչ սքանչելի ապագայ է բացուել այսօր իմ աչքի առաջ. թէև դեռ ո՛չ ամեն բան պարզ է ինձ համար, բայց շուտով մառախուղը վերջնականապէս կհալածուի։

ԲԻԼ. Լսեցէք, լսեցէք։

ԴՕՔ Եւ եթէ միայն մենք միահոգի գործենք, ամեն բան հիանալի կարգի կընկնի։

ՀՕՓՍ. Իմ կողմից, ես ենթադրում եմ, որ մենք այժմ ամենայն հնարաւորութիւն ունինք՝ ինքնավարութեան գործերն արժանաւոր մարդկանց ձեռքը ձգելու։

ԱՍԼԱՔ. Եւ եթէ միայն մենք չափաւորութեամբ գործ տեսնենք, հազիւ թէ մեզ որևէ վըտանգ սպառնայ։

ԴՕՔ. Վերջապէս մեր ի՞նչ գործն է թէ վըտանգ կա՛յ թէ չէ, վա՛հ: Ա՛յն, ինչ որ ես անում եմ, անում եմ յանուն ճշմարտութեան և խղճով։

ՀՕՓՍ. Այո, դօքտոր, դուք այնպիսի մարդ էք, որի հետ կարելի է ձեռք ձեռքի տուած գնալ։

ԱՍԼԱՔ. Այո, անկասկած, բժիշկը, եթէ կարելի է այսպէս ասել—իսկական քաղաքացի է և հասարակութեան բարեկամը։

ԲԻԼ. Ո՜, ոչ միայն հասարակութեան, վա՛հ, այլ և ժողովրդի։

ԱՍԼԱՔ. Անկասկած „Տանտէրերի Ընկերութիւնը“ շուտով կտօնէ այդ օրը։

ԴՕՔ. *(Խոր յուզուած սեղմում է նրանց ձեռքերը)* Շնորհակալ եմ, ձեզանից, շնորհակալ եմ, իմ թանգագին, հաւատարիմ բարեկամներ. Ինչպէս ուրախալի է ինձ համար ձեր համակրութիւնը։ Իմ պատուելի եղբայրս ինձ ուրիշ անուն տուաւ։ Բայց համբերութիւն։ Ես նրա պարտքը կվճարեմ իւր շահով։ Բայց ժամանակ է գնալու իմ մի խեղճ հիւանդի մօտ։ Ես շուտով էլի կանցնեմ ձեզ մօտ։ Այդպէս ուրեմն. հոգացէք յօդուածի համար Ասլաքսէն և ի սէր Աստծոյ բաց չթողնէք և ոչ մի զարմացական նշան. դեռ եթէ կարող էք էլի աւելացրէք։ Իսկ առայժմ, մնաք բարև, ցտեսութիւն։ *(Փոխադարձ ողջոյն. ամենքը ճանապարհ են դնում նրան մինչև դուռը։ Դօքտորը դուրս է գնում)։*

ՀՕՓՍ. Դա մեզ համար մի անգին գիւտ է։

ԱՍԼԱՔ. Այո, մինչև այն ժամանակ, երբ կբաւականանայ լողարանների հարցով։ Բայց եթէ նա աւելի առաջ գնայ անմտութիւն կլինէր նրան հետևել։

ՀՕՓՍ. Հը՛մ, նայելով թէ...

ԲԻԼ. Դուք արդէն չափազանց վախկոտ մարդ էք Ասլաքսէն։

ԱՍԼԱՔ. Վախկոտ։ Այո, պարոն Բիլլինգ, երբ գործը վերաբերում է տեղական իշխանութիւնների վրայ յարձակուելուն, ես վախկոտ եմ, ճշմարիտ է։ Ուղիղն ասեմ, ես զգուշութեան վարժուել եմ, փորձի դպրոցում։ Բանը նրանումն է որ ես պարզ զգում

եմ իմ պարտականութեան չափը... Տեղական իշխանութեան ներկայացուցիչներին հեռացնել հեշտ է, բայց այդպիսի դէպքում իշխանութիւնը կարող է ընկնել անձեռնհաս մարդկանց ձեռքը, ի վնաս տանտէրերի և բոլոր մնացածների։

ՀՕՓՍ. Բայց ի՞նչ էք մտածում դուք ժողովրդի կրթութեան մասին, ինքնավարութեան միջոցով։

ԱՍԼԱՔ. Հօֆստադ, երբ մարդս կախուած է գործնական շահերից, նա չէ կարող ամեն բանի վրայ մտածել։

ՀՕՓՍ. Ուրեմն ես յոյս ունիմ որ երբէք կախումն չեմ ունենալ որև է գործնական շահերից։

ԲԻԼ. Լսեցէք, լսեցէք։

ԱՍԼԱՔ. *(Ժպտալով)* Հը՛մ *(Ցոյց տալով գըրքակալը)* Ստէնս-գարդը [1]) ձեզանից առաջ է նստել խմբագրական բազկաթոռի վրայ, իսկ այժմ երկրի կառավարիչն է։

ԲԻԼ. *(Թքելով դէպի կողքը)* Թիւ, դաւաճան։

ՀՕՓՍ. Իսկ ինչ որ՝ ինձ է վերաբերում, ես հողմացոյց չեմ և երբէք նրան չեմ նմանիլ։

ԱՍԼԱՔ. Հրապարակագրողը, պուբլիցիստը ոչ մի բանի համար երաշխաւոր չպէտք է լինի, Հօֆստադ։ Իսկ ինչ ձեզ է վերաբերում, Բիլլինգ, ձեզ իս-

---

ԾԱՆՕԹ. 1 Ստէնսգարդ—երկրի կառավարիչ, գլխաւոր գործող այն «Երիտասարդաց միութեան» մէջ, որտեղ մասնակցում էր Ասլաքսէն։

կապէս չի սազում այդպիսի յամառութիւնը։ Միթէ դո՞ւք չէք քարտուղարի պաշտօն որոնում քաղաքային խորհրդարանում։

ԲԻԼ. Ես...

ՀՕՓՍ. Միթէ այդ ճշմարիտ է, Բիլլինգ։

ԲԻԼ. Ասենք թէ... ի՞նչ կլինի որ.., բայց չէ որ. գրո՞ղը տանի, ես այդ անում եմ որ այդ տըխմարների հոգին հանեմ։

ԱՍԼԱՔ. Լա՛ւ, ասենք այդ ինձ վերաբերեալ չէ։ Բայց եթէ ինձ մեղադրում են թէ վախկոտ եմ և փոփոխամիտ, ես միայն մի բան կասեմ.—իմ քաղաքական մտքերս ոչ ոքի համար գաղտնիք չեն։ Ես ոչ մի բանով չեմ փոխուել, միայն, գուցէ, մի քիչ չափաւոր եմ դարձել։ Իմ սիրտս առաջուան պէս ժողովրդին է պատկանում, բայց այս մէկն էլ ես չեմ ուրանում որ իմ խելքս մնում է իշխանութեան կողմը, գոնէ տեղական իշխանութեան կողմը։ *(Գնում է տպարան)*։

ԲԻԼ. Ի՞նչպէս էք կարծում Հօփստադ, լաւ չէ՞ր լինի որ մենք դրանից ազատուէինք։

ՀՕՓՍ. Իսկ դուք ճանաչո՞ւմ էք մի ուրիշին որևիցէ մի մարդու, որը մեզ օգնէր նիւթապէս։

ԲԻԼ. Գրողը տանի։ Ի՞նչպէս մարդուն կաշկանդում է փողի պակասութիւնը։

ՀՕՓՍ. *(Նստելով իր տեղը)* Այո, թէ մենք փող կունենայինք...

ԲԻԼ. Ի՞նչ կլինի որ դիմէք դօքտոր Շտօկմանին։

ՀՕՓՍ. *(Թղթերը թերթելով)*։ Ի՞նչ դուրս կգայ։ Նա գրօշ չունի։

ԲԻԼ. Այո, ճիշտ է. բայց նրան ազգական է այն հարուստ մարդը, որին փորսող են անուանում։

ՀՕՍՓ. *(Գրում է)*։ Բայց դո՞ւք հաւատացա՞ծ էք, որ նա փող ունի։

ԲԻԼ. Այո, անկասկած, գլուխս մեռնի թէ սուտ ասեմ։ Եւ նրա հարստութեան մի մասն, ի հարկէ, պէտք է հասնի Շտօկմանի ընտանիքին։ Չէ՞ որ նա պարտական է նրանց ապահովացնել։ Գոնէ, երեխաների համար։

ՀՕՍՓ. *(Երեսը կիսովին դարձրած)*։ Ուրեմն դուք դրա վրայ յո՞յս ունիք։

ԲԻԼ. Յոյս ունի՞մ։ Ինչպէ՞ս եմ կարող յոյս ունենալ։

ՀՕՓՍ. Եւ աւելի լաւ է որ յոյս չունենաք այդ բանի վրայ նոյնպէս, ինչպէս և քարտուղարի պաշտօնի վրայ։ Կարող եմ ձեզ հաւատացնել, որ այդ տեղը չէք ստանալ։

ԲԻԼ. դուք կարծում էք թէ ես այդ չգիտեմ։ Ես էլ հէնց մերժումն եմ ցանկանում ստանալ։ Այդպիսի մերժումը գրգռում է դիմադրական ոգին, մաղձի նոր պաշար է աւելացնում. իսկ այդ անհրաժեշտ է այսպիսի մի անիծեալ տեղում, ուր շատ քիչ կան ոգեթութիւ շահեր։

ՀՕՓՍ. *(Գրում է)*. Այո, այո, ի հարկ է։

ԲԻՂ. Լաւ ուրեմն. նրանք շուտով կլսեն իմ մասին. իսկ այժմ ես գնում եմ գրգռիչ հրաւէր գրելու „Տանտէրերի ընկերութեան“: *(Գնում է սենեակը, դէպի աջ)*։

ՀՕՓՍ. *(Նստած է գրքակալի մօտ, գլուխը կռթում է եւ մրթմրթում)*. Հ՞ըմ, այ քեզ բան... *(Դուռը ծեծում են)*. Մտէք: *(Պէտրան մտնում է աջ դռնից)*. *(Վերկենալով)*. Ի՞նչպէս: Դո՞ւք, այստե՞ղ:

ՊԷՏՐԱ. Այո, ներեցէք որ ձեզ անհանգիստ եմ անում:

ՀՕՓՍ. *(Բազկաթոռ առաջարկելով)*. Բարեհաճեցէք նստել, խնդրեմ:

ՊԷՏՐԱ. Ո՛չ, շնորհակալ եմ, ես միայն մի րոպէով:

ՀՕՓՍ. Երևի, ձեր հօր յանձնարարութեամբ:

ՊԷՏՐԱ. Ոչ, ես իմ սեփական գործով եմ եկել: *(Վերարկուի գրպանից գիրքը հանելով)*. Ահա այն անգլիերէն հեղինակութիւնը, որը դուք ինձ տուել էիք:

ՀՕՓՍ. Բայց ինչո՞ւ էք վերադարձնում:

ՊԷՏՐԱ. Որովհետև չեմ կամենում թարգմանել:

ՀՕՓՍ. Բայց դուք խոստացաք...

ՊԷՏՐԱ. Այո, բայց այն ժամանակ գիրքը կարդացած չէի: Երևի դուք ինքներդ էլ չէիք կարդացել:

ՀՕՓՍ. Ո՛չ, ես անգլիերէն չգիտեմ...

ՊԷՏՐԱ. Այդ պատճառով էլ ես ձեզ ցանկանում էի ասել, որ մի ուրիշ բան պէտք է ընտրել:

(Գիրքը դնում է սեղանի վրայ). Սա չէ կարելի տպագրել «Ժողովրդական Համբաւաբերի մէջ»:

ՀՕՓՍ. Բայց ինչո՞ւ:

ՊԷՏՐԱ. Որովհետև այս հեղինակութիւնը հակասում է բոլոր ձեր համոզմունքներին...

ՀՕՓՍ. Ասենք, ինչ դրան է վերաբերում...

ՊԷՏՐԱ. Դուք իմ ասածը չհասկացաք:

ՀՕՓՍ. Հրատարակիչը միշտ չէ կարող իր ցանկացածի պէս վարուել: Մանր-մունր բաների մէջ միշտ հարկ է լինում զիջանել հասարակութեան ճաշակին: Եւ վերջապէս հասարակական կեանքում ամենագլխաւոր դերը խաղում է քաղաքականութիւնը, գոնէ լրագրի համար: Եւ եթէ ես ցանկանում եմ որ հասարակութիւնն ինձ հետևի անկախութեան և առաջադիմութեան ճանապարհով, ես պէտք չէ նրան վախեցնեմ: Ֆէլիէտոնի մէջ մի բարոյագատիկան զրոյց կարդալով հասարակութիւնն իրեն վտանգից ապահով կհամարի և բարեհաճութեամբ կվերաբերուի երեսի վերևի մասում գրածին:

ՊԷՏՐԱ. Չէ՞ք ամաչում: Դուք հօ կեղծաւոր չէք, որ թակարդ լարէք ձեր ընթերցողների համար: Դուք հօ սարդ չէ՞ք:

ՀՕՓՍ. Շնորհակալ եմ ձեր լաւ կարծիքի համար: Ճշմարիտն ասած այդ միտքն ինձ չէ պատկանում, այլ Բիլլինգին:

ՊԷՏՐԱ. Բիլլինգի՞ն:

ՀՕՓՍ. Այո, գոնէ նա այս օրերս այդ ոգով

էր խօսում։ Նա էր շատ ցանկանում այդ թարգմանութիւնը տպել լրագրում, ես այդ հեղինակութեան հետ մինչև անգամ ծանօթ չեմ։

ՊԷՏՐԱ. Բայց այդ ինչպէս է որ Բիլլինգն իր առաջադիմական մտքերով…

ՀՕՓՍ. Հ՞ըմ, Բիլլինգը բազմակողմանի մարդ է։ Ես լսել եմ որ նա աշխատում է քաղաքային խորհրդարանում քարտուղարի պաշտօն ստանալ։

ՊԷՏՐԱ. Դժուարանում եմ հաւատալ Հօփստադ։ Ինչպէս կարող էր նա այդ աստիճան ստորանալ։

ՀՕՓՍ. Այդ իրեն հարցրէք։

ՊԷՏՐԱ. Երբէք չէի սպասում Բիլլինգից…

ՀՕՓՍ. (*Անակընթարթ նայելով նրան*). Ճշմա՞րիտ։ Ճշմարի՞տ չէիք սպասում։

ՊԷՏՐԱ. Այո, բայց, էհ—չգիտեմ։ Ճշմարիտ, չգիտեմ։

ՀՕՓՍ. Ճշմարիտն ասած, մենք ժուռնալիստներս էլ մի մեծ արժէք չունենք։

ՊԷՏՐԱ. Դուք լրջօրէ՞ն էք խօսում։

ՀՕՓՍ. Այո, ինձ շատ անգամ է այդպէս թւում։

ՊԷՏՐԱ. Ի հարկէ ամենօրեայ մանր-մունր հանգամանքների մէջ… դժգոհութիւններ… ասենք հասկանալի է։ Բայց այժմ երբ դուք ձեզ վրայ էք վերցրել այնպիսի մի մեծ գործի պաշտպանութիւնը…

ՀՕՓՍ. Ձեր հօր գործի մասի՞ն էք խօսում։

ՊԷՏՐԱ. Այո, ի հարկէ։ Ինձ թւում է որ դուք

այժմ ձեզ պէտք է աւելի բարձր զգաք սինլքոր ամբոխից։

ՀՕՓՍ. Այո, ճիշտ, է ես այդպիսի մի բան զգում եմ այսօր։

ՊԷՏՐԱ. Այնպէս չէ՞։ Օ՜, ինչ փառաւոր ասպարէզ էք ընտրել դուք։ Մոռացուած ճշմարտութիւնների, ազնիւ մտքերի կարապետ լինե՜լ. աներկիւղ պաշտպանել ճնշուած մարդուն…

ՀՕՓՍ. Մանաւանդ ե՞րբ այդ մարդը… հը՛մ… Ես չգիտեմ թէ ինչպէս արտայայտեմ խօսքերով…

ՊԷՏՐԱ. Դուք երևի կամենում էք ասել թէ երբ նա այնքան արդար է և ուղղամիտ։

ՀՕՓՍ. (*Կիսաձայն*). Ես ուզում եմ ասել, երբ այդ մարդը—ձեր հայրն է…

ՊԷՏՐԱ. (*Ցնցուելով*). Ա՛յ քեզ բան։

ՀՕՓՍ. Այո, Պէտրա… Թանգագին Պէտրա։

ՊԷՏՐԱ. Ուրեմն, ահա թէ ի՞նչն է ձեզ համար ամենակարևորը և ոչ թէ իսկական գործը, ոչ թէ ճշմարտութիւնը և ոչ իմ հօրս մեծ և ազնիւ սիրտը։

ՀՕՓՍ. Օ՜, այդ էլ նոյնպէս, ի հարկէ։

ՊԷՏՐԱ. Բաւական է։ Դուք արդէն բաւական բացատրեցիք ձեր միտքը, պարոն Հօփստադ։ Այժմ ես արդէն երբէք և ո՛չ մի բանի մէջ աւելի չեմ կարող ձեզ հաւատալ։

ՀՕՓՍ. Եւ դուք այդպէս խիստ էք դէպի ինձ միայն այն պատճառով, որ ես ձեզ համար…

ՊԷՏՐԱ Ես նախատում եմ ձեզ նրա համար, որ դուք ուղղակի չէիք գործում իմ հօր վերաբերութեամբ: Դուք նրա վերաբերութեամբ խօսում էիք այնպէս, իբր թէ միայն ճշմարտութեան և հասարակական բարօրութեան վրայ էք մտածում: Դուք խաբեցիք մեր երկուսիս էլ—թէ հօրս, թէ ինձ... Դուք այն մարդը չէք, ինչ որ ցոյց էիք տալիս ձեզ և ես երբէք ձեզ չեմ ների, երբէք:

ՀՕՖՍ. Ձեզ չի վայելի այդպէս խիստ խօսել, մանաւանդ այժմ:

ՊԷՏՐԱ. Բայց ինչո՞ւ:

ՀՕՖՍ. Որովհետև ձեր հայրն առանց իմ պաշտպանութեան չէ կարող գլուխ դուրս բերել:

ՊԷՏՐԱ. *(Նայում է նրա վրայ արհամարհանքով)*. Ահա թէ ինչ մարդ էք դուք: Ոհ, ի՜նչ նախատինք:

ՀՕՖՍ. Ոչ, ոչ, այդ խօսքերը մտածուած չեն, մի հաւատաք դրանց:

ՊԷՏՐԱ. Ես այժմ գիտեմ թէ ինչ բանի պէտք է հաւատալ: Մնաք բարով: *(Ասլաքսէն գաղտնագողի ձեւով, շտապով դուրս է գալիս տպարանից)*:

ԱՍԼԱՔ. Գրողը տանի, Հօֆստադ: *(Նկատելով Պէտրային)* Ա՛հ...

ՊԷՏՐԱ. Ահա ձեր գիրքը: Մէկ ուրիշին տուէք թարգմանելու: *(Քայլերն ուղղում է դէպի գլխաւոր դուռը)*:

ՀՕՖՍ. *(Նրան հետեւելով)* Մի խօսք...

ՊԷՏՐԱ. Մնաք բարով: *(Գնում է)*:

ԱՍԼԱՔ. Լսեցէք, Հօֆստադ...

ՀՕՖՍ. Հը, ի՞նչ կայ:

ԱՍԼԱՔ. Քաղաքագլուխն այստեղ է, տպարանում...

ՀՕՖՍ. Քաղաքագլո՞ւխը:

ԱՍԼԱՔ. Այո, ուզում է ձեզ հետ խօսել: Գաւթի կողմից է եկել, չցանկանալով որ իրեն տեսնող լինի, հասկանո՞ւմ էք:

ՀՕՖՍ. Այս ի՞նչ կնշանակէ: Սպասեցէք, ես ինքս կըգնամ... *(Գնում է տպարանի կողմը, դուռը բանում է, գլուխ է տալիս եւ քաղաքագլխին հրաւիրում է մտնել)*: Նայեցէք, Ասլաքսէն որ ոչ ոք...

ԱՍԼԱՔ. Հասկանում եմ: *(Գնում է տպարան)*:

ՔԱՂԱՔԱԳԼ. Դուք չէ՞ք սպասում ինձ այստեղ տեսնել, պարոն Հօֆստադ:

ՀՕՖՍ. Այո, ճշմարիտ է, ես չէի սպասում:

ՔԱՂԱՔԱԳԼ. *(Շուրջը դիտելով)*: Ինչպէս կոկիկ է այստեղ, ձեզ մօտ, հիանալի է...

ՀՕՖՍ. Օ՜, ի՞նչ էք ասում, ներեցէք...

ՔԱՂԱՔԱԳԼ. Ես մտայ այստեղ առանց ձեր թոյլտուութիւնը խնդրելու և այժմ խլում եմ ձեր թանկագին ժամանակը...

ՀՕՖՍ. Խնդրեմ, շնորհ արէք. պատրաստ եմ ձեզ ծառայելու: Շնորհեցէք ինձ ձեր գլխարկն ու ձեռնափայտը: *(Առնում է եւ դնում է սեղանի*

վրայ): Խնդրեմ, համեցէք, նստեցէք:

ՔԱՂԱՔԱԳԼ. *(Նստելով սեղանի կողքին)* Շնորհակալ եմ: *(Հօֆստադը նոյնպէս նստում է սեղանի մօտ)*: Դուք ինչպէս տեսնում էք ես բոլորովին տանջուած եմ այսօր, պ. Հօֆստադ:

ՀՕՓՍ. Ճշմարիտ: Հասկանալի է ի հարկէ ի նկատի ունենալով ձեր բազմաթիւ պարտաւորութիւնները...

ՔԱՂԱՔԱԳԼ. Բայց նրանք չեն ինձ տանջել այսօր, այլ իմ եղբայրս—դօքտոր Շտօկմանը:

ՀՕՓՍ. Ճշմարիտ: Դօքտոր Շտօկմանը:

ՔԱՂԱՔԱԳԼ. Այ, նա մի ինչ որ մէմօրանդում է գրել կառավարիչների հասցէին, մեր լողարանների մասին ինչ որ երևակայական զանցառութիւններ են եղել իբր թէ...

ՀՕՓՍ. Մի՞թէ:

ՔԱՂԱՔԱԳԼ. Բայց մի՞թէ նա ձեզ չէ ասել: Իսկ ես ենթադրում էի թէ դուք գիտէք...

ՀՕՓՍ. Ախ, այո՛, յիշում եմ. նա ինչ որ մի բան ասում էր...

ԱՍԼԱՔ. *(Տպարանից)*: Հօֆստադ, խնդրեմ վերջապէս տուէք ինձ ձեռագիրը...

ՀՕՓՍ. *(Վշտացած)* Հը՛մ. այնտեղ է, գրքակալի վրայ:

ԱՍԼԱՔ. *(Գտնելով)* Ահա, գտայ:

ՔԱՂԱՔԱԳԼ. Բայց դա հէնց նա ինքն է...

ԱՍԼԱՔ. Այո, պարոն քաղաքագլուխ, սա դօքտորի յօդուածն է:

ՀՕՓՍ. Ա՜ ա՜, ուրեմն դուք այս րոպէին դրա համար էիք խօսում:

ՔԱՂԱՔԱԳԼ. Այո, ի հարկ է: Ձեր կարծիքն ի՞նչ է այդ յօդուածի մասին:

ՀՕՓՍ. Ես մասնագէտ չեմ և միայն կարողացայ այնպէս, վայր ի վերոյ, աչքի անցնել:

ՔԱՂԱՔԱԳԼ. Բայց այնու ամենայնիւ դուք կամենումէիք այդ տպագրել:

ՀՕՓՍ. Ես, հօ, չեմ կարող մերժել տպագրել մի տեղեկութիւն, որի տակ հեղինակն ստորագրուել է:

ԱՍԼԱՔ. Ինչ ինձ է վերաբերում, ես բոլորովին խառն չեմ լրագրի հրատարակութեան մէջ, պարոն քաղաքագլուխ:

ՔԱՂԱՔԱԳԼ. Ի հարկ է, ես այդ գիտեմ:

ԱՍԼԱՔ. Ես տպագրում եմ այն, ինչ որ ինձ տալիս են:

ՔԱՂԱՔԱԳԼ. Ի հարկէ, ի հարկէ:

ԱՍԼԱՔ. Այդ պատճառով ես պարտաւոր եմ... *(Քայլերն ուղղում է դէպի տպարանը)*:

ՔԱՂԱՔԱԳԼ. Մի րոպէ, պարոն Ասլաքսէն: Եթէ թոյլ կտաք, պարոն Հօֆստադ...

ՀՕՓՍ. Հրամայեցէք խնդրեմ, պարոն քաղաքագլուխ:

ՔԱՂԱՔԱԳԼ. Պարոն Ասլաքսէն—դուք մի ողջամիտ և խոհեմ մարդ էք:

ԱՍԼԱՔ. Շնորհակալ եմ ձեր լաւ կարծիքի համար, պարոն քաղաքագլուխ։

ՔԱՂԱՔԱԳԼ. Եւ քաղաքում մեծ ազդեցութիւն ունիք։

ԱՍԼԱ. Գլխաւորապէս հասարակութեան ստորին շրջաններում։

ՔԱՂԱՔԱԳԼ. Մանր հարկատուները թէ մեզ մօտ և թէ ամեն տեղ մեծամասնութիւնն են կազմում։

ԱՍԼԱ. Այո, ճիշտ է։

ՔԱՂԱՔԱԳԼ. Եւ ես չեմ կասկածում, որ ձեզ լաւ յայտնի է նրանց ընդհանուր տրամադրութիւնը։ Այնպէս չէ՞։

ԱՍԼԱՔ. Այո, ես այդ չեմ կարող ուրանալ պարոն քաղաքագլուխ։

ՔԱՂՔԱԳԼ. Այդպէս ուրեմն եթէ ամենաաղքատ քաղաքացիների մէջ տիրապետում է ինքնազոհութեան գովելի ոգին...

ԱՍԼԱՔ. Ի՞նչ էք կամենում ասել։

ՀՕՖՍ. Ինքնազոհութի՛ւն։

ՔԱՂԱՔԱԳԼ. Դա հասարակական տրամադրութեան ամենագեղեցիկ յատկութիւնն է. զարմանալու արժանի յատկութիւն։ Խոստովանում եմ, այդ իմ սպասածից աւել է։ Բայց ի հարկէ դուք աւելի աւելի լաւ կիմանաք հասարակութեան տրամադրութիւնը։

ԱՍԼԱՔ. Բայց... բայց... պարոն քաղաքագլուխ։

ՔԱՂԱՔՍԳԼ. Եւ անկասկած քաղաքի անելիք զոհը շատ նշանաւոր է։

ՀՕՖՍ. Ի՞նչպէս թէ քաղաքի...

ԱՍԼԱՔ. Բայց որքան ես հասկանում եմ, խօսքը լողարանների մասի՛ն է։

ՔԱՂԱՔԱԳԼ. Ինչպէ՛ս երևում է ընդհանուր գնահատութեան հաշուից, այն վերանորոգութիւնները, որոնց դօքտորը ցանկալի է համարում, կարժենան երկուսից մինչև երեք հարիւր հազար տալեր։

ԱՍԼԱՔ. Գումարը շատ նշանաւոր է, բայց...

ՔԱՂԱՔԱԳԼ. Ի հարկէ, պէտք կլինի ներքին փոխառութեան դիմել։

ՀՕՖՍ. (Վեր կենալով)։ Ինչպէս, դուք մտածում էք քաղաքը...

ԱՍԼԱՔ. Մի՞թէ դուք մտածում էք հարկերն աւելացնել. պակասեցնել ստորին դասակարգի առանց էն էլ աղքատիկ խնայողութիւնը։

ՔԱՂԱՔԱԳԼ. Բայց լաւ, սիրելի Ասլաքսէն, էլ ուրիշ որտեղից ճարենք անհրաժեշտ դրամագլուխը։

ԱՍԼԱՔ. Այդ մասին լողարանների բաժանորդները պէտք է հոգան։

ՔԱՂԱՔԱԳԼ. Բաժանորդներն անկարող են իրենց վրայ նոր ծախքեր վերցնել։

ԱՍԼԱՔ. Այդ բանի մէջ դուք կատարելապէս համոզուած էք, պարոն քաղաքագլուխ։

ՔԱՂԱՔԱԳԼ. Իմ տեղեկութիւններս բոլորովին

հաստատ են: Այդ պատճառով եթէ ցանկանան այդ ընդարձակ փոփոխութիւններն անել, ծախքերը պէտք է քաղաքն իր վրայ առնի։

ԱՍԼԱՔ. Օ՜, գրողը տանի... Ներեցէք խընդրեմ, բայց պ. Հօֆստադ, այդ հանգամանքը բոլորովին գործը փոխում է...

ՀՕՖՍ. Այո, ի հարկէ։

ՔԱՂ. Ամենավատն այդ է որ մենք պէտք լողարանները ծածկենք երկու տարի ժամանակով:

ՀՕՖՍ. Ի՞նչպէս, բոլորովի՞ն ծածկել։

ԱՍԼԱ. Ամբողջ երկու տարի՜...

ՔԱՂԱՔԱԳԼ. Այո, ամենաքիչը՝ երկու տարի ժամանակ է հարկաւոր աշխատութեան համար:

ԱՍԼԱՔ. Վա՜հ, գրողը տանի: Մենք չենք կարող դրան համաձայնել, պարոն քաղաքագլուխ: Ուրեմն մենք տանտէրերս ինչո՞վ պէտք է ապրենք այդ ժամանակամիջոցին։

ՔԱՂԱՔԱԳԼ. Դժուար է ասել, պարոն Ասլաքսէն. բայց ի՞նչ արած։ Մի՞թէ դուք կարող էք ենթադրել թէ մենք գոնէ մի այցելու կունենանք, եթէ սկսենք լուրեր տարածել, որ իբր թէ մեր ջուրը թունաւորուած է, լողարանների ամբողջ տարածութիւնը վարակուած է, ամբողջ քաղաքը...

ԱՍԼԱ. Եւ դուք կարծում էք թէ այդ բոլորը երեւակայութի՞ւն է։

ՔԱՂԱՔԱԳԼ. Ի սրտէ կցանկայի որ երեւակայութիւն լինէր, բայց փաստերը հակառակն են ցոյց տալիս։

ԱՍԼԱ. Եթէ այդպէս է, ուրեմն բոլորովին ներելի չէ դօքտոր Շտօկմանին... Ներեցէք, պարոն քաղաքագլուխ... բայց...

ՔԱՂԱՔԱԳԼ. Պէտք է խոստովանել որ դուք միայն ճշմարտութիւնն էք ասում, պարոն Ասլաքսէն։ Դժբախտաբար, իմ եղբայրս միշտ յայտնի է եղել իր անտեղի վարմունքներով:

ԱՍԼԱ. Իսկ դուք էլ ցանկանում էիք պաշտպանել նրան, Հօֆստադ...

ՀՕՖՍ. Բայց ո՞վ կարող էր կարծել...

ՔԱՂ. Ես մի կարճ զեկուցումն եմ պատրաստել այդ գործի համար՝ թէ ինչպէս պէտք է նայել դրա վրայ խելացի տեսակէտից։ Եւ ես ակնարկել եմ որ, անկասկած, բոլոր պակասութիւնները կարելի է հեռացնել այնպիսի միջոցներով, որոնք կարող են յարմարուել մեր լողարանների նիւթական դրութեանը։

ՀՕՖՍ. Այդ յօդուածն այժմ ձեզ մօտ է, պարոն քաղաքագլուխ:

ՔԱՂԱՔԱԳԼ. *Գրպանները փնտռում է*): Այո ես նրան վերցրել եմ, յամենայն դէպս, եթէ դուք...

ԱՍԼԱՔ. (*Շտապով*): Գրողը տանի. ահա նա ինքը։

ՔԱՂԱՔԱԳԼ. Ո՞վ, եղբա՞յրս։

ՀՕՖՍ. Ո՞ւր է, ո՞ւր։

ԱՍԼԱՔ. Նա գալիս է տպարանի միջով:

ՔԱՂՔԱԳԼ. Ափսոս. ես չեմ ցանկանում նրան պատահել այստեղ. միևնոյն ժամանակ, ես ձեզ հետ խօսելու բան ունիմ:

ՀՕՖՍ. (*Ցոյց տալով աջակողմեան դուռը*): Մտէք այդտեղ, մի րոպէով:

ՔԱՂ. Բայց... ինչպէս...

ՀՕՖՍ. Այնտեղ միայն Բիլլինգն է:

ԱՍԼ. Շտապեցէք, պարոն քաղաքագլուխ, նա այս րոպէիս կմտնի.

ՔԱՂ. Դէ լաւ: Աշխատեցէք նրանից շուտ պրծնել: (*Գնում է աջ դռնով, Ասլաքսէն դուռը բանում եւ ետեւից կրկին փակում է*):

ՀՕՖՍ. Այնպէս ձեւացրեք, Ասլաքսէն, իբր թէ շատ զբաղուած էք: (*Ինքը նստում է եւ գրում: Ասլաքսէնը քրքրում է սեղանի վրայի լրագրները, աջ կողմը*):

ԴՕՔ. (*Մտնելով տպարանից*): Ահա, ես կրկին մտայ ձեզ մօտ: (*Գլխարկը եւ ձեռնափայտը դնում է աթոռի վրայ*):

ՀՕՖՍ. Այդպէս շուտ, դոքտոր: (*Շարունակ գրում է*): Ասլաքսէն, շտապեցրէք այն գործը, որի մասին ձեզ հետ խօսեցինք: Այսօր մենք ժամանակ չպէտք է կորցնենք:

ԴՕՔ. (*Դիմելով Ասլաքսէնին*): Իսկ սրբագրութեան թերթը, կարծեմ դեռ պատրաստ չէ:

ԱՍԼ. (*Շարունակելով իր գործը*): Ո՛չ. միթէ դուք սպասում էիք այդպէս շուտ:

ԴՕՔ. Ի հարկէ, ո՛չ, բայց հասկանում էք իմ անհամբերութիւնս: Ես մի րոպէ հանգստութիւն չեմ ունենալու, մինչեւ չտեսնեմ յօդուածս տպագրուած:

ՀՕՖՍ. Հը՛մ, բայց դեռ երկար պէտք է սպասէք, դոքտոր. Այնպէս չէ՞, Ասլաքսէն:

ԱՍԼ. Այո, վախենում եմ որ այդպէս լինի:

ԴՕՔ. Լաւ, լաւ: Բարեկամներս. ես կրկին կմտնեմ, միանգամ էլ կգամ, երկու էլ—եթէ պէտք լինի: Երբ այդքան մեծ բան է դրուած հրապարակի վրայ—քաղաքի բարեկեցութիւնը—ուշացնելու տեղը չէ: (*Ուզում է գնալ, բայց կանգնում է եւ վերադառնում*) Ա՛հ, այո; ես ուզում էի ձեզ հետ մի ուրիշ բանի վրայ խօսել:

ՀՕՖՍ. Ներեցէք ինձ, չէ՞ կարելի արդեօք յետաձգել ուրիշ անգամի:

ԴՕՔ. Ես բոլորը բացատրեմ ձեզ երկու խօսքով: Ահա բանն ինչումն է.—երբ իմ համաքաղաքացիներս վաղը կկարդան իմ յօդուածս լրագրի մէջ և կիմանան որ ես անցեալ ամբողջ ձմեռն անց եմ կացրել քաղաքի բարօրութեան համար աշխատելով...

ՀՕՖՍ. Այո, բայց դոքտոր...

ԴՕՔ. Ես գիտեմ, ինչ էք ուզում ասել: Դուք կարծում էք որ ես միայն իմ պարտքս եմ կատարել, քաղաքացու պարտաւորութիւնը: Ի հարկէ, այդ ես էլ գիտեմ: Բայց գիտէք, իմ քաղաքացիներս—

Աստուած նրանց հետ—ինձ վրայ այնպիսի մեծ կարծիք ունէին...

ԱՍԼ. Այո, ճիշտ է, դօքտոր. մինչև այժմ ձեր մասին շատ մեծ կարծիք ունէին:

ԴՕՔ. Ահա, իսկապէս ինչու եմ ես վախենում... վախենում եմ որ երբ նրանք այս բոլորն իմանան—մանաւանդ աղքատ դասակարգը—և երբ քաղաքի գործերն իրենց ձեռքը ձգեն...

ՀՕՓՍ. (*Վեր կենալով*)։ Այո, դօքտոր չեմ թագցնի ձեզանից, որ...

ԴՕՔՏ. Ա՜ ա՜։ Ես այդպէս էլ կարծում էի որ մի բան սարքւում է։ Բայց ես լսել անգամ չեմ ուզում։ Եթէ նրանք մի բան են անցկացնում մտքներից...

ՀՕՓՍ. Այսինքն ի՞նչ։

ԴՕՔ. Ա՜յ, այնպէս, դրօշակներով հանդէս, կամ ընդհանրական ճաշ, կամ ստորագրութիւն, վերջապէս ինչ ուզում է լինի, խօստացէք ինձ որ թոյլ չէք տալ։ Դուք նոյնպէս, Ասլաքսէն, լսո՞ւմ էք։

ՀՕՓՍ. Ներեցէք ինձ, բժիշկ, բայց աւելի լաւ է որ ձեզ ասեմ ճշմարտութիւնն սկզբից մինչև վերջ։ (*Մտնում է Տիկին Շտօկման*)։

ՏԻԿ. ՇՏՕԿ. (*Բժշկին տեսնելով*). Ա՜ ա. ես այդպէս էլ գիտէի։

ՀՕՓՍ. (*Գնում է նրա հանդէպ*). Տիկին Շտօկմանը նոյնպէս...

ԴՕՔ. Քե՞զ ինչ գործ ունիս այստեղ, Կատերինա։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Դու շատ լաւ գիտես թէ ինչու եմ եկել։

ՀՕՓՍ. Խնդրեմ համեցէք։ Կամ գուցէ...

ՏԻԿ. ՇՏՕԿ. Շնորհակալ եմ, անհանգիստ մի լինէք և չհայհոյէք ինձ որ ես եկել եմ այստեղ ամուսնուս ետևից։ Մտաբերեցէք որ ես երեք հատ զաւակներ ունեմ։

ԴՕՔ. Ի՞նչ ես դուրս տալիս։ Այդ մենք ամենքս շատ լաւ գիտենք։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Չի երևում որ դու այս րոպէիս հոգալիս լինես քո կնոջ և երեխաների համար. թէ չէ այն ժամանակ դու չէիր վճռի մեզ ամենքիս դժբախտացնել։

ԴՕՔ. Գժուե՞լ ես, ի՞նչ է, Կատերինա։ Կամ միթէ մի մարդ որ կին ու զաւակներ ունի չէ՞ կարող բացարձակ քարոզել ճշմարտութիւնը, չէ՞ կարող գործունեայ և օգտակար քաղաքացի լինել, կատարել իր պարտաւորութիւնը դէպի այն քաղաքը, ո՛րտեղ ապրում է։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Այո՛, բայց չափաւորութեան ոգով, Թոմաս։

ԱՍԼ. Իսկ և իսկ, միևնոյնն եմ ասում ես, միշտ. չափաւորութիւն—ամեն բանի մէջ։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Դուք մեզ մեծ չարիք էք հասցնում, պարոն Հօֆստադ, ամուսնուս ընտանիքից և տնից սառեցնելով և այդ կերպ նրան յիմարացնելով...

ՀՕՓՍ. Ես ո՛չ ոքի չեմ յիմարացրել։

ԴՕՔ. Այդ քնձ, քնձ։ Եւ դու կարծում ես թէ ես թոյլ կտամ որ ինձ յիմարացնեն։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Այո, դու արդէն թոյլ ես տուել։ Ես գիտեմ, Թոմաս, որ դու ամենախելօք մարդն ես ամբողջ քաղաքում։ Բայց քեզ հեշտ է խաբել։ *(Դառնալով Հօփստադին)*. Յիշեցէք որ նա կզրկուի լողարանների բժշկի պաշտօնից, եթէ դուք նրա յօդուածը տպէք...

ԱՍԼ. Ի՞նչպէս։

ՀՕՓՍ. Բայց իսկապէս դօքտոր...

ԴՕՔ. *(Ծիծաղելով)*. Հա՛, հա՛. Թող փորձեն։ Ոչ սիրելիս, նրանք այդ բանն անելուց առաջ երկու անգամ կմտածեն։ Գիտես, իմ կողմս է համերաշխ բազմութիւնը։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Հէնց ցաւն էլ այդ է, որ դու գլուխդ դրել ես դրանց ամենքի հետ։

ԴՕՔ. Դատարկ բան է, Կատերինա, գնա տուն և տնային գործերով զբաղուիր, իսկ ինձ թող որ հասարակական գործերով զբաղուեմ։ Ինչպէս ես կարողանում դու այդպէս վախենալ, երբ տեսնում ես ինձ հանգիստ և բախտաւոր։ *(Ձեռները շփելով յետ ու առաջ է ման գալիս)*. Կհասնի այն օրը, երբ յաղթութիւնը ճշմարտութեան և ժողովրդի կողմը կլինի։ Դրա մէջ կասկած չկայ. այո՛։ Ես պարզ աչքով տեսնում եմ դէմօկրատիայի յաղթութիւնը...

(Կանգ առնելով աթոռի կողքին)։ Ա՞յս ինչ է, գրողը տանի։

ԱՍԼ. *(Աչքով նշան հանեում էր)*. Վա՛յ, Տէր Աստուած։

ՀՕՓՍ. *(Միաժամանակ)*. Հ՜ըմ...

ԴՕՔ. Բայց սա վարչական իշխանութեան գլուխն է այստեղ. *(Զգուշութեամբ մատերի ծայրերով բռնում է քաղաքագլխի գլխարկը և բարձրացնում)*։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Քաղաքագլխի գլխարկը...

ԴՕՔ. Ահա, այս էլ պաշտօնական գայիսոնը։ Բայց սա ինչպէս է ընկել այստեղ, գրողը տանի։

ՀՕՓՍ. Այժմ, արդէն կասեմ ձեզ։

ԴՕՔ. Ա՜ ա՛ ա՛, հասկանում եմ. նա եկել է ձեզ հետ զրոյց անելու, հա, հա, շատ էլ յաջող ժամանակի չէ պատահել և հէնց որ ինձ նկատել է տպարանում... *(Սաստիկ ծիծաղելով)*, փախել է, այնպէս չէ՞, Ասլաքսէն։

ԱՍԼ. *(Շտապով)*. Այո, ա՛յո, հէնց այդպէս, նա փախաւ, դօքտոր։

ԴՕՔ. Եւ շտապելուց մոռացել է իր ձեռնափայտն ու... Ո՛չ, դատարկ բաներ են։ Պետերը երբեք փախած չէ մարդկանցից։ Բայց, գրողը տանի, ո՞րտեղ էք դուք թագցրել նրան։ Ա՜ ա՛ ա՛, նա, ի հարկէ, այստեղ կլինի։ Ահա կտեսնես, ճիշտ եմ ասում թէ չէ, Կատերինա։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Թոմաս... Թոմաս... Աղաչում եմ քեզ։

ԱՍԼ. Չգի՛տ, դօքտոր: *(Դօքտօր Շտօկմանը հագնում է քաղաքագլխի գլխարկը եւ նրա ձեռնափայտն առնում է իր ձեռքը, յետոյ մօտենում է դռանը, երկու կրնկների վրայ դուռը բանում է բոլորովին եւ զինուորական ձեւով կանգնած յարգանք է ցոյց տալիս քաղաքագլխին: Քաղաքագլուխը ներս է գալիս, բարկութիւնից կարմրած, նրա ետեւից գալիս է Բիլլինգը:)*

ԲԱՂ. Ի՞նչ է նշանակում այս բոլոր խելացընորութիւնը:

ԴՕՔ. Պատիւ տուր ինձ և ճանապարհս մի կտրիր, ամենասիրելի Պետեր. այժմ ես եմ քաղաքի մէջ առաջին իշխանը: *(Հանդիսաւոր ընթացքով, տակտով, ման է գալիս յետ ու առաջ)*:

ՏԻԿ. ՇՏՕԿ. Ա՛խ, Թոմաս...

ԲԱՂ. *(Նրան հետեւելով)*. Տուր ինձ գլխարկս ու փայտս:

ԴՕՔ. *(Առաջուան պէս)*. Ես—քաղաքագլուխ եմ. ասում եմ քեզ որ ես եմ ամբողջ քաղաքի հրամանատարը:

ԲԱՂ. Հանիր այս րոպէին իմ գլխարկս. Մի մոռանալ որ դա պաշտօնական գլխարկ է օրէնքով շնորհուած:

ԴՕՔ. Դատարկ բան է: Չլինի թէ կարծում ես որ քո պաշտօնական գլխարկդ ինձ կվախեցնի: Իմացիր ուրեմն—վաղն և եթ ամեն բան կփոխուի: Դու ինձ սպառնում էիր պաշտօնիցս հեռացնել.

բայց այժմ ես քեզ կհրաժարեցնեմ քո բոլոր պաշտօններից: Հ՛ը, կարծում ես թէ չե՞մ կարող այդ անել: Սխալվում ես: Հօֆստադը և Բիլլինգը քեզ կռմբակոծեն „Ժողովրդական Համբաւաբերի“ մէջ, Ասլաքսէն կսկսի մրցել բոլոր տանտէրերի ընկերութեան գլուխն անցած...

ԱՍԼ. Ես... ո՛չ... դօքտոր...

ԴՕՔ. Մի՞թէ—դուք...

ԲԱՂ. Ա՜ա ա. գուցէ պարոն Հօֆստադը վերջ ի վերջոյ կցանկանայ մասնակցել խռովարարութեանը:

ՀՕՖՍ. Ի հարկէ ոչ, պարոն քաղաքագլուխ:

ԱՍԼ. Ո՛չ, Հօֆստադն այնքան անմիտ չէ որ կորցնէ թէ իրեն և թէ լրագիրը, մի ինչ որ դատարկ երևակայութեան համար:

ԴՕՔ. Բայց ի՞նչ է նշանակում այս բոլորը:

ՀՕՖՍ. Դուք ձեր գործին սուտ կերպարանք էք տուել, դօքտոր, այդ պատճառով ես չեմ կարող ձեզ պաշտպանութիւն ցոյց տալ:

ԲԻԼ. Եւ այն բոլոր բացատրութիւններից յետոյ, որ պարոն քաղաքագլուխը բարեհաճեց ինձ տալ, ես...

ԴՕՔ. Սուտ կերպարա՞նք: Բայց չէ՞ որ ես պատասխանատու եմ իմ արածին: Միայն տպագրեցէք իմ յօդուածս և ես բոլորը կհաստատեմ, սկզբից մինչև վերջին խօսքը:

ՀՕՖՍ. Ես չեմ տպագրի այդ յօդուածը: Չեմ կարող և չեմ համարձակուի տպագրել:

ԴՕՔ. Չէք համարձակուէ՛լ։ Ի՞նչ դատարկ բաներ էք ասում։ Դուք խմբագիր էք. պէտք է ենթադրել որ խմբագիրն է իր լրագրին ուղղութիւն տալիս։

ԱՍԼԱՔ. Ոչ, դոքտոր, ոչ թէ խմբագիրը, այլ ընթերցողները։

ԲԻԼ. Այո, բարեբաղդաբար այդ ճշմարիտ է։

ԱՍԼԱՔ. Այո, հասարակաց կարծիքը, ինտելլիգենտ մեծամասնութիւնը, տանտէրերը և այլն— ահա թէ որոնք են ուղղութիւն տալիս լրագրին։

ԴՕՔ. Եւ այդ բոլոր ոյժերն իմ դէմ են։

ԱՍԼԱՔ. Այո՛, անկասկած։ Ձեր յօդուածը տըպագրել—այդ կնշանակէր քաղաքը քանդել։

ԴՕՔ. Ճշմարի՛տ։

ՔԱՂԱՔԱԳԼ. Դէ տուր գլխարկս ու փայտս։ (*Դօքտօրը վերցնում՝ է գլխարկը եւ դնում՝ աթոռի վրայ, ձեռնափայտի հետ միասին։ Քաղաքագլուխը նրկուսն էլ վերցնում՝ է*)։ Ինչպէս տեսնում ես քո սպառնալիքը բաւական անժամանակ է։

ԴՕՔ. Կտեսնենք։ (*Դառնալով Հօֆստադին։*) Այդպէս ուրեմն, իմ յօդուածս „Ժողովրդական համբաւաբերի" մէջ տպագրելն անհնարի՞ն է։

ՀՕՓՍ. Բոլորովին անհնարին. եթէ ուրիշ պատճառներ էլ չլինեն, գոնէ հէնց ձեր ընտանիքի շահերի համար...

ՏԻԿ. ՇՏՕԿ. Օ՜, խնդրում եմ ձեզ պ. Հօֆստադ, դուք նրա ընտանիքն ի նկատի մի ունենաք։

ՔԱՂԱՔԱԳԼ. (*Ձեռագիրը հանում է իր գըրպանից*)։ Երբ սա կտպագրուի, հասարակութիւնը բոլոր կարեւոր տեղեկութիւնները կստանայ. սա փաստերի ամենաճիշտ բացատրութիւնն է։ Ահա, վերցրէք։

ՀՕՓՍ. (*Վերցնում՝ է ձեռագիրը*)։ Շատ լաւ։ Ձեր յօդուածն ի հարկէ կտպագրուի։

ԴՕՔ. Ի՞նչպէս։ Իսկ ինձ մերժո՞ւմ էք։ Եւ դուք այդ լռութեան դաւադրութեամբ ենթադրում էք խեղդել ինձ և ճշմարտութի՜ւնը։ Բայց դա այնքան էլ հեշտ չէ։ Պարոն Ասլաքսէն, նեղութիւն չէ՞ք քաշի արդեօք իմ յօդուածս տպագրել առանձին տետրակով։ Ես ձեզ կվճարեմ և ինքս իմ սեփական հրատարակիչս կլինեմ։ Ինձ հարկաւոր է 500 կամ 600 օրինակ։

ԱՍԼԱՔ. Ոչ, ներեցէք։ Եթէ դուք ինձ յօդուածի կշռով ոսկի անգամ տայիք էլի ես չէի համաձայնուիլ օգնել այդ տեսակ մի նպատակին, դոքտոր։ Ես չեմ կարող հասարակաց կարծիքին հակառակ գնալ և ամբողջ քաղաքում ոչ ոք չի համաձայնի ձեր յօդուածը տպել։

ԴՕՔ. Ուրեմն վերադարձրէք ինձ։

ՀՕՓՍ. (*Ձեռագիրը յանձնելով նրան*)։ Համեցէք։

ԴՕՔ. (*Վերցնում՝ է իր գլխարկն ու փայտը*)։ Միեւնոյն է. սա յայտնի կդառնայ հասարակութեան։ Ես սրան կկարդամ հասարակական ժողովում և իմ

բոլոր քաղաքացիներս կըլսեն ճշմարտութեան ձայնը։

ՔԱՂԱՔԱՊԼ. Ոչ մի հասարակութիւն, ամբողջ քաղաքի մէջ, չի համաձայնի քեզ դահլիճ տալ, այդպիսի մի նպատակի համար։

ԱՍԼԱՔ. Ի հարկէ, ոչ ոք չի համաձայնուիլ։

ԲԻԼ. Ի հարկէ, ո՛չ. գլուխս մեռնի թէ մէկը համաձայնի:

ՏԻԿ. ՇՏՕԿ. Այդ չափազանց վրդովելի կըլինէր։ Եւ ինչո՞ւ համար ամենքն էլ այսպէս զինուած են քո դէմ։

ԴՕՔ. (*Բորբոքուած*) Ինչո՞ւ: Կասեմ քեզ ինչու։ Որովհետեւ այս քաղաքի բոլոր տղամարդիկը պառաւքավթառներ են—քեզ նման։ Նրանք ամենքն էլ միայն իրենց ընտանիքների համար են մտածում և ոչ թէ հասարակական բարօրութեան։

ՏԻԿ. ՇՏՕԿ. (*Վերցնում է մարդու թեւը*)։ Ուրեմն ես ցոյց կտամ, որ քավթառ—պառաւը երբեմն կարող է տղամարդ դառնալ. որովհետեւ ես այժմ իմ խօսքիս տէրը կլինեմ, Թոմաս։

ԴՕՔ. Ի՜նչ լաւ ասացիր, Կատերինա։ Երդւում եմ. ճշմարտութիւնը կյաղթի։ Եթէ ինձ դահլիճ չտան ես վարձով մի թմբուկ կվերցնեմ, ման կգամ ամբողջ քաղաքը և կկարդամ իմ յօդուածս բոլոր փողոցների անկիւններում։

ՔԱՂՔԱԱՊԼ. Յուսամ, որ դեռ այդ աստիճանի չես գժուել։

ԴՕՔ. Ի զուր է յոյսդ:

ԱՍԼԱՔ. Ամբողջ քաղաքում ոչ ոք չի համաձայնի ձեզ հետ գալ։

ԲԻԼ. Ի հարկէ ոչ—գլուխս մեռնի։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Մի յուսահատուիլ, Թոմաս, ես մեր երեխաներին կուղարկեմ քեզ հետ:

ԴՕՔ. Ա՜յ հիանալի միտք։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Մորտէնը ցնծալով կըգնայ, Էյլիֆն էլ ի հարկ է նոյնպէս։

ԴՕՔ. Ի հարկէ—Պետրան նոյնպէս։ Հէնց դուինքդ էլ, Կատերինա։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Ոչ, իմ տեղս այնտեղ չէ։ Ես տանը կմնամ և ձեր ետեւից կնայեմ պատուհանից։

ԴՕՔ. (*Գրկելով եւ համբուրելով նրան*). Շընորհակալ եմ քեզանից, շնորհակալ եմ: Այժմ մեծապատիւ պարոնայք, մենք պատրաստ ենք մրցելու։ Այժմ տեսնենք կարո՞ղ է արդեօք ձեր փախկոտութիւնը փակել հայրենասիրի բերանը, որը ձգտում է դէպի ընդհանրութեան բարօրութիւնը։ (*Նա եւ կինը դուրս են գնում ձախ դռնից*)։

ՔԱՂ. (*Կասկածելի կերպով գլուխը շարժելով*). Դա արդէն կնոջն էլ գժուեցրաւ։

ՉՈՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Հին ձևի դահլիճ, Նաւապետ Գօրստէրի տանը։ Բեմի խորքում դուռը տանում է դէպի նախասենեակը։ Հակառակ կողմից, դէպի մէջ տեղը—ամբիոն. վրան մի փոքր սեղան, սեղանի վրայ երկու մոմ, ջրի գրաֆին, բաժակ և զանգակ։ Դահլիճի միւս մասը լուսաւորուած է պատուհանների մէջ տեղ կախած աշտանակներով։ Դէմուդէմը, ձախ կողմը--սեղան, վրան ճրագ, սեղանի մօտ մի աթոռ։ Աջ կողմ--դուռը, նրա մօտ մի քանի աթոռներ։ Զանազան դասակարգի քաղաքացիների բազմամարդ ժողով։ Ամբոխի մէջ մի քանի կանայք և Թերուններ։ Դահլիճն աստիճանաբար լցւում է նոր-նոր եկողներով։

1-ԻՆ ՔԱՂԱՔԱՑԻ. (*Դառնալով իր մօտ կանգնողին*) Դուք էլ այստեղ էք, Լամստադ:

2-ՐԴ ՔԱՂԱՔԱՑԻ. Ես միշտ լինում եմ, բոլոր ժողովներում։

3-ՐԴ ՔԱՂԱՔԱՑԻ. Երևի հետներդ սուլի՞չ էք բերել։

2-ՐԴ ՔԱՂ. Ի հարկէ, իսկ դո՞ւք,

3-ՐԴ ՔԱՂ. Նոյնպէս, իսկ Իվէնսէնն ուզում էր մեծ եղջիւր բերել հետը:

2-Դ ՔԱՂ. Այ, կեցցէ՜ Իվէնսէն. (*Խումբը ծիծաղում է*)։

4-Դ ՔԱՂ. (*Միանալով*). Չգիտէք ինչու են հաւաքուել։ Ինչո՞ւ մասին են խօսելու։

2-Դ ՔԱՂ. Ինչպէս չգիտենք.—դօքտոր Շտօկման պէտք է խօսի քաղաքագլխի դէմ։

4-Դ ՔԱՂ. Բայց չէ՞ որ քաղաքագլուխը նրա եղբայրն է։

1-Ն ՔԱՂ. Այդ ոչինչ նշանակութիւն չունի։ Դօքտոր Շտօկմանը նրանից չի վախենում:

3-Դ ՔԱՂ. Բայց նա իրաւացի չէ. ինչպէս ասում է „Ժողովրդական Համբաւաբերը“։

2-Դ ՔԱՂ. Այո, այս անգամ ինչպէս երևում է իրաւացի չէ, ոչ «Տանտէրերի ընկերութիւնը», ոչ քաղաքային կլուբը չեն համաձայնել նրան դահլիճ տալ։

1-Ն ՔԱՂ. Նրան մերժել են մինչև անգամ լողարանների դահլիճը։

2-Դ ՔԱՂ, Այո, այդ ես էլ եմ լսել։

5-Դ ՔԱՂ. (*Մի ուրիշ խմբից*). Ուրեմն ո՞ւմ կողմը ձայն տանք, այս գործի մէջ—ո՞վ գիտէ։

6-Դ ՔԱՂ. (*Նոր խմբից*). Լսեցէք. ինչ որ Ասլաքսէնը կասի, դուք էլ միևնոյնը կրկնեցէք:

ԲԻԼ. (Թղթերը ձեռին, ժողովրդի միջից հրբելով առաջ է գալիս). Ներեցէք պարոններ։ Թոյլ տուէք անցնել։ Ես այստեղ ըէպօրտէօրի պաշտօնով եմ եկել „Ժողովրդական Համբաւաբերի“ կողմից։ — Շնորհակալ եմ։ (*Նստում է ձախ կողմը սեղանի մօտ*):

ԲԱՆՎՈՐ. Սա՞ ով է։

ՄԻՒՍ ԲԱՆ. Միթէ դրան չես ճանաչում:

Դա այն Բիլլինգն է, որ գրում է Ասլաքսէնի լրագրի համար։ *(Նաւատէր Գօրստէր մտնում է աջ դռնից, Տիկին Շտօկմանի և Պէտրայի հետ: Նըրանց հետևում են Էյլիֆ և Մօրտէն):*

ԳՕՐՍ. Ձեզ համար այստեղ ամենայարմարն է. այստեղից կարելի է աննկատելի կերպով դուրս գնալ, եթէ որև է դէպք պատահի։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Իսկ դուք կարծում էք թէ որև է բան կարող է պատահել։

ԳՕՐՍ. Դժուար է առաջուց նախատեսել— այսպիսի ամբոխի մէջ: Բայց դուք անհանգիստ լինելու տեղիք չունիք:

ՏԻԿ. ՇՏՕԿ. Ի՞նչ պէս բարի էք որ ձեր դահլիճը նրան տուիք։

ԳՕՐՍ. Որովհետև ամենքը մերժեցին, ես...

ՊԷՏՐԱ. Եւ որքան համարձակութիւն է ձեր կողմից։

ԳՕՐ. Ասենք դրա համար շատ էլ համարձակութիւն չէ հարկաւոր: *(Այդ րոպէին մտնում են Հօֆստադ և Ասլաքսէն, ամբոխին հրհրելով, զատ-զատ են առանձին-առանձին:)*

ԱՍԼ. (Մօտենալով Գօրստէրին). Մի՞թէ դոքտորը դեռ չկա՞յ։

ԳՕՐՍ. Նա այստեղ է, կողքի սենեակում։ *(Շարժումն դրսի դռների մօտ):*

ՀՕՖՍ. (Դիմելով Բիլլինգին): Նայեցէք, ահա և քաղաքագլուխը. *(Քաղաքագլուխը քաղցր ժը-*

պիտով անցնում է ամբոխի միջով, քաղաքավարութեամբ գլուխ տալով երկու կողմերին և կանգնում է ձախ պատի մօտ, մի րոպէից յետոյ աջ դռնից մտնում է դոքտոր Շտօկման, սև սիւրտուկով և սպիտակ փողպատով: Թոյլ ծափահարութիւններ, որոնց մէջ լսվում է շվվոց: Լռութիւն:)

ԴՕՔ. (Կիսաձայն). Ի՞նչպէս ես զգում քեզ, Կատերինա:

ՏԻԿ. ՇՏՕԿ. Հիանալի: *(Կամաց)*։ Մի քիչ ըզգոյշ կաց, Թոմաս։

ԴՕՔ. Հանգիստ եղիր, ես կարող եմ ինձ զըսպել։ *(Նայում է ժամացոյցին, բարձրանում է բեմ և գլուխ տալիս)*։ Նշանակած ժամից արդէն մի քառորդ անցել է, այդ պատճառով ես սկսում եմ..

(Հանում է ձեռագիրը):

ԱՍԼԱՔ. Բայց ես ենթադրում եմ, որ առաջ պէտք է նախագահ ընտրել։

ԴՕՔ. Այդ բոլորովին աւելորդ է։

Մի քանի ձայներ գոռում են)։ Նախագա՛հ, Նախագա՛հ։

ՔԱՂ. Ես նոյնպէս ենթադրում եմ, որ պէտք է նախագահ ընտրել։

ԴՕՔ. Բայց, Պէտէր, ես այս ժողովը հրաւիրել եմ հրապարակական դասախօսութեան համար։

ՔԱՂ: Դոքտոր Շտօկմանի դասախօսութիւնը կարող է կարծիքների տարաձայնութեան պատճառ լինել:

Մի քանի ձայներ ամբոխից.—Նախագա՛հ, նախագա՛հ։

ՀՕՓՍ. Ժողովականների մեծամասնութիւնը նախագահի ընտրութեան կողմն է։

ԴՕՔ. (*իրեն զայրելով*) Լա՛ւ, թող այդպէս լինի։

ԱՍԼԱՔ. Արդեօք, պարոն քաղաքագլուխը չի բարեհաճի նախագահի տեղը բռնել։

Ձայներ ամբոխից (ծափահարելով) Բրավօ, բրավօ...

ՔԱՂ. Մի քանի պատճառներով, որը հեշտ է հասկանալ, ես պէտք է հրաժարուեմ այդ պատուից։ Բայց բարեբաղդաբար մեր մէջ կայ այնպիսի անձնաւորութիւն, որի ընտրութեան մասին ես կարծում եմ ամենքս էլ կհամաձայնուենք։ Իմ խօսքս «Տանտէրերի ընկերութեան“ նախագահ պարոն Ասլաքսէնի մասին է։

ՇԱՏ ՁԱՅՆԵՐ.—Այո՛, այո՛, կեցցէ Ասլաքսէնուրա՛։

(*Դօքտօր Շտօկման վերցնում է իր ձեռագիրը եւ իջնում ամբիոնից*)։

ԱՍԼԱՔ. Եթէ իմ համաքաղաքացիներս ինձ հրաւիրում են, ես չեմ կարող հրաժարուել... (*ծափահարութիւններ, Ասլաքսէն բարձրանում է ամբիոն*)։

ԲԻԼ. (*Գրում է*)։ Նշանակենք... „Պարոն Ասլաքսէն ընտրուեց միաձայն“։

ԱՍԼԱՔ. Որովհետեւ ինձ նախագահ ընտրեցիք, ես ինձ թոյլ կտամ մի քանի խօսք ասել յարգելի ժողովին։ Ես հանդիստ մարդ եմ, խաղաղասէր։ Ես խելացի չափաւորութեան կողմն եմ... և չափաւոր խոհեմութիւնը սիրում եմ։ Ով ինձ ճանաչում է, կհաստատի ասածս։

ՇԱՏ ՁԱՅՆԵՐ. Այո՛, այո՛։

ԱՍԼԱՔ. Կեանքի և փորձի ուսումնարանում ես սովորել եմ որ չափաւորութիւնն այն առաքինութիւնն է, որն ամենից աւելի օգտակար է իւրաքանչիւր անհատական քաղաքացուն...

ՔԱՂ. Լսեցէք, լսեցէք։

ԱՍԼԱՔ. Եւ այդ նոյն խոհեմութիւնը և չափաւորութիւնը ծառայում են համայնքի օգտին։ Այդ պատճառով ես խնդրում եմ մեր յարգելի քաղաքացիներին, որոնք այստեղ են ժողովուած, դուրս չգալ չափաւորութեան սահմաններից։

ՄԻԱՁԱՅՆ. (Դռների մօտ) Կեցցէ „Ողջախոհութեան ընկերութիւնը“։

ՁԱՅՆԵՐ ԱՄԲՈԽԻ ՄԷՋ. Կորէ՛ր այստեղից։

ՁԱՅՆԵՐ. Հա՛նդարտ, հա՛նդարտ։

ԱՍԼԱՔ. Խնդրում եմ, պարոններ, մի ընդհատէք։ Թուցէ մէկը կամենում է որ և է նկատողութիւն անել։

ՔԱՂ. Պարոն նախագահ։

ԱՍԼԱՔ. Պարոն քաղաքագլուխը խօսել է ուզում։

ՔԱՂ. Ի նկատի ունենալով իմ մօտիկ ազգակ-

ցութիւնս—ինչպէս ձեզ յայտնի է—լողարանների գլխաւոր բժշկի հետ, ես աւելի լաւ կհամարէի այսօր չխօսել: Բայց իմ դիրքս դէպի լողարանները և քաղաքի գլխաւոր շահերի համար ունեցած հոգսս դրդում են ինձ մի յայտարարութիւն անել: Ես կարող եմ հաստատապէս ասել, որ այստեղ ներկայ եղող քաղաքացիներից և ոչ մինը չի ցանկանալ, որ մեր լողարանների առողջապահական դրութեան մասին անճիշտ և չափազանցացրած լուրեր տարածուեն:

ՇԱՏ ՁԱՅՆԵՐ. Ո՛չ, ո՛չ, ի հարկէ: Մենք բողոքում ենք:

ԲԱՂ. Այդ պատճառով ես խնդրում եմ յայտարարել, որ ժողովը հրաժարւում է լսել այն դասախօսութիւնը կամ ճառը, որը պատրաստել է այդ առարկայի մասին լողարանների գլխաւոր բժիշկը:

ԴՕՔ. *(Բորբոքուած)* Հրաժարւում է լսե՞լ: Ի՞նչ էք ուզում ասել դրանով:

ՏԻԿ. ՇՏՕԿ. *(Հազալով)* Հըմ, հը՛մ...

ԴՕՔ. *(Իրեն զսպելով)* Ուրեմն ինձ չե՞ն կամենում լսել:

ԲԱՂ. Իմ յօդուածում, որ տպագրուած է „Ժողովրդական համբաւաբերի" մէջ, ես հաղորդում եմ հասարակութեան՝ գլխաւոր փաստերը, այնպէս որ բոլոր ողջամիտ քաղաքացիները կարող են հեշտութեամբ իրենց սեփական եզրակացութիւնն անել: Իմ այդ յօդուածից կտեսնէք որ գլխաւոր բժշկի առաջարկութիւնը—դեռ չեմ խօսում այն կրիտիկայի մա-

սին, որն ուղղուած է քաղաքի առաջնակարգ իշխանութիւնների դէմ—հա, այդ առաջարկութիւնն, իսկապէս, յանգում է այնտեղ, որ հարկատուներին ծանրաբեռնի բոլորովին աւելորդ ծախսով—ամենաքիչը 100,000 տալէր:

(Բողոք եւ շչշկոց):

ԱՍԼԱՔ. *(Զանգահարում է):* Հանդարտ, պարոններ: Ես թոյլ եմ տալիս ինձ պարոն քաղաքագլխի եզրակացութիւնը պաշտպանել: Ես բոլորովին համաձայն եմ նրա հետ, որ դօքտորի առաջարկութեան տակ բոլորովին ուրիշ բան կայ թաքնուած: Խօսելով լողարանների վերանորոգութեան մասին, նա իսկապէս ձգտում է յեղափոխութիւն գործել, վարչական իշխանութիւնը կործանել: Ոչ ոք չէ կասկածում, ի հարկէ, որ բժշկի ձգտումները բարենպատակ են: Ես ինքս էլ հակուած եմ ժողովրդական ինքնավարութեան կողմը, եթէ միայն այդ բանը հարկատուներին շատ թանգ չնստի: Բայց ներկայ հանգամանքում այդ անխուսափելի է: Հետևաբար ես, գրողը տանի—ներեցէք խնդրեմ—ներկայ հանգամանքներում ես չեմ կարող դօքտոր Շտօկմանի հետ համաձայնուել: Նոյն իսկ ոսկին կարելի է ձեռք բերել շատ թանգ գնով: Այսպէս է իմ կարծիքս: *(Բարձրաձայն ծափահարութիւններ, ամեն կողմից):*

ՀՕՖՍ. Ես ևս պարտք եմ համարում իմ գործունէութեանս եղանակը բացատրել: Դօքտոր Շտօկմանի ագիտացիան, սկզբում թւում էր թէ շատե-

ըը հաճութեամբ ընդունեցին, ես էլ սկսեցի պաշտպանել, հնար եղածին չափ անկողմնապահ կերպով։ Բայց յետոյ երևաց որ մեզ մոլորեցրել են սուտ լուրով...

ԴՕՔ. Սուտ լո՛ւրով...

ՀՕՖՍ. Կամ, եթէ կամենում էք, անճիշտ լուրով։ Այդ բանին ապացոյց է քաղաքագլխի յօդուածը։ Յոյս ունեմ, որ ներկայ եղողներից ոչ ոք չի կասկածում իմ կարծիքների ազատամտութեան մասին· ձեզ ամենքիդ լաւ յայտնի է, թէ ինչպէս է վերաբերվում „Ժողովրդական Համբաւաբերը“ քաղաքական բոլոր գլխաւոր հարցերին։ Բայց ես գիտեմ փորձուած ու շրջահայեաց մարդկանցից, որ տեղական շահերին վերաբերեալ հարցերում, լրագրական օրգանը պէտք է մի յայտնի չափով զգուշութիւն պահպանի։

ԱՍԼ. Ես բոլորովին համաձայն եմ այդ մտքի հետ։

ՀՕՖՍ. Այսօրուայ ժողովի քննութեան ենթակայ հարցի մէջ, ի հարկէ, հասարակական կարծիքը դօքտոր Շտօկմանի դէմ է։ Բայց պարոններ, ինչի՞ մէջ է կայանում խմբագրի գլխաւոր, առաջին պարտականութիւնը։ Ո՞չ ապաքէն, նրա մէջ որ նա ձեռք ձեռքի տուած գնայ իր ընթերցողների հետ։ Արդեօք նա մի տեսակ լիազօրութիւն չէ՞ ստանում նախանձախնդրութեամբ և անդադար հոգալ իրեն

հաւատացողների շահերի մասին։ Կամ գուցէ ես սխալւո՞ւմ եմ։

ՇԱՏ ՁԱՅՆԵՐ. Ո՛չ, ո՛չ. Հօֆստադն իրաւացի է։

ՀՕՖՍ. Ինձ համար հեշտ չէր վճռել կտրել յարաբերութիւններս այն մարդու հետ, որի տանը վերջին ժամանակներս ես յաճախ հիւր եմ եղել, մի մարդու, որը մինչև այսօր վայելել է բոլո՛ր քաղաքացիների ընդհանուր համակրութիւնը, մի մարդ՝ որի՛ միակ կամ գոնէ գլխաւոր պակասութիւնն այն է, որ նա աւելի հետևում է իր սրտի, քան թէ մտքի ներշնչումներին։

ՄԻ ՔԱՆԻ ՁԱՅՆԵՐ. Ճշմարիտ է, կեցցէ՜ դօքտոր Շտօկման։

ՀՕՖՍ. Բայց դէպի համայնքն ունեցած իմ պարտաւորութիւնս, հարկադրեցին ինձ կտրել նրա հետ յարաբերութիւններս։ Բացի դրանից կայ մի ուրիշ հիմք, որ ինձ հարկադրում է նրան դիմադրել և հնար եղածին չափ նրան յետ գրաւել այն կորստաբեր ճանապարհից, որի վրայ նա ոտք է դրել. այդ է—կարեկցութիւն դէպի նրա ընտանիքը...

ԴՕՔ. Խօսեցէք մաքրիչ-ջրանցք խողովակների մասին։

ՀՕՖՍ. Կարեկցութիւն դէպի նրա ամուսինը և անապահով զաւակները։

ՄՕՐՏԷՆ. Այն մեզ համա՛ր է ասում, մայրիկ...

ՏԻԿ. ՇՏՕԿ. Ս՛ս...

ԱՍԼԱ. Այժմ ես կառաջարկեմ քուէարկել պ. քաղաքագլխի կարծիքը։

ԴՕՔ. Բոլորովին աւելորդ է։ Այսօր երեկոյ ես մի խօսք անգամ չեմ ասի այդ վարակուած լողարանների մասին։ Ո՛չ, դուք մի ուրիշ բան կլսէք։

ՔԱՂ. (Կիսաձայն)։ Էլ ինչ պէտք է լինի ուրիշ։

ՀԱՐԲԱԾ ՄԱՐԴԸ. (Գլխաւոր դռների մօտ)։ Ես հարկատու եմ ուրեմն և ձայն տալու իրաւունք ունեմ։ Իմ հաստատ, աննախատելի կարծիքս է որ...

ՄԻ ՔԱՆԻ ՁԱՅՆԵՐ. Հանգի՛ստ, այդտեղ...

ՈՒՐԻՇ ՁԱՅՆԵՐ. Հարբած է. դո՛ւրս արէք։ *(Հարբած մարդուն դուրս են հանում)*։

ԴՕՔ. Կարո՞ղ եմ ես խօսել։

ԱՍԼԱ. (Զանգակը խփում է)։ Դոքտոր Շտօկմանը ցանկանում է խօսել։

ԴՕՔ. Թող փորձէին սրանից մի քանի օր առաջ իմ բերանս փակել, այն ժամանակ ես առիւծի պէս կմարտնչէի իմ սրբազան իրաւունքներիս պաշտպանութեան համար, իսկ այժմ ես պէտք է աւելի կարևոր առարկաների վրայ խօսեմ։ *(Ամբոխը շրջապատում է նրան։ Առաջին շարքերում կանգնած է Մօրտէն Կիլ. Դոքտոր Շտօկմանը շարունակում է)*։ Վերջին օրերս ես մտածել եմ այնքան շատ առարկաների վրայ, որ գլուխս պտտւում էր...

ՔԱՂ. (Խորհրդաւոր կերպով հազում է) Հըմ։

ԴՕՔ. ...Բայց այժմ իմ մտքերս պարզուել են

և ես ըմբռնել եմ ամբողջ գործի էութիւնը։ Ահա թէ ինչո՛ւ էք ինձ տեսնում այստեղ, այս երեկոյ։ Համաքաղաքացիներ. ես ձեզ պէտք է հաղորդեմ մի գիւտ անհամեմատ նշանաւոր՝ քան այն չնչին փաստը, որ մեր խողովակները թունաւորուած են և մեր բուժարանները շինուած են վարակուած հողի վրայ։

ՇԱՏ ՁԱՅՆԵՐ. (Գոռում են)։ Լողարանների մասին մի՛ խօսէք։ Չենք ուզում լսել։ Բաւական է այդ մասին։

ԴՕՔ. Ես արդէն ասացի որ պէտք է խօսեմ այն մեծ գիւտի մասին, որ ես այս օրերս արել եմ. այդ գիւտն այն է, որ մեր ամբողջ հասարակութիւնը վարակուած է ստով։

ՄԻ ՔԱՆԻ ՁԱՅՆԵՐ (Զարմացած կիսաձայն)։ Սա ի՞նչ է ասում...

ՔԱՂ. Այսպիսի մի անպատուութի՛ւն...

ԴՕՔ. Ես սիրում եմ իմ մայրենի քաղաքը, այնպէս ինչպէս միայն մարդս կարող է սիրել իր ծննդավայրը։ Ես երիտասարդ էի երբ հեռացայ մեր քաղաքից. հեռաւորութիւնը, ծննդավայրի կարօտութեան վիշտը—այդ ամենն իմ աչքում փայլուն գոյներով էր լուսաւորում թէ տեղը և թէ նրա բնակիչներին։ *(Ծափահարութիւններ և քաջալերական ձայներ)*։ Յետոյ ես ամբողջ տարիներով հալածուեցի, տարագրուեցի սարսափելի երկիր, հեռաւոր հիւսիս։ Եւ երբ ես առիթ էի ունենում

հանդիպել այն խեղճ ժողովրդի հետ, որ ցրուած է ժայռոտ անապատում, ինձ շատ անգամ թւում էր որ այս թշուառացած արարածներին հարկաւոր է վետերինար—անասունների բժիշկ և ոչ թէ մարդ, ինչպէս ես եմ:

(Բողոք ամբոխի մէջ)

ԲԻՂ. (Գրիչը ցած դնելով): Գլուխս մեռնի թէ կեանքումս ես այդպիսի բան լսած լինեմ:

ՀՕՓՄ. Այդպէս վիրաւորե՛լ արժանաւոր գիւղական հասարակութի՛ւնը:

ԴՕՔ. Սպասեցէք: Հազիւ թէ մէկը կարողանայ ինձ նախատել, որ ես այնտեղ մոռացել եմ իմ հայրենի քաղաքս: Երկար, շատ երկար մտածմունքներ եմ ունեցել և այդ մտածմունքների հետեւանքն է եղել լողարանների նախագիծը: *(Նրան ընդհատում են ծափահարութիւններով)*: Եւ երբ վերջապէս իմ բախտս այնպիսի երջանիկ կերպով փոխուեց, որ ես կարողացայ վերադառնալ հայրենիքս, այն ժամանակ, գիտէք, համաքաղաքացիներս՝ ինձ թւում էր թէ՝ ես աշխարհում ուրիշ ցանկութիւններ չունիմ: Ո՛չ, ես միայն մի ցանկութիւն ունէի.—մշտական, վառվռուն ձգտումն օգուտ բերել իմ հայրենիքիս և իմ հայրենակիցներիս:

ՔԱՂ. (Նայելով օդի մէջ):) Տարօրինակ միջոց է ընտրել այդ նպատակի համար,—հը՛մ:

ԴՕՔ. Եւ ես բերկրում էի իմ երջանիկ ցնորքներով: Բայց երէկ երեկոյ—ո՛չ, արդէն երկու տարի

սրանից առաջ—իմ միտքս պայծառացաւ և առաջին բանը որ ես տեսայ, տեղական իշխանութեան բթամտութիւնն էր...

(Աղմուկ, աղաղակ եւ ծիծաղ: Տիկին Շտոկման խորհրդաւոր կերպով ծիծաղում է):

ՔԱՂ. Պարոն Նախագահ:

ԱՍԼ. (Զանգակը խփում է): Յանուն իմ պաշտօնի...

ԴՕՔ. Ի՞նչ մանրակրկիտ վարմունք է ձեր կողմից, պարոն Ասլաքսէն, իմ մի խօսքի եռւեից ընկնել: Ես ուզում եմ ասել, որ պարզ հասկացել եմ առաջնակարգ վարչական անձինքների չարամիտ գործունէութեան ձեւը, լողարանների վերաբերութեամբ: Ես ատում եմ բոլոր այն իշխանութիւններին, որոնք ամեն բան իրենց բռունցքի մէջ են պահում, ես նրանց լաւ եմ ուսումնասիրել ժամանակին: Դրանք մատղաշ անտառում բաց թողած այծերի են նմանում. ամեն տեղ միայն վնաս են հասցնում, ամեն տեղ ազատ մարդու ճանապարհը կտրում են... Ի՞նչ լաւ կլինէր, եթէ հնար լինէր դրանց եւս ոչնչացնել, ինչպէս ոչնչացնում են վնասակար կենդանիներին: *(Սարսափելի աղաղակ ամբոխի մէջ)*:

ՔԱՂ. Պարոն Նախագահ, միթէ ներելի՞ են այդ տեսակ խօսքեր...

ԱՍԼ. (Ձեռքը երկարացնելով դէպի զանգակը): Դօքտոր Շտօկման...

ԴՕՔ. Չեմ հասկանում, թէ ի՞նչպէս ես միայն

ա՛յժմ ճանաչեցի այդ պարոններին. չէ՞ որ մեր աչքի առաջ, ամենայն օր դրանց այնպիսի մի երեւելի օրինակը կար, ինչպիսին է իմ եղբայր Պետէրը—բթամիտ յամառ, նախապաշարուած... (*ծիծաղ, աղմուկ, շչչոց: Տիկին Շտօկմանը հազում է, Ասլաքսէնը սաստիկ զանգահարում է*):

ՀԱՐԲԱԾ ՄԱՐԴ. (*Որ վերադարձել է դահլիճը*): Այդ ինձ համա՞ր էք խօսում: Ճշմարիտ է, իմ անունս Պետէր սէն է, բայց գրողը տանի ինձ թէ...

ԲԱՐԿԱՑՈՏ ՁԱՅՆԵՐ. Դո՛ւրս հարբածին. դո՛ւրս արէք: (*Հարբած մարդուն դուրս են հանում:*)

ՔԱՂ. Ո՞վ է այդ մարդը:

ԱՄԲՈԽԻ ՄԻՋԻՑ ՄԷԿԸ: Ես նրան չեմ ճանաչում, պարոն քաղաքագլուխ:

ՄԻԽՍԸ. Դա մեր քաղաքացիներից չէ:

3-ՐԴԸ. Կարծեմ տախտակ ծախող է... (*Մնացեալը չի լսւում*):

ԱՍԼ. Այդ մարդն, անկասկած, հարբած է: Շարունակեցէք, դօքտոր Շտօկման, բայց ձեր խօսքերի մէջ չափաւոր եղէք:

ԴՕՔ. Այդպէս, հայրենակիցներ, ես էլ աւելի չեմ խօսի մեր իշխանութեանց մասին: Եթէ ձեզանից մէկն երեւակայի իմ ասածներից թէ ես ուզում եմ այս երեկոյ այդ պարոնների հետ հաշիւս վերջացնե՛լ—կսխալուի, բոլորովին կսխալուի: Որովհետեւ ես իմ գլխում սննդում եմ այն մխիթարական միտքը, թէ այդ սրիկաներն, այդ հնացած մտքի թափթփուկները,

իրենք, արագ քայլերով դիմում են դէպի իրենց սեփական կորուստը: Եւ դրանց վերջը մօտեցնելու համար բժշկի միջամտութիւնը չէ հարկաւոր: Բացի դրանից, ժողովրդի համար դրա՛նք չեն ամենավտանգաւորները, դրանք չեն ամենից աւելի եռանդով թունաւորում մեր հոգեկան կեանքը, վարակում մեր ոտի տակի հողը. Նրանք չե՛ն ճշմարտութեան և ազատութեան ամենավտանգաւոր թշնամիները, մեր հասարակութեան մէջ:

ԱՂԱՂԱԿՆԵՐ ԱՄԵՆ ԿՈՂՄԻՑ: Ուրեմն էլ ո՞վ է, ո՞վքեր են: Անուանեցէք նրանց:

ԴՕՔ. Այո, ի հարկէ կանուանեմ: Որովհետեւ հէնց դա է այն երեւելի գիւտը, որ ես երէկ արել եմ: (*Ձայնը բարձրացնելով*). Ճշմարտութեան և ազատութեան ամենավտանգաւոր թշնամին մեր շրջանում—համերաշխ, ազատ մեծամասնութիւնն է: Այժմ ես բոլորն ասացի: (*Սարսափելի շփոթութիւն դահլիճում: Գոռում են, ոտները գետնին են խփում, շչչոց: Մի քանի հասակաւոր մարդիկ ծածուկ միմեանց աչքով են անում, կարծես ուրախ են այս տեսարանին: Տիկին Շտօկմանը տեղից բարձրանում է վրդովուած: Էյլիֆը եւ Մօրտէնը սպառնալից կերպով մօտենում են թերուսներին, որոնք աղմուկ են հանում: Ասլաքսէնը զանգը տալիս է եւ կարգի հրաւիրում: Հօֆստադ եւ Բիլլինգ խօսում են միաժամանակ, բայց նրանց խօսքերը կորչում են ամբոխի ա-*

ղաղակի մէջ։ Փոքր առ փոքր կարգը վերականգնում է։)

ԱՍԼ. Ես կխնդրէի դօքտոր Շտօկմանին յետ վերցնել իր վիրաւորական խօսքերը։

ԴՕՔ. Երբէք, պարոն Ասլաքսէն։ Հէնց այդ մեծամասնութիւնն է ինձ զրկում ազատութիւնից և ուզում է խանգարել ինձ ճշմարիտը խօսել։

ՀՕՓՍ. Իրաւունքը միշտ մեծամասնութեան կողմն է։

ԲԻԼ. Այո, գրողը տանի, ճշմարտութիւնն էլ նրա կողմն է։

ԴՕՔ. Մեծամասնութիւնը երբէք իրաւացի չէ։ Այո՛, երբէք։ Դա մի ընդունուած սուտ է, որի դէմ պէտք է բողոքի ամեն մի ազատ, խելացի մարդ։ Իւրաքանչիւր երկրում ո՞վ է կազմում մեծամասնութիւնը։ Լուսաւորուած մարդի՞կ, թէ յիմարները։ Ես ենթադրում եմ որ ամենքը պարտաւոր են խոստովանուել, որ յիմարները սարսափելի ճնշող մեծամասնութիւն են կազմում, երկրագնդի բոլոր տարածութեան վրա։ Բայց մի՞թէ արդարութիւն է, գրողը տանի, որ յիմարները կառավարեն լուսաւորուած մարդիկներին։ (*Աղմուկ։*) Այո, այո՛—դուք կարող էք ինձանից աւելի բարձր գոռալ, բայց հերքել իմ առարկութիւններս, այդ ձեր իշխանութիւնից բարձր է։ Մեծամասնութիւնը դժբախտաբար ոյժ ունի—բայց ո՛չ իրաւունք։ Իրաւացի են—ես և ուրիշ սակաւաթիւ անհատներ։ Իրաւունքը միշտ

փոքրամասնութեան կողմն է։ (*Ամբոխը վրդովւում է*)։

ՀՕՓՍ. Ա՜հա՛. այդպէս ուրեմն, դօքտոր Շտօկմանն արիստոկրատ է դառել, այս վերջին երկու օրուան մէջ։

ԴՕՔ. ՇՏՕԿ. Ես ասացի որ ի զուր խօսքեր չպէտք է փչացնեմ այն չնչին, սահմանափակ խըմբի մասին, որը մեզ կառավարում է։ Հոգեթռթիռ-կեանքը գործ չունի այդ պարոնների հետ։ Ես նախապատիւ եմ համարում խօսել այն սակաւաթիւ անհատական անձնաւորութիւնների մասին, որոնք ըմբռնել են բոլոր նոր, զարթնող ճշմարտութիւնները։ Այդ մարդիկ կարծես թէ ժողովրդից շատ առաջ են գտնւում, այնքան շատ առաջ, որ մարմնացեալ մեծամասնութիւնը դեռ չէ հասել նրանց. և հէնց այնտեղ նրանք միայնակ մրցում են այն ճշմարտութիւնների համար, որոնք աշխարհային գիտակցութեան մէջ շատ նորածին լինելով, չեն կարող տիրել ամբոխին։

ՀՕՓՍ. Այդպէս, ուրեմն, դօքտորն այժմ էլ յեղափոխական է։

ԴՕՔ. ՇՏՕԿ. Այո երդւում եմ, պարոն Հօփստադ, ես—յեղափոխակա՛ն եմ։ Ես բողոքում եմ այն սուտ կարծիքի դէմ—թէ ճշմարտութիւնը մեծամասնութեան կողմն է։ Մեծամասնութիւնն ի՞նչ ճշմարտութիւններ է հաւաքում իր չորս կողմը։ Դարերի ընթացքում հնացած ճշմարտութիւններ, ա՛յնքան հնացած, որ արդէն շուտով կդառնան—

սուտ։ *(Ամբոխի մէջ միմեանց նայում են եւ ծիծաղում)*։ Այո, այո, ցանկանում էք ինձ հաւատալ թէ չէ, այդ միևնոյն է, ինչպէս կամենաք, բայց ճշմարտութիւնները նման չեն երկարակեաց Մաթուսաղաներին, ինչպէս շատերը ենթադրում են։ Սովորական, տարրական պայմաններում, ճշմարտութիւնը կարող է գոյութիւն ունենալ 17—18 տարի, ամենաշատը 20 տարի, իսկ դրանից աւելի—հազիւ։ Եւ այդպիսի մի յարգելի հասակում ճըշմարտութիւնները միշտ զարմանալի նիհար են լինում. մինչդեռ հէնց այդ ժամանակ մեծամասնութիւնն ընդունում է նրանց և առաջարկում է հասարակութեան իբրև առողջարար կերակուր։ Ինչպէս բժիշկ, կարող եմ ձեզ հաւատացնել, որ այդպիսի կերակուրը զուրկ է սննդելու յատկութիւնից.—դա մի խոզի ապուխտ է, դառնացած, կծուած, բորբոսնած, առաջացնում է այն բարոյական լուծումը, որից քայքայւում է հասարակութիւնը։

ԱՍԼ. Կարծեմ յարգելի ճառախօսը շատ հեռացաւ իր առարկայից։

ՔԱՂԱՔԱՊԼ. Խնդրեմ արձանագրել պարոն նախագահի նկատողութիւնը։

ԴՕՔ. Դու կարծեմ խելագարուել ես, Պէտէր. ես իմ սկզբունքի վրա հաստատ եմ կանգնում, որքան որ հնարաւոր է, որովհետև իմ սկզբունքս այն է թէ—մեծամասնութիւնը—անիծուած համագումար մեծամասնութիւնը—հէնց ինքն է թու-

նաւորում մեր հոգեւոր կեանքի բուն աղբիւրը և վարակում է մեր ոտերի տակ գտնուած հողը։

ՀՕՖՍ. Եւ դուք այդ մեղապարտութիւնը բարդում էք մեծ և անկախ մեծամասնութեան վզին, միայն նրա համար, որ նա այնքան խելացի է որ ընդունում է միայն յայտնի խոստովանուած ճշմարտութիւնները։

ԴՕՔ. Յարգելի պարոն Հօֆստադ. մի խօսէք „յայտնի ճշմարտութիւնների“ մասին։ Ամբոխի, սինլքորի ընդունած ճշմարտութիւնները—այն յայտնի ճշմարտութիւններն են, որոնց ընդունել են հասարակութեան ամենալաւ ներկայացուցիչները, մեր պապերի օրերով։ Մենք ժամանակակից յառաջաւոր մարդիկս այլ ևս չենք ընդունում նրանց և չկարծեմ թէ գոյութիւն ունենայ մի ուրիշ աւելի դրական ճըշմարտութիւն, քան այն թէ ոչ մի հասարակութիւն չէ կարող ապրել առողջ կեանքով, այդպիսի հնացած և անկենդան ճշմարտութիւնների հիման վրայ։

ՀՕՖՍ. Բայց ի՞նչ կլինի, որ դուք մութ ճառերի փոխարէն անուանէիք այն անկենդան ճշմարտութիւններից մի քանիսը, որոնց ընդունել է մեր հասարակութիւնը։ *(Ամբոխի մէջ քաջալերական նշաններ)*։

ԴՕՔ. Օ՛, ես հօ չեմ կարող քրքրել այդ բոլոր աղբը, ներկայ րոպէում, ես կանուանեմ միայն մի ընդունուած հասարակական ճշմարտութիւն—իսկապէս անճոռնի մի սուտ, որին հետեւում են պարոն Հօֆս-

տաղը, «Ժողովրդական Համբաւաբերը» և նրա բոլոր հետևողները...

ՀՕՓՍ. Այսի՞նքն...

ԴՕՔ. Ես խօսում եմ այն վարդապետութեան մասին, որը դուք ժառանգել էք մեր պապերից, որը դուք միշտ և ամեն տեղ այնքան անզգոյշ քարոզում էք. այն վարդապետութեան մասին, թէ—կոպիտ ամբոխը, սինլքորը ամփոփում է իւր մէջ ժողովրդի կենսական նեարդը. հէնց նա ինքն այդ ամբոխն է ժողովուրդ ասածդ. թէ ռամիկը, հասարակութեան տգէտ, անզարգացած անդամը նոյնչափ իրաւունք ունի դատապարտել և սրբագործել, խորհուրդ տալ և կառավարել, որչափ որ ունին ինտելիգենտ փոքրամասնութեան սակաւաթիւ ներկայացուցիչները...

ԲԻԼ. Վա՜յ, գլուխս մեռնի...

ՀՕՓՍ. *(Գոռում է)*։ Քաղաքացիներ, ուշադրութիւն դարձրէք դրա խօսքերի վրայ։

ԲԱՐԿԱՑԱԾ ՁԱՅՆԵՐ. Ո՜հօ։ Մի՞թէ մենք ժողովուրդ չե՞նք։ Մի՞թէ միայն հարուստներն իրաւունք ունին երկիրը կառավարել։

ԲԱՆՈՒՈՐ. Դուրս արէք նրան, ո՛վ որ այդ ասում է։

ՈՒՐԻՇՆԵՐԸ. Դո՛ւրս...

ՔԱՂԱՔԱՑԻՔ *(Գոռում են)*։ Տուտով փչիր փողդ Իվէնսէն։ *(Լսւում են փողի ձայներ, շվվոց եւ սարսափելի աղմուկ)*։

ԴՕՔ. *(Երբ աղմուկը մի քիչ հանդարտել է)*։

Խելքի եկէք։ Մի՞թէ դուք ձեր ամբողջ կեանքի մէջ գոնէ մի անգամ չէք կարող լսել ճշմարտութիւնը։ Ես ամենքիդ չեմ խնդրում իսկոյն ինձ հետ համաձայնել, բայց, ես ի հարկէ, ենթադրում էի որ պարոն Հօֆստադը մի քիչ հանդարտուելուց յետոյ ինձ հետ կհամաձայնուէր։ Պարոն Հօֆստադն իրեն անուանում է ազատամիտ..

ՄԻ ՔԱՆԻ ՁԱՅՆԵՐ. *(Զարմացած կիսաձայն)*; Ազատամի՞տ—լսո՞ւմ էք ի՞նչ է ասում: Ի՞նչպէ՞ս, պարոն Հօֆստադն ազատամի՞տ...

ՀՕՓՍ. *(Գոռում է:)* Ապացուցեցէք այդ, դօքտօր Շտօկման: Այդ ե՞րբ եմ ես արտայայտել տպագրական խօսքով:

ԴՕՔ. *(Մտախոհ)*: Ոչ. ազնիւ խօսք եմ տալիս, այս անգամ դուք իրաւացի էք, երբէք դուք այդ բանը պարզ և ուղիղ չէք ասել: Ես չեմ ուզում ձեզ դժուար դրութեան մէջ ձգել: Ուրեմն թող որ միայն ես լինիմ ազատամիտ: Եւ այժմ ես ձեզ բոլորիդ կապացուցանեմ գիտնական հիմունքների վրայ, որ „Ժողովրդական Համբաւաբերը“ մեր ամենքիս քթից բռնած ման է ածում, հաւատացնելով ձեզ որ դուք սինլքոր ամբոխդ ժողովրդի կենսական նեարդն էք կազմում: Այդ բոլորը լրագրական սուտ է և ուրիշ ոչինչ։ Ամբոխը ոչ այլ ինչ է, եթէ ոչ հում նիւթ, որ պէտք է մշակել ու ժողովուրդ դարձնել: *(Բողոք, ծիծաղ եւ դժգոհութիւն ամբոխի մէջ)*: Եւ մի՞թէ մենք մինոյնը չե՞նք տեսնում մնացեալ

կենդանական աշխարհում։ Ի՞նչ զանազանութիւն կայ ընտանի և վայրենի կենդանիների տեսակների մէջ։ Վերցրէք հէնց վայրի հաւին—շատ միս է տալիս արդեօք նրա ծիւրուած մարմինը։ Եւ ինչ տեսակ ձուեր է ածում նա։ Գրեթէ միևնոյն, ինչ որ ամեն մի կարգին ագռաւ։ Միւս կողմից վերցրէք ընտանի Սպանիական կամ ճապոնական հաւը, լաւ փասեան կամ հնդկահաւ և դուք կտեսնէք թէ ինչ զանազանութիւն կայ նրանց մէջ։ Կամ թէ վերցրէք շունը—մեզ աւելի մօտ կենդանի։ Յիշեցէք թէ ինքն ըստ ինքեան ինչ է սովորական, հասարակ գզգզուած գամփռը, որը քաշկռտւում է ցեխի մէջ, մեծ ճանապարհի մայթերը կեղտոտելով։ Համեմատեցէք այդպիսի գամփռը սենեակի շան հետ, որը շատ սերունդներից անցնելով ծագում է արիստոկրատական ցեղից, որը սննդւում է ընտիր կերակուրով, լսում է ներդաշնակ ձայներ և երաժշտութիւն։ Դուք կարծում էք, որ սենեակի շան ուղեղը իր զարգացմամբ բոլորովին չէ՞ տարբերւում գամփռի ուղեղից։ Անկասկած տարբերւում է։ Այդպիսի բարեկիրթ՝ սենեակի շան ձագերին ձեռնածուները վարժեցնում են ամենաանսովոր բաներ անելու։ Հասարակ ռամկական շունը երբէք չէր սովորի այդ տեսակ բաներ անել, եթէ յաւիտեան իսկ սովորէր։ *(Չորս կողմից աղաղակ ու ծիծաղ)։*

ՔԱՂԱՔԱՑԻ (Գոռում է)։ Այդ ինչ է. այժմ էլ դուք ուզում էք մեզ համեմատել շների հե՞տ։

ՄԻ ՈՒՐԻՇ ՔԱՂԱՔԱՑԻ. Վա՜հ, Մենք հօ գազաններ չենք, պարոն դօքտոր։

ԴՕՔ. Սխալւում էք, պարոնս, հէնց բանն այդ է որ մենք գազաններ ենք։ Մենք ամենքս էլ, առաջինից սկսած մինչև վերջինը գազաններ ենք, որքան էլ որ այդ վիրաւորական լինի մեր անձնասիրութեան համար։ Միևնոյն ժամանակ մեր մէջ շատ քիչ են պատահում արիստոկրատական գազաններ։ Նայեցէք ի՜նչ մեծ զանազանութիւն կայ սենեակի շուն մարդկանց և գամփռ—մարդկանց մէջ։ Իսկ ամենաանհեթեթն այն է, որ պարոն Հօֆստադ ինձ հետ համաձայնում է մինչդեռ խօսքը չորքոտանի կենդանիների մասին է․․,

ՀՕՖՍ. Ս՜... հանգիստ թողնենք նրանց։

ԴՕՔ. Համաձայն եմ.—Բայց հէնց որ ես այդ միևնոյն օրէնքը գործադրում եմ երկոտանի կենդանիների վրայ, Հօֆստադն իսկոյն յետ ու յետ է փախչում, նա արդէն էլ չէ համարձակւում իր սեփական կարծիքն ու աշխարհայեացքն ունենալ։ Իր բոլոր գիտութիւնը տակն ու վրայ է անում և „Ժողովրդական համբաւաբերի„ մէջ հրատարակում է որ վայրի հաւը և գամփռը, ընտանի կենդանիների ամենալաւ ներկայացուցիչներն են։ Բայց միշտ այդպէս է պատահում, մինչդեռ դուք հետևում էք ընդհանուր ընդունուած աշխարհայեացքին և մինչդեռ մրցման ճանապարհով դուք ձեր առանձին ո-

գեկան աշխարհը չէք կազմել, չէք առանձնացել ամբոխից։

ՀՕՖՍ. Ես չեմ ձգտում ոչ մի առանձնութեան։ Ես ծագում եմ գիւղական ընտանիքից և պարծենում եմ հասարակ ժողովրդի հետ իմ ունեցած կապով — ժողովրդի, որին դուք այդպիսի ծաղրական արհամարանքով էք վերաբերւում։

ՄԻ ՔԱՆԻ ԲԱՆՈՒՈՐՆԵՐ. Ուրա՜, Հօֆստադ, կեցցէ՜, կեցցէ՜։

ԴՕՔ. Ռամիկների ներկայացուցիչները, որոնց մասին ես խօսում եմ, միայն հասարակ դասակարգի մէջ չեն պատահում. նրանք սողում և վխտում են մեր չորս կողմը հասնելով մինչև հասարակութեան ամենաբարձր գագաթնակէտերին։ Վերցրէք իբրև օրինակ նոյն իսկ իմ հարազատ եղբայրը, յարգելի մեծապատիւ քաղաքագլխին։ Իմ եղբայր Պէտէրն անկասկած ծագում է հասարակ դասակարգից...

(Ծիծաղ և շվշվոց)։

ՔԱՂ. Ես բողոքում եմ այդպիսի անձնական վիրաւորանքների դէմ։

ԴՕՔ. (Անվրդով) ...Եւ այդ ոչ թէ այն պատճառով, որ նա էլ ինձ նման ծագում է պոմերանիական հին անպիտան ծովային աւազակից— որովհետև մեր նախնիքը հեներ են...

ՔԱՂ. Այդ մի անհեթեթ աւանդութիւն է, ոչ մի բանի վրայ չհիմնուած։

ԴՕՔ. ... Ո՛չ Պէտէրը հենց այդպիսի մարդ

է, որովհետև նա հետևում է իր պաշտօնական իշխանութեան կարծիքներին, մտքերին։ Այդպէս վարւող մարդիկ, ինտելլիգենտութեան վերաբերմամբ պատկանում են ամբոխին և ահա թէ ինչու իմ բարեկարգիչ եղբայր պարոն Պէտէրն իսկապէս շատ անկարգ է, հետևաբար և ինտէլլիգենտ չէ։

ՔԱՂ. Պարո՛ն նախագահ...

ՀՕՖՍ. Ուրեմն ձեր ասելով այս երկրում կարգին մարդիկն ազատամիտնե՞րն են։ Այդ բոլորովին նոր կարծիք է։ (Ծիծաղ)։

ԴՕՔ. Այո, դա իմ վերջին գիւտիս մի մասն է։ Եւ դրանից էլ հետևում է, որ մտքի ազատութիւնը գրեթէ նոյնն է ինչ որ բարոյականութիւնը։ Այդ պատճառով, ասում եմ որ աններելի է „Ժողովրդական համբաւաբերին“ օր աւուր քարոզել այն սուտ վարդապետութիւնը թէ սինլքոր ամբոխը, համագումար մեծամասնութիւնն ամբողջապէս միակ տէրն է բարոյականութեան և ազատամտութեան և թէ մոլութիւնն, անբարոյականութիւնը և ուրիշ ոգեկան կեղտերը դուրս են գալիս լուսաւորութիւնից, այն կեղտերի նման, որոնք հոսում են Միլ-Դէլի կաշուի գործարաններից դէպի լողարանները։ (Աղմուկ. դօքտոր Ստօկման շարունակում է, անվրդով, ժպտալով)։ Եւ այնու ամենայնիւ այդ միևնոյն ժողովրդական համբաւաբերը քարոզում է, թէ պէտք է ամբոխին բարձրացնել և հասցնել զարգացման ամենաբարձր կէտին։ Բայց, գրո՛ղը տանի,

եթէ «ժողովրդական համբաւաբերի» վարդապետութիւնն ինքն իրեն չէ ուզում դաւաճանել, ուրեմն ամբոխին բարձրացնել—նշանակում է նրան կորուստի մատնել. բայց բարեբաղդաբար դա միայն մի հնացած, աւանդական սուտ է իբր թէ—լուսաւորութիւնն անբարոյականացնում է: Ո՛չ—անբարոյականացնում է բթութիւնը, աղքատութիւնը, կեանքի բոլոր անճոռնութիւնը։ Մի տան մէջ որի օդը չէ փոխւում և կեղտը դուրս չէ սրբվում...—Իմ կինս պնդում է, որ ամենայն օր պէտք է յատակը նոյնպէս լուանալ, բայց այդ խնդիրը մենք այսօր չենք կարող քննել—այդպիսի մի տան մէջ ապրողները երկու կամ երեք տարուան ընթացքում կորցնում են բարոյականութեան հիման վրայ դատելու ընդունակութիւնը: Թթուածնի պակասութիւնը բթացնում է խիղճը: Եւ, պէտք է խոստովանել, այդ պակասութիւնն զգալի է մեր քաղաքի շատ տներում, ուր մեծամասնութիւնը այնքան անխիղճ է, որ ուզում է իր ապագան հիմնի ստի և խաբէութեան ճահճի վրայ:

ԱՍԼԱ. Ես չեմ կարող թոյլ տալ, որ այդպէս անպատուեն բոլոր քաղաքացիական համայնքը։

ՁԱՅՆ. Ես առաջարկում եմ, որ պարոն նախագահը հրամայէ նրան լռել:

ՁԱՅՆԵՐ. Այո, այո, նստեցէք, նստեցէք։

ԴՕՔ. *(Բորբոքուելով)*: Եթէ այդպէս է, ես ճշմարտութիւնը պէտք է քարոզ եմ իւրաքանչիւր

փողոցի անկիւնում, ես պէտք է գրեմ միւս լրագիրների մէջ: Բոլոր երկիրը պէտք է իմանայ թէ ի՛նչ է կատարւում այստեղ։

ՀՕՖՍ. Բժիշկն, ինչպէս երևում է, ուզում է քաղաքը կործանել։

ԴՕՔ. Այո, ես այնքան սիրում եմ իմ հայրենի քաղաքս, որ աւելի լաւ կհամարէի կործանել նրան, քան թէ տեսնել թէ ի՛նչպէս է նա յառաջադիմում ստութեան մէջ:

ԱՍԼԱ. Ուժեղ է ասուած։

(Աղմուկ եւ շվշվոց: Տիկին Ստոկման հազում է, բայց բժիշկն էլ ուշադրութիւն չի դարձնում):

ԴՕՔ. *(Աւելի եւ աւելի տաքանալով)*: Ի՛նչ մի մեծ դժբախտութիւն կլինի, եթէ կործանուէ ստայօդ համայնքը։ Կրկնում եմ—նրան հարկաւոր է ջնջել երկրի երեսից։ Բոլոր մարդիկ որ սննդվում են ստով, պէտք է ոչնչացնուեն, ինչպէս զզուելի սողուններ: Ժամանակի ընթացքում դուք կվարակէք նաև երկրի մնացած մասը, դուք կըհասցնէք այն տեղը, որ մեր ամբողջ երկիրը արժանի կլինի կործանուելու։ Եւ եթէ երբ և իցէ հասնի այդպիսի րոպէ, ես բոլոր սրտից կասեմ, թող կորչի այդ երկիրը, թող կորչի նրա ամբողջ ժողովուրդը։

ՁԱՅՆ. *(Ամբոխի մէջ)* Մի՞թէ չէք լսում, նա խօսում է ինչպէս ժողովրդի իսկական թշնամի:

ԲԻԼ. Գլուխս մեռնի եթէ այդ խօսքերի մէջ լսվում չլինի „ձայն բազմաց“:

ԲՈԼՈՐ ԺՈՂՈՎԸ. *(Գոռում են)*։ Այո, այո, այո—Նա ժողովրդի թշնամին է. Նա ատում է իր հայրենիքը։ Նա ատում է իր ժողովուրդը։

ԱՍԼԱ. Ինչպէս այստեղի քաղաքացի և ինչպէս մարդ՝ ես մինչև սրտիս խորքը անպատուած եմ զգում ինձ, այն բոլորով, ինչ որ այստեղ լսեցի։ Դօքտոր Շտօկմանն այնպէս ցոյց տուաւ իրեն ինչպէս ես չէի սպասի երբէք։ Ես խորին վշտով պէտք է միանամ այն կարծիքին, որն այս րոպէին արտայայտեցին մի քանի արժանաւոր քաղաքացիներ և ես ենթադրում եմ որ մենք պէտք է այդ կարծիքը ձևակերպենք և վճիռ կայացնենք։ Այդ պատճառով ես խնդրում եմ հարցն այսպէս դնել.—„Ներկայ ժողովը՝ լողարանների գլխաւոր բժիշկ դօքտոր Շտօկմանին յայտարարում է—«ժողովրդի թշնամի»։

(Ծափահարութիւնների որոտում։ Շատերը շրջապատում են և շվշվացնում։ Տիկին Շտօկման և Պէտրան վեր են կացել իրենց տեղերից։ Մորտէն և Էյլիֆ ծեծվում են թերուսների հետ. հասակաւորներից ոմանք նրանց բաժանում են)։

ԴՕՔ. *(Դիմելով շվշվացնող ժողովրդին)*։ Օ՜, անխելքնե՛ր... Ասում եմ ձեզ...

ԱՍԼԱ. *(Զանգակը խփում է)*։ Դօքտոր Շտօկմանը զրկուած է ձայնի իրաւունքից։ Այս բանը պէտք է վճռել ձևական քուէարկութիւնով, բայց յարգելով անձնական զգացմունքները, քուէարկութիւնը կլինի տոմսակներով առանց ստորագրութիւն-

ների։ Սպիտակ թուղթ ունի՞ք, պարոն Բիլլինգ։

ԲԻԼ. Ահա կապոյտ և սպիտակ թուղթ...

ԱՍԼԱ. Լաւ, ուրեմն շուտ։ Թղթերը մանր կտրտեցէք։ Ահա այդպէս։ *(Դառնալով ժողովին)*. Կապոյտ թուղթը նշանակում է—ո՛չ, սպիտակն—այո։ Ես ինքս կպտրտեմ բոլոր ժողովականների մէջ և կժողովեմ ձայները։

(Քաղաքագլուխը դահլիճից դուրս է գալիս։ Ասլաքսէն և մի քանի ուրիշները պտտում են դահլիճը, թղթի կտորները ձեռներին՝ գլխարկներով)։

ՔԱՂԱՔԱՑԻ. *(Դիմելով Հօֆստադին)*. Ի՞նչ է պատահել դօքտորին։ Ի՞նչ է նշանակում այս բոլորը։

ՀՕՖՍ. Դուք ինքներդ լաւ գիտէք թէ նա ինչ անսանձ մարդ է։

ՄԻՒՍ ՔԱՂ. *(Դիմելով Բիլլինգին)*. Բայց դուք կարծեմ յաճախ էք լինում նրա տանը։ Չէ՞ք նկատել որ նա խմելիս լինի։

ԲԻԼ. Գլուխս մեռնի, չեմ իմանում ինչ ասեմ։ Երբ որ գնաս նրա մօտ, միշտ գրօգի շիշը սեղանի վրայ է։

3-Դ ՔԱՂ. Խելագարութեան հիւանդութիւն հօ չունի՞ բժիշկը։

1-Ն ՔԱՂ. Կարելի է հէնց դրա ցեղումը կայ գժութիւն։

ԲԻԼ. Շատ կարելի է։

4-Դ ՔԱՂ. Չէ, այդ բոլորից երևում է որ նա

չարացած է. մի բանի համար վրէժ է հանում։

ԲԻՂ. Ճշմարիտ է, նա այս օրերս խօսք ձգեց իր ռօճիկն աւելացնելու մասին, բայց նրան մերժեցին։

ԱՄԷՆՔԸ. (*Միասին*). Օ, ուրեմն ամեն բան այժմ հասկանալի է։

ՀԱՐԲԱԾ ՄԱՐԴԸ. Ինձ էլ կապոյտ թերթ տուէք։ Սպիտակն էլ տուէք։

ՄԻՔԱՆԻ ՁԱՅՆԵՐ. Ի՞նչ այս հարբածն եկաւ։ Դուրս արէք դրան։

Մ.—ԿԻՂ (*Մօտենալով դօքտօրին*). Հ՞ը, Շտօկման. դուք այժմ տեսնո՞ւմ էք թէ ո՛րտեղ են հասցնում բոլոր այդ յիմարութիւնները։

ԴՕՔ. Ես իմ պարտքս կատարեցի։

Մ.—ԿԻՂ. Այն ի՞նչ էիք ասում Միլ-Դէլի կաշուի գործարանների մասին։

ԴՕՔ. Միթէ չլսեցի՞ք ինչ որ ասացի—թէ այնտեղից են հոսում բոլոր կեղտոտութիւնները։

Մ. ԿԻՂ. Ուրեմն իմ գործարանից նո՞յնպէս։

ԴՕՔ. Դժբախտաբար ձեր գործարանը մնացածներից աւելի վատն է։

Մ.—ԿԻՂ. Ուրեմն դուք ա՞յդ էլ ուզում էք լրագրներում հրատարակե՞լ։

ԴՕՔ. Ես ոչ մի բանի մասին իրաւունք չունեմ լռել։

Մ.—ԿԻՂ. Այդ կարող է թանգ նստել ձեզ վրայ, Շտօկման։ (*Գնում է*)։

ՄԻ ՀԱՍՏ ՊԱՐՈՆ. (*Մօտենում է նաւապետ Գօրստէրին առանց գլուխ տալու կամ անց*). Ուրեմն այդպէս, նաւապետ, դուք ձեր տանը ներս էք թողնում ժողովրդի թշնամիների՞ն։

ԳՕՐՍ. Ինձ թւում է, յարգելի պարոն, որ ես կարող եմ իմ սեփական տանս կարգադրութիւններ անել այնպէս, ինչպէս իմ քէֆս է ուզում։

ՀԱՍՏ ՊԱՐՈՆԸ. Եթէ այդպէս, ի հարկէ դուք հակառակ չէք լինի, եթէ ես էլ ձեր օրինակին հետեւեմ։

ԳՕՐՍ. Ի՞նչ էք կամենում ասել։

ՀԱՍՏ ՄԱՐԴ. Դուք վա՛ղը կիմանաք։ (*Շուռ է գալիս եւ դահլիճից դուրս գնում*)։

ՊԷՏՐԱ. Կարծեմ դա ձեր նաւի տէրն է։

ԳՕՐՍ. Այո, դա պարոն Վիկն է։

ԱՍԼԱՔ. (*Թղթերը ձեռին բարձրանում է ամբիոն եւ զանգակը խփում*)։ Պա՛րոններ։ Ես ձեզ պէտք է յայտնեմ քուէարկութեան հետեւանքները։ Ամենքը, բացի մէկից...

ՄԻ ՆՐԻՏԱՍԱՐԴ. Այդ էլ էն հարբածն էր։

ԱՍԼԱՔ. Բացի մի հարբած անձնաւորութիւնից, բոլոր ներկայ ժողովականք միաձայն յայտարարում են լողարանների գլխաւոր բժիշկ դօքտօր Շտօկմանին—ժողովրդի թշնամի։ (*Ծափահարութիւններ եւ քաջալերական աղաղակներ*). Երիցս կեցցէ՛ մեր արժանաւոր քաղաքային վարչութիւնը։ (*Ծափահարութիւններ*). Երիցս կեցցէ մեր ընդունակ և գոր-

ծունեալ քաղաքագլուխը, որ այսպէս ազնուաբար հեռու պահեց իրեն ազգակցական դիտումներից։ *(Ծափահարութիւններ)*։ Ժողովը յայտարարում եմ փակուած։ *(Իջնում է ամբիոնից)*։

ԲԻԼ. Կեցցէ նախագահը։

ԱՄԲՈԽԸ. Կեցցէ Ասլաքսէն։

ԴՕՔ. Իմ գլխարկս և վերարկուս, Պէտրա։ Նաւապետ, ձեր նաւում տեղ ունի՞ք Ամերիկա գնացողների համար։

ՀՈՐՍ. Ձեզ և ձեր ընտանիքի համար միշտ տեղ կգտնուի, դօքտոր։

ԴՕՔ. (Մինչդեռ Պէտրան օգնում է նրան վերարկուն հագնելուն)։ Լաւ։ Գնանք, Կատերինա։ Գնանք, երեխայք։ *(Կնոջը թեւը վերցնում է)*։

ՏԻԿ. ՇՏՕԿ. (Կիսաձայն). Թոմաս, սիրելիս, յետևի դռնով դուրս գանք։

ԴՕՔ. Յետևի դռներ մեզ հարկաւոր չեն, Կատերինա։ *(Բարձր)*։ Դուք կլսէք ժողովրդի թշնամու մասին, քանի դեռ նա իր ոտի փոշին թափ տուած չի լինի։

ԱՍԼԱ. (Գոռում է)։ Դօքտոր Շտօկման...

ԲԻԼ. Գլուխս մեռնի, թէ կարգին մարդն այսքան բաներին կարողանայ դիմանալ։

ԿՈՊԻՏ ՁԱՅՆ. Այդ բաւական չէ. դեռ նա մեզ սպառնում էլ է։

ԶԱՅՐԱՑԱԾ ԱՂԱՂԱԿՆԵՐ. Փշրենք նրա պատուհանները։ Գցենք նրան Ֆիօրդի ալիքների մէջ։

ՁԱՅՆ. (Ամբոխից). Իվէնսէն, փողդ փչիր. ամուր փչիր։ *(Փողի հնչիւն, շվվոց, վայրենի աղաղակ։ Դօքտորն իր ընտանիքի հետ ուղղվում է դէպի դուռը։ Հօրստէրը նրանց համար ճանապարհ է բանում)*։

ԱՄԲՈԽԸ. (Ամենքը գոռում են նրա ետևից). Ժողովրդի թշնամի՛։ Ժողովրդի թշնամի՛։ Ժողովրդի թշնամի՛...

ԲԻԼ. Գլուխս մեռնի թէ ես համաձայնեմ այս երեկոյ դօքտոր Շտօկմանի տանը գրօգ խմել։ *(Ժողովրդի ամբոխը դիմում է դէպի դրսի դուռը։ Աղմուկը հետզհետէ պակասում է հեռանալով. փողոցից լսւում են աղաղակներ).* „Ժողովրդի թշնամի, ժողովրդի թշնամի“։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

(Դօքտոր Շտօկմանի առանձնասենեակը։ Պատի երկարութեամբ տախտակի դարակներ գրքերով եւ պահարաններ զանազան ժողովածուներով։ Յետին պլանի վրայ դուռ որ տանում է դէպի նախասենեակը, բեմի առաջի կողմը ձախ կողմից դուռ՝ դէպի հիւրասենեակը. Աջ կողմից երկու պատուհաններ, փշրուած ապակիներով։ Սենեակի մէջ տեղ դօքտորի գրասեղանը, վրան թափած գրքեր և թղթեր. ամբողջ սենեակում անկարգութիւն է։ Առաւօտ է։ Դօքտոր Շտօկման խալաթով, չուստերով և ֆէսով։ Կռանում է և հովանոցով մի բան փնտռում պահարաններից մէկի տակ. վերջապէս հանում է մի քար)։

ԴՕՔ. *(դառնալով դէպի նախասենեակի դուռը)*։ Կատերինա մէկ քար էլ գտայ։

ՏԻԿ. ՇՏՕԿ. *(Հիւրասենեակից)* Օ՜, դու դեռ շատ կգտնես։

ԴՕՔ. *(Քարը սեղանիվրայի միւս քարերի կոյտի վրա դնելով)*։ Ես կպահեմ այս քարերը։ Նրանք թանգագին են։ Էյլիֆը և Մորտէնն ամեն օր պէտք է տեսնեն այդ քարերը և երբ ես կմեռնեմ, այդ կլինի նրանց ժառանգութիւնը։ *(Դարակների տակն է փնտրում)*։ Բայց ինչ է այն... անունը մոռացել եմ... Գրողը տանի, այն մեր աղախինը, դեռ չէ՞ գնացել ապակի ձգողին կանչելու։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Այո, բայց նա ասել է որ չգիտէ՝ արդեօք, այսօր կարո՞ղէ գալ, թէ ոչ։

ԴՕՔ. Կտեսնես. Նա չի համարձակուի գալ։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Ճշմարիտ է, Ռանդինան, մեր աղախինն այնպէս է նկատել որ հարևաններից վախենում է գալ։ *(Ներսը դառնալով դէպի հիւրասենեակը, ձախ կողմը)*։ Այդ ինչ է Ռանդինա. Լա՛ւ, այս րոպէին։ *(Դուրս է գնում և իսկոյն վերադառնում)*։ Քեզ նամակ, Թոմաս։

ԴՕՔ. Տեսնենք *(Նամակը բանում է եւ կարդում)* Ա՜ա՜։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Ումի՞ց է։

ԴՕՔ. Մեր տանտէրից։ Խնդրում է բնակարանը դատարկել։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Մի՞թէ։ Նա այնպէս օրինաւոր մարդ էր երևում...

ԴՕՔ. *(Նամակն աչքի անցնելով)*։ Նա գրում է որ ուրիշ կերպ չի կարող, չի համարձակուի վարւել։ Շատ ցաւում է, բայց նա ուրիշ կերպ չի համարձակուի իր քաղաքացիների համար... յարգելով հասարակական կարծիքը... նա անկախ դրութեան մէջ չէ... չի համարձակուի վիրաւորել մի քանի ազդեցիկ անձնաւորութիւններ...

ՏԻԿ ՇՏՕԿ. Ահա տեսնում ես, Թոմաս։

ԴՕՔ. Այո, այո, ես շատ լաւ տեսնում եմ ամենը, այս քաղաքում ամենքն էլ երկչոտներ են՝ առաջինից մինչև վերջինը։ Ուրիշի երկիւղից, ոչ

ոք չի համարձակուի ինքնուրոյն կերպով. գործել։ *(Նամակը ծգում է սեղանի վրայ)*։ Բայց այդ մեզ համար միևնոյն է. մենք շուտով կուղևորուենք Նոր-Աշխարհը, Ամերիկա և այն ժամանակ...

ՏԻԿ. ՇՏՕԿ. Բայց արդեօք հաւատացա՞ծ ես, Թոմաս, որ քո այդ արտասահման գաղթելու նախագիծդ խելացի է, ընդհանրապէս։

ԴՕՔ. Հապա ի՞նչ. դու ուզում ես որ ես մընամ այստե՞ղ, որտեղ ինձ կանգնեցրել են տնարգ սիւնի մօտ, իբրև ժողովրդի թշնամու, որտեղ իմ ճակատիս նախատինք են դրոշմել, որտեղ փշրել են իմ պատուհանների ապակիները։ Եւ դեռ նայիր, Կատերինա, դրանք իմ սև զգեստս էլ են պատռել։

ՏԻԿ ՇՏՕԿ. Ախ, տէր աստուած, բայց դա քո միակ լաւ զգեստդ է։

ԴՕՔ. Երբէք չպէտք է ամենալաւ զգեստդ հագնել, երբ գնում ես կռուելու ազատութեան և ճշմարտութեան համար։ Ի հարկէ ես պանտալոնի համար շատ էլ հոգ չեմ անում, դու միշտ կարող ես կարկատել. բայց որ ամբոխն ինձ վրա յարձակուի ինչպէս իբրեն հաւասարի վրայ, այդ բանը ես չեմ կարող մարսել. չեմ կարող։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Այո, նրանք քեզ հետ անտանելի կերպով վարուեցին, Թոմաս, բայց մի՞թէ դա կարող է պատճառ դառնալ որ դու թողնես քո հայրենիքդ։

ԴՕՔ. Իսկ դու կարծում ես որ պլեբէյներն

ուրիշ ամեն քաղաքներում նոյնչափ յանդուգն չե՞ն։ Սխալվում ես, սիրելիս։ Նրանք միևնոյնն են ամեն տեղ, քիչ աւել, քիչ պակաս, բայց միևնոյնն են, ամեն տեղ։ Բայց այդ ոչինչ, թող շները հաչեն, այդ չէ դեռ ամենավատը։ Ամենավատն այն է որ այս երկրում իւրաքանչիւրը իւր կուսակցութեան ստրուկն է։ Ի հարկ է մեծ նշանակութիւն ունի և այն որ ազատ Արևմուտքում գործն աւելի լաւ դըրութեան մէջ չէ,—համագումար մեծամասնութիւնը, հասարակական լուսաւորուած կարծիքը և բոլոր այդպիսի դիւական ճիւաղները դեռ այնտեղ ես տիրապետում են։ Բայց բանը նրանումն է որ այնտեղ կեանքի պայմաններն աւելի լայն են. այնտեղ մարդուն գուցէ և սպանեն, բայց նրան չեն ենթարկի անընդհատ տանջանքի. ազատ ոգու վրա լուծ չեն դնի, ինչպէս այստեղ, մեր հայրենիքում։ Եւ բացի դրանից, այնտեղ, եթէ պէտք լինի, միշտ կարելի է հեռու մնալ ամենքից։ *(Յետ ու առաջ է ման գալիս սենեակում։)* Ախ, եթէ կարողանայինք մի որ և է կուսական անտառ կամ մի փոքրիկ կղզի գտնել հարաւային ովկիանոսում, որ կարելի լինէր գնել էժան գնով...

ՏԻԿ. ՇՏՕԿ. Այո, Թոմաս, բայց երեխաների հետ ի՞նչ անենք...

ԴՕՔ. (Կանգ առնելով)։ Ի՜նչ զարմանալի կին ես, Կատերինա։ Ասա խնդրեմ, մի՞թէ դու աւելի լաւ ես համարում որ մեր երեխաներն աճեն այս-

պիսի մի հասարակութեան մէջ։ Երէկ երեկոյեան միթէ դու չտեսա՞ր որ այստեղի ազգաբնակութեան կէսը—խելագարներ են, իսկ եթէ մնացածներն էլ դեռ չեն կորցրել իրենց բանականութիւնը. որովհետև. նրանք շներ են, զուրկ որ և է բանականութիւնից։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Բայց, ճշմարիտ, սիրելիս, դու այնպիսի անզգոյշ խօսքեր ես ասում…

ԴՕՔ. Բայց ինչ, միթէ ճշմարիտ չէ բոլորը, ինչ որ ես նրանց ասում եմ։ Մի՞թէ նրանք բոլոր գաղափարներն իդէաները շուռ չե՞ն տալիս գլխի վրայ։ Մի՞թէ նրանք չեն խառնում չարն ու բարին, ճշմարտութիւնը ստութիւն չե՞ն անուանում։ Բայց ամենից աւելի շուարելի է տեսնել հասակաւոր մարդկանցից կազմուած ամբոխը—մարդկանց, որոնք իրենց ազատամիտ են անուանում և համոզում են իրենց և ուրիշներին թէ իրենք ազատութեան բարեկամներ են։ Այսպիսի բան լսե՞լ ես, Կատերինա։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Այո՛, այո՛. անկասկած, նրանք բոլորովին սխալ են։ Բայց… *(Պէտրան դուրս է գալիս հիւրասենեակից)*։ Ինչպէս դու արդէն վերադարձե՞լ ես ուսումնարանից։

ՊԷՏՐԱ. Այո, ինձ արձակեցին պաշտօնից։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Արձակեցի՞ն։

ԴՕՔ. Քեզ էլ։

ՊԷՏՐԱ. Տիկին Բէկսը ինձ ակնարկեց այդ մասին և ես նախապատուեցի այժմ իսկ թողնել ուսումնարանը։

ԴՕՔ. Եւ լաւ արիր աղջիկս։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Ո՞վ կարող էր մտածել որ տիկին Բէկսն այդպիսի վատ կին է։

ՊԷՏՐԱ. Օ՜, մայրիկ, ամենեւին, նա վատ կին չէ. ես պարզ տեսայ թէ նա ինչպէս վշտացած էր. բայց նա ուրիշ կերպ չէր համարձակուի վարուել, ինչպէս երևում էր նրա խօսքերից. Հէնց այդ պատճառով էլ ես պաշտօնից զրկուեցի։

ԴՕՔ. *(Ծիծաղելով և ձեռքերը շփելով)*։ Նա չէր համարձակուի ուրիշ կերպ վարուե՜լ. ճիշտ այնպէս, ինչպէս և միւսները։ Օ՜, հիանալի՜ է, սքանչելի՜ է։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Այո, բայց դէ երէկ երեկոյեան սարսափելի սկանդալից յետոյ…

ՊԷՏՐԱ. Միայն այդ չէ պատճառը. ի՞նչ ես կարծում հայրիկ, ուրիշ ի՞նչ պատճառ կլինի։

ԴՕՔ. Ասա՛։

ՊԷՏՐԱ. Տիկին Բէկսն ինձ ցոյց տուաւ ամբողջ երեք նամակ, որ նա ստացել է այս առաւօտ…

ԴՕՔ. Ի հարկէ, անստորագիր։

ՊԷՏՐԱ. Այո։

ԴՕՔ. Նրանք, մինչև անգամ, այնքան քաջութիւն չունեին, որ ստորագրեն նամակները, Կատերինա։

ՊԷՏՐԱ. Եւ նրանցից երկուսի մէջ ասուած է որ մեր տանը յաճախ եղող մի պարոն երէկ կլուբում յայտնել է որ ես սաստիկ յառաջադիմական հարցերի կուսակից եմ…

ԴՕՔ. Ի հարկէ, դու էլ այդ չմերժեցիր։

ՊԸՏՐԱ. Ի հարկէ, ոչ։ Դու ինքդ գիտես որ տիկին Բէկսն ինքը ազատամիտ կարծիքների կուսակից է միշտ, երբ մենք նրա հետ մենակ ենք լինում և խօսում. բայց երբ ինձ համար այս բոլոր տարաձայնութիւններն աշխարհ եկան, նա այլ ևս չհամարձակուեց ինձ պահել։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Եւ դեռ այդ էլ ասել է մէկը, որ մեր տանը յաճախ լինում է. տեսնում ես, Թոմաս, ինչ տեսակ հետևանքներ ունեցաւ քո հիւրասիրութիւնը։

ԴՕՔ. Մենք էլ աւելի չենք մնալ այս խոզերի ախոռում։ Հաւաքիր, դարսիր ամեն բան, որքան կարելի է շուտով. Կատերինա, գնանք, հեռանանք այստեղից և որքան շուտ, այնքան լաւ։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Հանդարտ, կարծես թէ նախասենեակում ոտնաձայն է լսվում։ Ահա, Պէտրա, նայիր։

ՊԸՏՐԱ. (*Դուռը բանալով*). Ա՜ա՛ ա՛, այդ դուք էք նաւապետ Գօրստէր։ Մտէք, խնդրեմ։

ԳՕՐՍ. (*Նախասենեակից*). Բարի լոյս։ Ես կամեցայ մտնել տեսնել, ինչպէ՞ս է ձեր ամենքի քէֆը։

ԴՕՔ. (*Նրա ձեռը սեղմելով*). Շնորհակալ եմ. դուք շատ բարի էք։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Մենք ձեզ շատ երախտապարտ ենք, որ երեկոյ մեզ ընկերակցեցիք, պարոն նաւապետ։

ՊԸՏՐԱ. Հապա դուք ինչպէս յետ դարձաք ամբոխի միջով։

ԳՕՆՍ. Օ՜, շատ փառաւոր։ Դէ, ես բաւական ուժով եմ. իսկ այդ պարոնները աւելի հաչում են քան խածնում։

ԴՕՔ. Զարմանալի վախկոտներն են, այնպէս չէ՞։ Մօտ եկէք. տեսէք ինչ եմ ուզում ցոյց տալ ձեզ։ Նայեցէք, ահա բոլոր այն քարերը, որ նրանք ձգել են մեր պատուհաններին։ Նայեցէք մէկ դրանց վրայ։ Ճշմարիտ, այս ամբողջ կոյտի մէջ միայն երկու քար կայ կարգին մեծութեամբ, մնացածները հասարակ մանր, փխրուն քարեր են, իսկ և իսկ կաւե աւազ լինին։ Դրանք այստեղ, պատուհանի տակ կանգնել էին ու գոռգոռում որ ինձ մի բան կանեն, գլուխս մի բան կբերեն. բայց այս քաղաքում ամենևին վախենալու տեղիք չկայ թէ նրանք իսկապէս կհամարձակուեն իրենց սպառնալիքը կատարել։

ԳՕՐՍ. Այս անգամ. դօքտօր, դուք պէտք է շնորհակալ լինէք ձեր բախտաւոր աստղից, որի տակ ծնուել էք։

ԴՕՔ. Ի հարկ է. բայց այնու ամենայնիւ, այս բոլորը յուսահատութիւն է բերում մարդուս վրայ. որովհետև, եթէ երբ և իցէ գործը լուրջ ազգային մրցման, կռուի հասնի. կտեսնէք կապիտաէ, հասարակական կարծիքը կվախենայ և համագումար մեծամասնութիւնը փախուստ կտայ ինչպէս ոչխարների հօտ։ Ահա թէ ինչն է ամեցաւալին և այդ

ինձ վշտացնում է մինչև ոգուս խորքը։ Բայց գրողը տանի, իմ կողմից յիմարութիւն է դրանից այդքան վիրաւորուել։ Նրանք ինձ ժողովրդի թշնամի անուանեցին. ուրեմն լաւ, ես էլ ժողովրդի թշնամի կլինեմ։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Դու այդ բանին ընդունակ չես, Թոմաս։

ԴՕՔ. Ի զուր ես այդպէս կարծում, Կատերինա։ Վիրաւորական կոչումը ազդում է մարդու վրայ, ինչպէս փոքրիկ վէրքը թոքերի վրայ։ Եւ այդ անիծած խօսքը... չեմ կարողանում մոռանալ. նա խոր խրուել է իմ սրտիս մէջ, կրծում և ծծում է ինձ ինչպէս թթուատ և ոչ մի մագնեզիա ինձ չի բուժիլ։

ՊԷՏՐԱ. Դատարկ բան է։ Դու միայն պէտք ծիծաղես նրանց վրայ, հայրիկ։

ԳՕՐՍ. Հասարակութեան կարծիքը դեռ կըփոխուի, դոքտոր։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Օ՜, այո, Թոմաս, այդ այնպէս ճիշտ է, ինչպէս ճիշտ է այն, որ դու կանգնած ես այդտեղ։

ԴՕՔ. Այո, կարող է լինել, բայց այն ժամանակ երբ արդէն ուշ կլինի։ (*Պաուզա*)։ Ինչ որ ցանել ես, նոյնը կհնձես։ Թող դրանք այստեղ փտեն խաւարի մէջ և սովորեն զղջալ որ հալածեցին իսկական հայրենասէրին։ Ե՞րբ էք ճանապարհ ընկնում, նաւապետ Գօրստէր։

ԳՕՐՍ. Հը՜մ ... Հէնց գլխաւորապէս այդ մասին եմ եկել ձեզ հետ խօսելու...

ԴՕՔ. Ի՞նչ, միթէ մի բան է պատահել ձեր նաւին։

ԳՕՐՍ. Չէ, բանը նրանում է, որ ես այդ նաւով այլևս չեմ գնալու։

ՊԷՏՐԱ. Միթէ ձեզ պաշտօնից զրկեցին։

ԳՕՐՍ. (*Ժպտալով*)։ Այո, զրկեցին։

ՊԷՏՐԱ. Ձեզ էլ.

ՏԻԿ. ՇՏՕԿ. Ահա տեսնո՞ւմ ես, Թոմաս։

ԴՕՔ. Եւ այդ յանուն ճշմարտութեա՛ն։ Ախ, եթէ միայն ես կարողացած լինէի իմանալ..,

ԳՕՐՍ. Դուք մի նեղանաք դրա համար. ես շուտով պաշտօն կգտնեմ մի ուրիշ ընկերութեան մէջ։

ԴՕՔ. Եւ այդ բանն արաւ պարոն Վիկը. հարուստ, ոչ ոքից կախում չունեցող մի մարդ... ո՜, արդար Աստուած...

ԳՕՐՍ. Օ՜, ինչ դրան է վերաբերում, նա շատ բարեմիտ մարդ է. նա ինքն էր ասում որ ուրախութեամբ ինձ կպահէր, եթէ միայն համարձակուէր։

ԴՕՔ. Բայց չի համարձակւում... ի հարկէ, ո՛չ։

ԳՕՐՍ. Այդ հեշտ չէ անել, ասում է, երբ պատկանում ես որոշ կուսակցութեան..

ԴՕՔ. Իսկ և իսկ. նա ասել է գործի բոլոր էութիւնը. կուսակցութիւնը կալբաս կտորելու փոքրիկ մեքենայի է նմանում. բոլոր ուղեղները խառնում, մի ընդհանուր զանգուած է շինում։ Եւ ահա թէ ինչո՛ւ մենք մեր չորս կողմը տեսնում ենք միայն դատարկ գլուխներ, կամ այնպիսի գլուխներ, որոնք լցրած են զանազան աղբերով։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Դէ, բաւական է, Թոմաս։

ՊԷՏՐԱ. (*Դիմելով Գօլստէրին*)։ Եթէ դուք մեզ մօտ եկած չլինէիք, երեւի ձեզ էլ այդ դժբախտութիւնը չէր պատահի։

ԳՕՐՍ. Ես չեմ ափսոսում իմ գալուս։

ՊԷՏՐ. (*Ձեռը մեկնելով*) Շնորհակալ եմ ձեզանից։

ԳՕՐՍ. (*Դօքտօրին*) Ահա, թէ ինչ էի ուզում ասել ձեզ։ Եթէ դուք ճիշտ վճռել էք արտասահման գնալ, ես դրա համար մի այլ միջոց եմ մտածել...

ԴՕՔ. Հիանալի... միայն թէ այստեղից կորչենք...

ՏԻԿ. ՇՏՕԿ. Մ՛սս. կարծես թէ դուռը ծեծում են։

ՊԷՏՐԱ. Անշուշտ հօրեղբայրը կլինի։

ԴՕՔ. Ահա՛։ Մտէք։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Հոգիս, խոստացիր ինձ որ...

Քաղաքագլուխը մտնում է նախասենեակից)։

ՔԱՂ. (*Դռների մէջ*)։ Օ՛, Դուք զբաղուած էք. աւելի լաւ է ես մի ուրիշ անգամ...

ԴՕՔ. Ո՛չ, ո՛չ, մտիր։

ՔԱՂ. Բայց ես ուզում էի քեզ հետ առանձին խօսել։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Մենք կգնանք հիւրասենեակը։

ԳՕՐՍ. (*Վեր կենալով*)։ Իսկ ես շուտով էլի կգամ ձեզ մօտ։

ԴՕՔ. Ոչ, ոչ, Կապիտան, մնացէք դուք էլ հիւրասենեակում, ինձ էլի մի քանի տեղեկութիւններ են հարկաւոր...

ԳՕՐՍ. Լա՛ւ, եթէ այդպէս է կսպասեմ։

(*Գնում է տիկին Շտօկմանի եւ Պէտրայի հետեւից հիւրասենեակը։ Քաղաքագլուխը ոչինչ չէ խօսում, բայց դիտում է պատուհանները*)։

ԳՕՐ. Կարծեմ, միջանցուկ քամին քեզ դուր չէ գալիս։ Գլխարկդ ծածկիր։

ՔԱՂ. Շնորհակալ եմ, եթէ թոյլ կտաս։ (*Գլխարկը ծածկում է*)։ Կարծեմ երէկ երեկոյ մրսել եմ։ Այնպէս սառել էի այնտեղ...

ԴՕՔ. Ճի՞շտ, իսկ ինձ համար այնպէս տաք էր որ... ճշմարիտ։

ՔԱՂ. Շատ ցաւում եմ, որ առաջուց չէի կարողացել նախատեսել այդ բոլոր անկարգութիւնները։

ԴՕՔ. Ուրիշ ասելու բան չունե՞ս ինձ։

ՔԱՂ. (*Հանում է մի մեծ ծրար*)։ Ես պարտաւոր եմ քեզ յանձնել այս ծրարը, ծովային լողաբանների կառավարիչների կողմից,

ԴՕՔ. Ես պաշտօնից արձակուա՞ծ եմ...

ՔԱՂ. Այո, այսօրուանից։ (*ծրարը դնում է սեղանի վրայ*)։ Մենք շատ ցաւում ենք, բայց անկեղծ ասելով մենք չէինք համարձակուի ուրիշ կերպ վարուել, յարգելով հասարակական կարծիքը։

ԴՕՔ. (*Ժպտալով*)։ Չէ՞ք համարձակուե՞։ Ես այսօր արդէն մի քանի անգամ լսում եմ այդ խօսքը։

ՔԱՂ. Խնդրում եմ ինքդ քեզ պարզ հաշիւ տաս քո դրութեան մասին։ Այսուհետեւ դու այլ-

ևս քաղաքում չես կարող յոյս ունենալ մասնաւոր բժշկութիւն անելու:

ԴՕՔ. Գրողը տանի, մինչև անգամ մասնաւոր բժշկութիւն... Բայց դու ինչո՞ւ ես այդպէս հաւստացած քո ասածիդ:

ՔԱՂ. Տանտէրերի ընկերութիւնը տնէտուն շրջաբերական է ուղարկում, որի մէջ բոլոր ողջամիտ քաղաքացիներին ներշնչում է քեզ չդիմել և ես հաւատացած եմ որ ոչ մի ընտանիքի հայր չի մերժի ստորագրել այդ թուղթը, չի համարձակուի չստորագրել:

ԴՕՔ. Լաւ, շատ լաւ, չեմ կասկածում որ այդպէս կլինի. յետո՞յ ինչ:

ՔԱՂ. Ես քեզ խորհուրդ կտայի՝ մի առ ժամանակ քաղաքից հեռանալ:

ԴՕՔ. Այդ մասին ես ինքս եմ մտածել:

ՔԱՂ. Եւ շատ լաւ ես արել: Իսկ եթէ մօտաւորապէս, ասենք, վեց ամսից յետոյ դու, հասուն դատողութիւնից յետոյ, կվճռես քո մոլորութիւնդ խոստովանել և մի քանի խօսքով արտայայտել..

ԴՕՔ. Ես կարող կլինէի նորից հաստատուել իմ պաշտօնի մէջ այնպէս չէ՞:

ՔԱՂ. Կարելի է. անհնարին բան չկայ այդտեղ:

ԴՕՔ. Այո, բայց ի՞նչ կասի հասարակական կարծիքը: Չէ՞ որ դուք յարգելով այդ կարծիքը, չէք համարձակուի:

ՔԱՂ. Հասարակական կարծիքը միշտ ենթարկուած է սաստիկ տատանմունքների: Եւ անկեղծն ասեմ, մեզ համար մեծ նշանակութիւն ունի այդպիսի մի խոստովանութիւն լսել քեզնից, անձնապէս:

ԴՕՔ. Ուրեմն գլխիցդ հանիր այդ բանը: Դու երևի յիշում ես թէ ես քեզ ինչ եմ ասել այդպիսի խորամանկ աղուէսային գործերի համար:

ՔԱՂ. Այն ժամանակ քո դրութիւնդ անհամեմատ աւելի բարեյաջող էր, այն ժամանակ դու կարծում էիր որ ամբողջ քաղաքը քո կողմն է:

ԴՕՔ. Այո, իսկ այժմ ամբողջ քաղաքն իմ դէմ է: (*Բորբոքուած*): Բայց ոչ, ոչ, եթէ ինձ դէմ լինէր նոյն իսկ սատանան իր բոլոր գնդով.. երբէք, ասում եմ քեզ, երբէ՛ք:

ՔԱՂ. Ընտանիքի հայրն իրաւունք չունի այդպէս վարուել. դու իրաւունք չունիս, Թոմաս:

ԴՕՔ. Ես իրաւունք չունե՛մ: Միայն մի՛ բան կայ աշխարհիս երեսին, որ ազատ մարդն իրաւունք չունի անել և գիտե՞ս ինչ է:

ՔԱՂ. Ո՛չ:

ԴՕՔ. Ի հարկէ չես իմանալ. բայց ես քեզ կասեմ: Ազատ մարդն իրաւունք չունի գլորուել ցեխի մէջ, ինչպէս շուն: Նա իրաւունք չունի այնպէս վարուել, որ պարտաւորուի ինքն իր երեսին թքել:

ՔԱՂ. Այդ բոլորը շատ լաւ: Եւ եթէ քո յամառութիւնդ մի ուրիշ պատճառ չունենար... բայց

մեզ յայտնի է, որ գլխաւոր պատճառն այդ չէ…

ԴՕՔ. Ի՞նչ ես ուզում ասել։

ՔԱՂ. Դու շատ լաւ հասկանում ես միտքս։ Բայց եթէ քո եղբայր և եթէ խոհեմ մարդ նախազգուշացնում եմ, որ դու շատ էլ չհաւատաս քո յոյսերիդ և ակնկալութիւններիդ, որոնք ոչ մի վերջ չեն ունենալ։

ԴՕՔ. Բայց վերջապէս ինչի՞ վրայ ես ակնարկում, գրողը տանի…

ՔԱՂ. Դու ուզում ես ինձ հաւատացնել, թէ քեզ յայտնի չէ՞ Մօրտէն-Կիլի կտակը։

ԴՕՔ. Ես գիտեմ, որ նրա ունեցած փոքրիկ կարողութիւնը պէտք է յատկացնուի ծերացած խեղճ արհեստաւորների անկելանոցին։ Բայց այդ ինձ ի՞նչ վերաբերութիւն ունի։

ՔԱՂ. Սկսենք այնտեղից, որ նրա ունեցած „Փոքրիկ կարողութիւնը“ այնքան էլ չնչին բան չէ։ Մօրտէն-Կիլը լաւ կարողութեան տէր մարդ է։

ԴՕՔ. Այդ ես երբէք չեմ իմացել։

ՔԱՂ. Հը՛մ։ Ճի՞շտ։ Ուրեմն, երևի, դու չե՞ս էլ կասկածել թէ նրա կարողութեան բաւական մեծ մասը պէտք է մնայ քո երեխաներիդ և թէ դու և քո կինդ պէտք է ցմահ ստանաք դրամագլխի շահը։ Միթէ նա այդ մասին քեզ ոչինչ չի՞ ասել։

ԴՕՔ. Ոչ, ազնիւ խօսք եմ ասում։ Ընդհակառակն, նա միշտ մրթմրթում է այն ծանր հարկերի

համար, որը նա ստիպուած է վճարել։ Բայց դու հաւատացա՞ծ ես քո ասածիդ, Պէտէր։

ՔԱՂ. Ես այդ գիտեմ ամենաճիշտ աղբիւրից։

ՔԱՂ. Օ՜, Տէր Աստուած. ուրեմն կինս ապահովուա՛ծ է. երեխայքս նոյնպէս, ո՛, այդ պէտք է ասել նրան… *(Կանչում՝ է)* Կատերինա, Կատերինա։

ՔԱՂ. *(Կանգնեցնելով նրան)*։ Ս՜ս՜… սպասիր, դեռ մի խօսիր այդ մասին։

ՑԻԿ. ՇՏՕԿ. *(Դուռը բանալով)* Ի՞նչ է։

ԴՕՔ. Ոչինչ, սիրելիս. առ այժմ թող մեզ։

(Տիկին Շտօկման դուռը ծածկում՝ է։ Դօքտօրը յետ ու առաջ ման է գալիս)։ Ապահովուած են. երեխանե՛րս էլ. կի՛նս էլ։ Եւ ամբողջ կեանքում։ Այո, այնու ամենայնիւ, սարսափելի ուրախալի է աղքատութիւնից ապահովուած լինել։

ՔԱՂ. Այո, բայց այդ բոլորը դեռ և ս հաստատ չէ։ Մօրտէն-Կիլը միշտ կարող է ոչնչացնել իր կտակը, երբ կամենայ։

ԴՕՔ. Այո, բայց նա այդ չի անի, յարգելի Պէտէր։ Փորսողը շատ ուրախ է, որ ես յարձակւում եմ քո և քո անհեթեթ բարեկամներիդ վրայ։

ՔԱՂ. *(Ցնցուելով՝ նայում՝ է նրա վրայ կասկածելի աչքով)*։ Ա՛ա՛, դրանով շատ բաներ է պարզւում։

ԴՕՔ. Ի՞նչ բաներ։

ՔԱՂ. Ուրեմն այդպէս—բոլոր այդ ամբողջ պատմութիւնը, միայն խորամանկութեամբ սարքած

ընտրեգա էր։ Ուրեմն քո անմիտ վարմունքդ, յանուն ճշմարտութեան, տեղական վարչական իշխանութեան դէմ...

ԴՕՔ. Յետո՜յ։

ՔԱՂ. Այդ բոլորը—մտածուած սարքուած օյին էր, վրէժխնդիր ծերունի Մորտէնի կտակի համար։

ԴՕՔ. (*Զարմանքից շուարած*). Պէտէր, իմ կեանքի ընթացքում պատահած պլեբէյներից դու ամենաստորն ես։

ՔԱՂ. Ամեն բան վերջացած է մեր մէջ։ Քո հրաժարականդ անդառնալի է, այժմ մեր ձեռքին զէնք կայ քո դէմ։ (*Գնում է*)։

ԴՕՔ. Անարգ մարդ, օ, խայտառակութի՜ւն։ (*Կանչում է*). Կատերինա, պէտք է յատակը լուանալ դրա ոտերը կպչելուց յետոյ։ Ասա որ այն աղջիկը գայ այստեղ, ջուր բերէ... այ, նա... անունն ի՞նչ է... գրողը տանի—այն կեղտոտ քթով աղջիկը...

ՏԻԿ. ՇՏՕԿ. (*Դռան շէմքում*). Կամաց, հանդարտուիր, Թոմաս։

ՊԷՏՐԱ. (*Նոյնպէս շէմքում*). Հայրիկ, Մորտէն պապը եկել է ու հարցնում է թէ արդեօք կարելի՞ է քեզ հետ առանձին խօսել։

ԴՕՔ. Այո, ի հարկէ (*Դռան մօտ*). Մտէք։ (*Մտնում է Մորտէն-Կիլ. դօքտոր Շտօկման դուռը ծածկում է*). Հը, բանն ինչո՞ւմն է, նստեցէք։

Մ—ԿԻԼ. Ես չեմ նստի։ (*Շուրջը դիտում է*)։

Այսօր ձեր տանն ամէն բան գեղեցիկ է և ուրախ, Շտօկման։

ԴՕՔ. Այո՛, ճիշտ չէ՞։

Մ.—ԿԻԼ. Շատ հիանալի է. և ինչ սաստիկ թարմ օդի հոսանք կայ։ Անպատճառ, դուք այժմ թթուածնի մեծ պաշար ունիք, թթուածնի համար երէկ դուք շատ էիք խօսում։

ԴՕՔ. Դուք չէք սխալւում։

Մ.—ԿԻԼ. Այո, ի հարկէ (*Իր կուրծքին խփելով*). Բայց դուք գիտէ՞ք ինչ կայ այստեղ։

ԴՕՔ. Հանգիստ խիղճ, յուսամ...

Մ.—ԿԻԼ. Հէ—հէ. ոչ, մի քիչ աւելի արժէք ունեցող բան։ (*Հանում է մեծ պօրտմօնէ եւ ցոյց է տալիս մի կոյտ թղթեր*)։

ԴՕՔ. (*Զարմացած նայում է նրա վրայ*). Ծովային լողարանների ակցիանե՞րը։

Մ.—ԿԻԼ. Դժուար չէր այսօր սրանցից ճարելը։

ԴՕՔ. Եւ դուք գնե՞լ էք այդ բոլորը։

Մ.—ԿԻԼ. Բոլոր փողերիս, որքան ունէի ձեռքիս։

ԴՕՔ. Բայց այդ ի՞նչպէս բան է. հէնց այն ժամանակ, երբ լողարաններն այդպիսի դրութեան...

Մ.—ԿԻԼ. Եթէ դուք կվարուէք ինչպէս վայել է խելացի մարդուն, լողարանների, գործերը շուտով կրկին կլաւանան։

ԴՕՔ. Դուք ինքներդ տեսնում էք որ ես ձեռքիցս եկածն անում եմ. բայց այս տեղացիք խելագարուել են։

Մ.—ԿԻԼ. Դուք երէկ ասացիք, որ ամենից աւելի կեղտոտութիւնները գալիս են իմ գործարանից: Եթէ այդպէս է, ուրեմն իմ պապս էլ, հայրս էլ, առաջ և ես ինքս էլ, շատ տարիների ընթացքում թունաւորել ենք այս քաղաքը… Եւ դուք կարծում էք թէ ես կդիմանամ այդպիսի մի մեղադրութեան:

ԴՕՔ. Դժբախտաբար, այդ մեղադրութիւնը չէք կարող հեռացնել ձեզանից:

Մ—ԿԻԼ. Ոչ խոնարհաբար շնորհակալ եմ: Ես ցանկանում եմ իմ բարի անունս անբիծ պահել: Ես գիտեմ, ինձ „փորսող“ են անուանում, իսկ փորսողը, ես գիտեմ, խոզի պէս մի բան է: Բայց ես ուզում եմ ապացուցել, որ նրանք սխալվում են: Ես կապրեմ և կմեռնեմ իբրև կարգին մարդ:

ԴՕՔ. Բայց ինչ պէտք է անէք որպէս զի արդարանաք:

Մ—ԿԻԼ. Դուք ինձ կարդարացնէք, Շտօկման:

ԴՕՔ. Ե՞ս:

Մ—ԿԻԼ. Գիտէք, արդեօք, ես ինչ փողերով եմ գնել այս ակցիաները: Ոչ, ի հարկէ, դուք չգիտէք: Բայց ես ձեզ կասեմ: Այն փողերով, որը պէտք է իմ մահից յետոյ ստանան Կատերինան և ձեր որդիքը: Որովհետև, գիտէք, ես էլ դէ մի բան խնայել եմ, ժողովել եմ:

ԴՕՔ. *(Բորբոքուած)*. Եւ դուք այդ ակցիաները գնել էք Կատերինայի փողերո՞վ:

Մ—ԿԻԼ. Այո՛, ամբողջ դրամագլուխն այժմ

ակցիաների է փոխուած: Եւ այժմ տեսնենք՝ դուք բոլորովի՞ն էք խելագարուել, Շտօկման: Եթէ դուք առաջուան պէս կպնդէք որ այն միջատները և զանազան կեղտոտութիւնները հոսում են իմ գործարանից, դուք ինքներդ կկորցնէք ձեր կնօջը և երեխաներին: Ոչ մի կարգին հայր չի անի այդ—եթէ միայն նա խելագար չէ:

ԴՕՔ. *(Վրդովուած ման է գալիս սենեակում)* Այո, բայց ես հէնց այդ քո ասած խելագարներից եմ. այո, խելագար:

Մ—ԿԻԼ. Անհնարին է որ դուք նոյնպէս խելագար լինէք մի գործում, որն այնպէս մօտ շօշափում է ձեր կնօջ ու երեխաների շահերը:

ԴՕՔ. *(Կանգնելով նրա առաջ)*: Ինչո՞ւ համար դուք այդ բոլոր աղբն առնելուց առաջ, ինձ հետ չխօսեցիք:

Մ—ԿԻԼ. Անցածն անցել է արդէն. ուշ է:

ԴՕՔ. *(Վրդովուած ման է գալիս)*: Եթէ միայն ես հաւատացած չլինէի… Բայց ես բոլորովին համոզուած եմ որ չեմ սխալւում…

Մ—ԿԻԼ. *(Վերցնում է պօրտմօնէն)*: Եթէ դուք յամառում էք ձեր գժութեան մէջ, այդ թղթերը ոչինչ չարժեն: *(Պօրտմօնէն գրպանն է դնում)*;

ԴՕՔ. Ա՜հ, գրողը տանի, վերջապէս, չէ՞ որ գիտութիւնը մի որ և է դեղթափ պէտք է գտնի, որ և է նախապաշտպանող միջոց…

Մ—ԿԻՂ. Դուք մտածում էք այդ միջատներին ոչնչացնե՞լ։

ԴՕՔ. Այո, կամ գոնէ նրանց անվնաս դարձնել։

Մ—ԿԻՂ. Արդեօք չէ՞, կարելի որ և իցէ մի թոյն փորձել...

ԴՕՔ. Օ՛, յիմարութիւն է, դատարկ է այդ բոլորը... Բայց եթէ ամենքն ասում են, որ այդ լոկ իմ երևակայութիւնս է, ուրեմն թո՛ղ այդպէս լինի։ Թող նրանց ուզածին պէս լինի։ Բայց այդ տըգէտ, անսիրտ արարածները խալտառակեցին ինձ, ինչպէս ժողովրդի թշնամու, բայց նրանք պատրաստ էին կտոր կտոր անել իմ գլխստս։

Մ—ԿԻՂ. Եւ նրանք ջարդեցին ձեր պատուհանները։

ԴՕՔ. Անկարելի է չմտածել ընտանիքի մասին։ Ես կխօսեմ Կատերինայի հետ. նա շատ առողջ դատողութիւն ունի այդպիսի գործերի մէջ։

Մ—ԿԻՂ. Եւ շատ լաւ կլինի։ Հետևեցէք խելացի կնօջ խորհրդին։

ԴՕՔ. *(Բարկացած)*։ Բայց ի՞նչպէս կարողացաք դուք այդպէս անխիղճեմ վարուել.—վտանգի մէջ ձգել Կատերինայի փողերը և ինձ դնել այսպիսի մի սարսափելի դիլլեմայի մէջ։ Քեզ վրա որ այսպէս նայում եմ, ինձ թւում է թէ առաջս կանգնած է նոյն ինքը փորձիչ սատանան...

Մ—ԿԻՂ. Եթէ այդպէս է—մնաք բարով։ Բայց

ինձ անհրաժեշտ է իմանալ ձեր վճիռը—այո՛ կամ ոչ—այսօր մինչև ժամը երկուսը։ Եթէ կվճռես—„ոչ“, այն ժամանակ բոլոր ակցիաները ես կյատկացնեմ բարեգործական նպատակների և հէնց այսօր։

ԴՕՔ. Բայց այն ժամանակ, էլ ի՞նչ կստանայ Կատերինան։

Մ.—ԿԻՂ. Եւ ո՛չ մի գրօշ. *(Բացվում է նախասենեակի դուռը. մտնում են Հօֆստադ և Ասլաքսէն)*. Ա՜ ա. տպա, նայեցէք այս զոյգին...

ԴՕՔ. *(Նայում է նրանց վրայ զարմացած)*. Ինչպէ՛ս, դրանք համարձակուել են գալ այստեղ...

ՀՕՖՍ. Ի՞նչ կլինի, ինչո՞ւ չգալ։

ԱՍՂ. Գիտէք... մեզ հարկաւոր է ձեզ հետ խօսել։

Մ.—ԿԻՂ. *(Շշնջալով)*. Այո կամ ոչ—ժամը երկուսին։

ԱՍՂ. *(Ակնարկելով Հօֆստադին)*. Ա՜ ա հա։ *(Մօրտէն Կիլը դուրս է գնում)*։

ԴՕՔ. Հ՛ը, ի՞նչ էք կամենում ինձնից, բացատրեցէք երկու խօսքով։

ՀՕՖՍ. Ես հասկանում եմ որ դուք դժգոհ էք երեկուեան ժողովում մեր ունեցած վարմունքով...

ԴՕՔ. Ձեր վարմունքո՞վ, ասում էք։ Այո, դա հիանալի վարմունք էր։ Քաւթառ պառաւի վայել երկչոտութիւն։ Եւ դեռ չէ՞ք էլ ամաչում։

ՀՕՖՍ. Ինչպէս կամենում էք անուանեցէք,

բայց մենք ուրիշ կերպ չէինք կարող վարուել...

ԴՕՔ. Դուք չէիք համարձակուի, իհարկէ։ Այնպէս չէ՞։

ՀՕՖՍ. Այո, եթէ կամենում էք։

ԱՍԼ. Բայց ինչո՞ւ դուք սկզբից մեզ չբացիք ձեր գաղտնիքը։ Գոնէ խօսքով ակնարկէիք Հօֆստադին կամ ինձ։

ԴՕՔ. Ակնարկէ՞. բայց ինչի՞ մասին։

ԱՍԼ. Գործի էութեան մասին։

ԴՕՔ. Ես ձեզ բոլորովին չեմ հասկանում։

ԱՍԼ. (*Խորամանկ ձեւով աչքով անելով*։ Օ՜, դուք մեզ շատ լաւ էք հասկանում, դօքտօր Շտօկման։

ՀՕՖՍ. Եւ ինչ հարկ կայ այդ բանը գաղտնի պահել։

ԴՕՔ. (*Նայում է փոփոխակի նրանց վրայ*). Բայց ի՞նչ է նշանակում այդ բոլորը, գրողը տանի...

ԱՍԼ. Թոյլ տուէք հարցնել ձեզ.—ձեր աները չէ՞ գնում քաղաքի լողարանների բոլոր ակցիաները։

ԴՕՔ. Այո նա այսօր գնել է լողարանների ակցիաները. բայց...

ԱՍԼ. Աւելի զգուշութիւն կլինի այդ բանը մի ուրիշի ձեռով անել, այնպիսի մարդու ձեռով, որը ձեզ այդքան մօտ ազգական չլինէր։

ՀՕՖՍ. Եւ բացի դրանից ձեզ հարկ չկար գործի մէջ մտնել ձեր իսկական անունով։ Ոչ ոք չպէտք է իմանար, որ ծովային լողարանների վրայ յարձա-

կումը ձեզանից է դուրս գալիս։ Դուք պէտք է խորհրդակցէիք ինձ հետ, դօքտօր Շտօկման։

ԴՕՔ. (*Զարմացած նայում է ուղղակի իր առաջը, կարծես թէ լոյսը բացում է նրա միտքը եւ նա նայում է ինչպէս կայծակնահար*). Միթէ հնարաւո՞ր է այս։

ԱՍԼ. (*Ժպտալով*). Այո՛, ի հարկէ, հնարաւոր է։ Միայն այդպիսի գործերը պէտք է զգուշութեամբ սարքել, հասկանո՞ւմ էք։

ՀՕՖՍ. Եւ պէտք է ուրիշների գործակցութեան դիմել, որովհետեւ միշտ հեշտ է լինում տանել պատասխանատուութիւնն այն ժամանակ, երբ նա մի քանի մարդկանց վրայ է ընկնում։

ԴՕՔ. (*Հանգիստ*). Երկու խօսքով ասացէք, պարոններ,—ի՞նչ էք կամենում։

ԱՍԼ. Հօֆստադն աւելի լաւ կարող է...

ՀՕՖՍ. Ո՛չ, դո՛ւք բացատրեցէք, Ասլաքսէն։

ԱՍԼԱՔ. Ահա, բանն ինչումն է. այժմ երբ մենք արդէն գիտենք այդ գործի տակն ու գլուխը, մենք ենթադրում ենք, որ կարող ենք ռիսկ անել, առաջարկել ձեզ օգտուելու «Ժողովրդական Համբաւաբերի» սիւնակներով։

ԴՕՔ. Դուք կարող էք ռիսկ անե՞լ։ Այո՞, Բայց հասարակական կարծի՞քը։ Միթէ դուք չէք վախենում այն փոթորկից, որը կարող ծագել...

ՀՕՖՍ. Այսպէս թէ այնպէս, մենք կդիմանանք փոթորկին։

ԱՍԼ. Իսկ դուք պէտք է ամուր կենաք, չյուսահատուէք։ Հէնց որ յարձակումն իր ազդեցութիւնն անէ...

ԴՕՔ. Այսինքն. դուք ուզում էք ասել—հէնց որ աներս և ես բոլոր ակցիաները կառնենք չնչին գնով...

ՀՕՓՍ. Ի հարկէ. չէ՞ որ դուք գլխաւորապէս գիտնական հիմունքների վրայ ուզում էի ձեր ձեռը ձգել ծովային լողարանների կառավարութիւնը։

ԴՕՔ. Ի հարկէ. հէնց այդ գիտնական հիմունքներով էլ ես մեր պառաւ փորսողին նստեցրել եմ գործի գլխին։ Յետոյ մենք խողովակները մի քիչ կուղղենք. ծովափը մի կերպ, թէթև կարգի կբերենք և անպատճառ այնպէս, որ այդ բանը քաղաքի վրայ մի գրոշ անգամ չնստէ կարծեմ այսքանը բաւական կլինի, այնպէս չէ՞։

ՀՕՓՍ. Ես ենթադրում եմ որ այդպէս կլինի, եթէ միայն „Ժողովրդական Համբաւաբերը› ձեզ պաշտպանի։

ԴՕՔ. Իսկ դուք, պարոն Ասլաքսէն. երևի տանտէրերի ընկերութեան կողմից երաշխաւո՞ր էք։

ԱՍԼ. Այո, „տանտէրերի ընկերութեան“ և „Ողջախոհութեան ընկերութեան“ կողմից։ Դուք կարող էք կատարելապէս յուսալ նրանց վրայ։

ԴՕՔ. Բայց ներեցէք, պարոններ... ճշմարիտ ես շատ խղճահարւում եմ այսպիսի մի առարկայի մասին

խօսք ձգել... բայց... Ի՞նչ վարձատրութիւն կկամենայիք...

ՀՕՓՍ. Ի հարկէ, մենք աւելի լաւ կհամարէինք ձեզ պաշտպանութիւն ցոյց տալ, առանց որ է և վարձատրութեան. բայց ‹Ժողովրդական Համբաւաբերը› շատ էլ հաստատ հիմունքների վրայ չէ. նա այնպէս առաջ չէ ընթանում, ինչպէս ցանկալի է. իսկ ինձ համար շատ ցաւալի կլինէր հրատարակութիւնը դադարեցնել և այն էլ այժմ, երբ այնքան շատ գործ կարելի է կատարել քաղաքական աշխարհում։

Ի հարկէ այդ շատ ցաւալի կլինէր ձեզ պէս ժողովրդի բարեկամների համար։ *(Բարկացած)*։ Բայց ես—ես ժողովրդի թշնամին եմ *(Ման գալով սենեակում)*։ Ու՞ր է իմ փայտս. ո՞րտեղ է ո՞րտեղ, գրողը տանի։

ՀՕՓՍ. Ի՞նչ էք անում...

ԱՍԼ. Յոյս ունիմ որ չէք ուզում...

ԴՕՔ. *(Նրա առաջ կանգնելով)*։ Ապա ի՞նչ կանէք, որ ես իմ ակցիաներից ձեզ մի հատ գրոշ անգամ չտամ։ Մի մոռանաք որ մենք, հարուստներս չենք սիրում մեր փողերից բաժանուել։

ՀՕՓՍ. Իսկ դուք և ս մի մոռանաք, որ ակցիաների գործը կարելի է բացատրել երկու տեսակ...

ԴՕՔ. Այո, դուք ընդունակ էք այդ բանին, եթէ „ժողովրդական համբաւաբերին“ օգնութեան չհասնեմ, դուք գործին զազրելի կերպարանք կտաք.

դուք կսկսէք իմ ետևից ընկնել, հալածել ինձ, ինչպէս շունը հալածում է նապաստակին։

ՀՕՓՍ. Դա բնութեան օրէնքն է. իւրաքանչիւր կենդանի պէտք է իր գոյութեան համար մրցի։

ԱՍԼ. Եւ որտեղ կերակուր կգտնի, վերցնի։

ԴՕՔ. Ուրեմն, գնացէք փնտռելու այդ կերակուրը փողոցային մաքրիչ կեղտանցքների մէջ (*Մտնում է գալիս*) որովհետև այժմ, երդվում եմ այն ամենով ինչ որ սուրբ է, մենք կտեսնենք թէ ով է մեր երեքից ամենաուժեղ գազանը։ (*Գտնում է իր անձրևանոցը և նրանց վրայ թափ տալով սպառնում*)։ Ա՛յ, ես ձեզ...

ՀՕՓՍ. Այս ինչ է—յարձակումն։

ԱՍԼ. Զգոյշ կացէք։

ԴՕՔ. Դո՛ւրս, այս բոլէրին, պատուհանով, դո՛ւրս, Հօֆստադ։

ՀՕՓՍ. (*Վազելով դէպի նախասենեակի դուռը*)։ Վա՜հ, գժուել էք բոլորովին։

ԴՕՔ. Դո՛ւրս, պատուհանով, պարոն Ասլաքսէն։ Ցատկեցէք, ասում եմ ձեզ. դէ՜, շո՛ւտ։

ԱՍԼ. (*Վազելով գրասեղանի շուրջը*)։ Հանգստացէք, դօքտօր. ես թոյլ մարդ եմ։ Ես չեմ կարող շատ դիմանալ. (*Գոռում է*) Օգնեցէ՜ք, օգնեցէ՜ք։ (*Տիկին Շտօկման, Պետրան և Գօրստէր դուրս են գալիս հիւրասենեակից*)։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Տէր Աստուած, Թոմաս, ինչ է պատահել։

ԴՕՔ. (*անձրևանոցը շարժելով*)։ Դո՛ւրս ցատկեցէք, ասում եմ ձեզ։ Դո՛ւրս։

ՀՕՓՍ. Մենք բոլորովին առիթ չենք տուել այդպիսի մի յարձակումն գործելու։ Ձեզ վկայ եմ հրաւիրում, նաւապետ Գօրստէր։ (*Փախչում է նախասենեակը*)։

ԱՍԼ. (*Երկիւղից խելքը կորցրած*)։ Ախ, գոնէ այստեղի ելքն ու մուտքը ճանաչէի։ (*փախչում է մտնում հիւրասենեակը*)։

ՏԻԿ. ՇՏՕԿ. (*Զսպելով դօքտօրին*) Խելքդ գլուխդ հաւաքիր, Թոմաս։

ԴՕՔ. (*Անձրևանոցը դէն ձգելով*) Վերջապէս ռադ եղան։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Բայց ինչ են ուզում քեզանից։

ԴՕՔ. Յետոյ կասեմ, իսկ այժմ ուրիշ բանի վրայ պէտք է մտածել. (*Գնում է սեղանի մօտ և այցետոմսի վրա գրում*). Նայիր, Կատերինա, ինչ է գրուած այստեղ։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Երեք հատ—„ոչ“ ահագին տառերով։ Այդ ինչ է նշանակում։

ԴՕՔ. Այդ էլ յետոյ կասեմ քեզ. (*այցետոմսը մեկնելով*) Ահա, Պետրա, ասա աղախնուն որ, այս այցետոմսը վազէ վազ տանի Փորստղի մօտ, որքան կարելի է շուտով։ Դէ, շուտ։ (*Պետրան վերցնում է այցետոմսը և դուրս է գալիս նախասենեակով*)։

ԴՕՔ. Է՛. կարծեմ այսօր ինձ մօտ սատանան

որ ընկերները եղան. այժմ ես իմ գրիչս նրանց դէմը այնքան կսրեմ որ նա եղջիւր դառնայ. ես կթաթխեմ այդ գրիչը մաղձի ու թոյնի մէջ, իսկ թանաքամանն ուղղակի կշպրտեմ նրանց գլխին:

ՏԻԿ. ՇՏՕԿ. Այո, բայց չէ՞ որ մենք գնում ենք այստեղից, Թոմաս: *(Պէտրան յետ է գալիս)*

ԴՕՔ. Հը..,

ՊԷՏՐԱ. Ուղարկեցի:

ԴՕՔ. Լաւ, ասում ես մենք գնում ենք. ոչ, անիծեալ լինի գնացողը. մենք մնում ենք մեր տեղը, Կատերինա:

ՊԷՏՐԱ. Ի՞նչպէս, մնում ենք:

ՏԻԿ. ՇՏՕԿ. Այստե՞ղ.. այս քաղաքո՞ւմ..

ԴՕՔ. Այո, այստեղ. այստեղ է պատերազմի դաշտը, այստեղ մենք կպատերազմենք. ես այստեղ յաղթանակը կտանեմ. Հէնց որ իմ զգեստս կարգի բերուի, իսկոյն ես կգամ քաղաք, բնակարան փնտրելու. պէտք է վերջապէս ձմեռուան համար ապաստանարան ունենալ:

ԳՕՐ. Այդ ապաստարանը դուք կարող էք ունենալ իմ տանս:

ԴՕՔ. Ճի՞շտ:

ԳՕՐ. Այո, ի հարկէ. ես տեղ շատ ունեմ ու բացի դրանից ես ինքս շատ քիչ եմ տանը գտնւում:

ՏԻԿ. ՇՏՕԿ. Ի՞նչպէս բարի էք, Գօրստէր:

ՊԷՏՐԱ. Շնորհակալութիւն.

ԴՕՔ. *(Ձեռը սեղմելով)* Շնորհակալ եմ,

շնորհակալ եմ: Մի հոգս պակասեց: Եւ հէնց այսօր գործի կսկսեմ: Օ՜, այստեղ սարսափելի շատ գործ կայ, Կատերինա: Լաւ է որ իմ բոլոր ժամանակս իմ կարգադրութեան տակ է, որովհետև, գիտես, ես պաշտօնից արձակուած եմ...

ՏԻԿ. ՇՏՕԿ. *(Հառաչելով)*: Այո, ես այդ սպասում էի...

ԴՕՔ. Իսկ այժմ ուզում են մասնաւոր հիւանդներիս էլ խլել ձեռիցս: Թող ինչ ուզում են անեն: Աղքատներն էլի ինձ մօտ կգան, այսինքն նրանք, որոնք չեն կարող վճարել: Իսկ նրանց ամենից շատ է հարկաւոր իմ օգնութիւնը: Բայց երդւում եմ, նրանք դեռ իմ մասին շատ բան կը լսեն. ես գիշեր և ցերեկ ամեն մի ժամ նրանց քարոզներ պէտք է կարդամ...

ՏԻԿ ՇՏՕԿ. Հօգիս, կարծեմ դու արդէն տեսար թէ ինչ հետևանքներ են ունենում քո քարոզներդ:

ԴՕՔ. Զարմանալի ես, Կատերինա, ճշմարիտ: Ի՞նչ ես ուզում: Պատերազմի դաշտը ես զիջանեմ հասարակական կարծիքին, համագումար մեծամասնութեանը և բոլոր այդ շների՞ն: Ոչ, խնդրեմ ներես, շնորհակալ եմ: Բացի դրանից իմ նպատակս այնպէս ուղիղ է, այնպէս հասարակ է և պարզ: Ես ուզում եմ միայն ներշնչել այդ անասուններին, որ լիբերալ անուանուած ազատամիտները ազատ մարդկանց ամենավտանգաւոր թշնամիներն են, որ կու-

սակցական նախագծերը սպանում են բոլոր մատաղ կենսական ճշմարտութիւնները, որ նպատակայարմար վարուելու հաշիւները տակն ու վրայ են անում ճշմարտութիւնը և բարոյականութիւնը, մինչ այն աստիճան, որ կեանքը զզուելի է դառնում։ Ի՞նչպէս էք ենթադրում նաւապետ Գօրստէր, միթէ ինձ երբէք չի յաջողուի այդ բանը բացատրել հասարակութեան։

ԳՕՐՍ. Գուցէ և յաջողուի. ես այդ տեսակ բաներից ոչինչ չեմ հասկանում։

ԴՕՔ. Ուրեմն լսեցէք ինձ։ Ամենից առաջ պէտք է ազատուել կուսակցութիւնների առաջնորդներից։ Որովհետև, գիտէք, կուսակցութեան առաջնորդը նոյնն է, ինչ որ գայլը, քաղցած գայլը, որը իւր գոյութիւնը պահպանելու համար, անհրաժեշտ է, որ նա իւրաքանչիւր օր մի յայտնի թուով մանր կենդանիներ կուլ տայ։ Նայեցէք Հօֆստադին և Ասլաքսէնին, ինչ ահագին քանակութեամբ ընտանի կենդանիներ նրանք տաշում են իրենց ուզածի պէս կամ թէ անդամահատում են նրանց, այլանդակում են մինչև այն աստիճան, որ նրանք պէտք են գալիս կամ "Տանտէրեր" կամ „Ժողովրդական համբաւաբերի" բաժանորդներ լինելու։ *(Նստում է սեղանի ծայրին)*։ Մօտեցիր այստեղ, Կատերինա, տես այսօր ի՛նչ փառաւոր լուսաւորում է արևը և ինչ հրաշալի, թարմ, գարնանային օդ է հոսում սենեակի ներսը։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Այո, Թոմաս, եթէ մենք կարողանայինք ապրել միայն արեգակի լոյսով և գարնանային օդով։

ԴՕՔ. Է՛հ, ինչ արած, պէտք է մի քիչ քեզ ճնշես և տակից գլխից մի քիչ կտրես, խնայես ու ամեն բան կարգին կընկնի։ Այդ մասին ես ինքս կհոգամ։ Բայց ինձ մի բան է անհանգստացնում— ես մի արժանաւոր, անկախ և ազնիւ մարդ չեմ տեսնում, որ ինձնից յետոյ գործն իր ձեռքն առնի։

ՓԷՏՐԱ. Օ՜, մի հոգալ այդ մասին, հայրիկ, դու դեռ շատ ժամանակ ունիս առաջիդ։ Ահա երեխայքն էլ արդէն վերադարձել են։

(Էյլիֆ եւ Մօրտէն մտնում են հիւրասենեակից)։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Միթէ ձեզ համար տօն է այսօր։

ՄՕՐՏԷՆ. Ոչ, մենք դասամիջոցին միւս աշակերտների հետ կռուեցինք։

ԷՅԼԻՖ. Ճշմարիտ չէ ասում. նրանք իրենք յարձակուեցին մեզ վրայ։

ՄՕՐՏԷՆ. Այո, պարոն ուսուցիչն էլ ասաց որ աւելի լաւ կլինի, եթէ մենք մի քանի օր տանը մնանք։

ԴՕՔ. *(Ցատկելով աթոռից)*. Այժմ ես գիտեմ թէ ինչ պէտք է անել. ճշմարիտ, գիտեմ։ Այսուհետև երբէք դուք ոտ չէք դնիլ ուսումնարանում։

ԵՐԵԽԱՅՔ. Ի՞նչպէս, մենք այլ ևս ուսումնարան չե՛նք գնալ։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Բայց այդ ի՛նչպէս... Թոմաս...

ԴՕԿ. Երբէք, ասում եմ։ Ես ինքս պէտք է ձեզ սովորեցնեմ։ Այսինքն, ի հարկէ, ես ձեզ ամեն մի յիմար բան չեմ սովորեցնի։

ՄՈՐՏԷՆ. Կեցցէ...

ԴՕԿ. Բայց ես կաշխատեմ ձեզնից պատրաստել ազատ ազնիւ մտածմունքներով մարդիկ։ Լսիր, Պէտրա, դու պէտք է ինձ օգնես։

ՊԷՏՐԱ. Այո, հայրիկ, ի հարկէ ես քեզ կօգնեմ։

ԴՕԿ. Եւ մենք ուսումնարան կշինենք նոյն իսկ այն սենեակը, ուր նրանք ինձ խայտառակեցին, երբ և ժողովրդի թշնամու։ Բայց պէտք է էլի մի քանի աշակերտներ ճարել։ Գործի սկզբնաւորութեան համար ինձ հարկաւոր են գոնէ 12 աշակերտներ։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Դու այս քաղաքում երբէք աշակերտներ չես գտնի։

ԴՕԿ. Տեսնենք. *(Դառնալով երեխաներին)*. Դուք մի քանի փողոցային երեխաներ չէ՞ք ճանաչում. . իսկական հասարակ, գձլտուած երեխաներ...

ՄՈՐՏԷՆ. Այո, հայրիկ ես շատերին եմ ճանաչում։

ԴՕԿ. Հիանալի. Նրանցից մի քանիսին ինձ մօտ բեր։ Ես ուզում եմ իմ փորձերս փողոցային գամփռներից սկսել. Նրանց մէջ երբեմն շատ ընդունակներն են պատահում։

ՄՈՐՏԷՆ. Բայց մենք ի՞նչ պէտք է անենք. երբ մեծանանք ազատ մարդիկ դառնանք։

ԴՕԿ. Դուք գայլերին կքշէք դէպի հեռու հարաւ; գաւակներս։ *(Էյլիֆ նայում է ըմթացած. Մօրտէնը ցատկոտում է սենեակում եւ կանչում „կեցցէ“)։*

ՏԻԿ. ՇՏՕԿ. Եթէ միայն գայլերն իրենք քեզ չքշեն, Թոմաս։

ԴՕԿ. Գժուել ես, ի՞նչ է Կատերինա։ Ինձ քշե՞լ։ Ի՞նձ.—երբ այժմ ես ամենազօրեղ մարդն եմ քաղաքի մէջ։

ՏԻԿ. ՇՏՕԿ. *(Կիսաձայն)*· Ամենազօրե՞ղ. այն էլ այժմ։

ԴՕԿ. Այո, ես կարող եմ ասել որ ես այժմ երկրագնդիս վրայի ամենազօրեղ մարդկանցից մէկըն եմ։

ՄՈՐՏԷՆ. Ճի՞շտ ես ասում, հայրիկ։

ԴՕԿ. (Կիսաձայն). Մ՜մ՜... Դեռ ևս այդ մասին ոչ ոքի չասէք. բայց ես մի մեծ գիւտ եմ արել։

ՏԻԿ. ՇՏՕԿ. Ի՞նչպէս. էլի՞ ուրիշ նոր գիւտ։

ԴՕԿ. Անտարակոյս։ *(Ամենքին հաւաքում է իր շուրջը եւ ասում է ծածկաբար)*. Գիտէք, ի՞նչ է իմ գիւտս.—ամենազօրեղ մարդն աշխարհիս երեսին նա է, որ մնում է—մ ի ա յ ն ա կ։

ՏԻԿ. ՇՏՕԿ. *(Գլուխը շարժում է ժպտալով)*. Ախ, Թոմաս...

ՊԷՏՐԱ. *(Համակրանքով բռնում է հօր ձեռքը)*. Այո, այո, հայրիկ։

ՎԵՐՋ

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ
Հ. Հ.
ԳՐԱԴԱՐԱՆ